ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

32(47.925)
Պ-50
6978

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 327(0742.4)
ԳՄԴ 66.4g7
Պ 505

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Մասնագիտական խմբագիր՝
Պ.գ.թ., դոցենտ Տիգրան Եփրեմյան
Գրախոսներ՝
Ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գալստյան
Պ.գ.թ., դոցենտ Ռոման Կարապետյան

Պետրոսյան Գոռ
Պ 505 Պատժամիջոցները ժամանակակից միջազգային հարաբերություններում / Գ. Պետրոսյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2025, 152 էջ:

«Պատժամիջոցները ժամանակակից միջազգային հարաբերություններում» ուսումնամեթոդական ձեռնարկը մշակվել է միջազգային հարաբերություններ և քաղաքագիտություն մասնագիտությունների բակալավրի ավագ կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների համար:

Ձեռնարկում ներառված նյութերը հասցեագրված են քաղաքագետներին, միջազգայնագետներին և հարցի քննությամբ հետաքրքրված այլ մասնագետներին ու գիտական հանրությանը:

ՀՏԴ 327(0042.47)
ԳՄԴ 66.4g7

ISBN 978-5-8084-2731-0
https://doi.org/10.46991/YSUPH/9785808427310

© ԵՊՀ հրատ., 2025
© Պետրոսյան Գ., 2025

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ԱՌԱՋԱԲԱՆ 9
ՄԱՍ 1. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ 11
Թեմա 1. Պատժամիջոցները՝ որպես քաղաքագիտական հետազոտությունների առարկա 11
Թեմա 2. «Պատժամիջոց» հասկացության քաղաքագիտական տեսահայեցակարգերը 15
Թեմա 3. Պատժամիջոցները միջազգային հարաբերությունների պատմությունում 33
Թեմա 4. Պատժամիջոցները որպես միջազգային հարաբերությունների լեգիտիմ գործիք 42
Թեմա 5. Ժամանակակից միջպետական հարաբերություններում պատժամիջոցների կիրառման նպատակները 52
Թեմա 6. Պատժամիջոցների կիրառման մեխանիզմները 62
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ 70
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 70
Թեմա 7. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցները հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում 72
Թեմա 8. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների նպատակները 80
Թեմա 9. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների տնտեսական փոփոխականները 91

Թեմա 10. Ռուսաստանի Դաշնության հակաքաղաքականությունը 105
Թեմա 11. Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցային «պատերազմի» քաղաքական փոփոխականները 112
Թեմա 12. Ռուսատանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցային «պատերազմի» հետևանքները 128
Թեմա 13. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ազդեցությունը Հայաստանի վրա 138
SUMMARY 149
РЕЗЮМЕ 150

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Պատժամիջոցները ժամանակակից միջազգային հարաբերություններում» ուսումնամեթոդական ձեռնարկը նախատեսված է քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ բակալավրի ավագ կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների համար: Ուսումնամեթոդական ձեռնարկը բաղկացած է երկու հիմնական մոդուլներից: Ձեռնարկում ներառված մոդուլները և նրանցում առկա թեմաներն առանձին ևս կարող են գործածվել քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ մասնագիտացումներով գործող կրթական ծրագրերի առանձին դասընթացներում:

Առաջին՝ «Պատժամիջոցների հայեցակարգային հիմքերը», մոդուլը բաղկացած է վեց թեմաներից: Մոդուլում ներառված դասախոսությունները ուսանողներին հնարավորություն են ընձեռում հիմնարար գիտելիքներ ձեռք բերել պատժամիջոցների հայեցակարգային մոտեցումների մասին, միջազգային հարաբերությունների ուժային հավասարակշռության փոփոխության գործում պատժամիջոցների դերի, պատժամիջոցների կիրառման նպատակների և կիրառման մեխանիզմների մասին:

Ուսումնական ձեռնարկի երկրորդ՝ «Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցները գլոբալ քաղաքական գործընթացների համատեքստում», մոդուլի ընթերցանության նյութերի շրջանակներում ուսանողները համապարփակ գիտելիքներ կստանան Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պատմական, տնտեսական և քաղաքական ասպեկտների վերաբերյալ: Այն հնարավորություն է ընձեռում ուսանողին զարգացնել քննադատողական մտածողությունը, համակողմանիորեն և քաղաքական տրամաբանության

շրջանակներում դիտարկել գլոբալ քաղաքական գործընթացներն ու դրանց ազդեցությունը: Երկրորդ մոդուլի վերջին դասախոսությունը նվիրված է Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ազդեցությանը Հայաստանի վրա: Այս դասախոսությունը կարևոր է ինչպես գործնական, այնպես էլ տեսական առումով, քանի որ արտացոլում է պատժամիջոցների հնարավոր ազդեցությունը երրորդ երկրների վրա:

Առաջին մոդուլը բաղկացած է վեց, իսկ երկրորդը՝ յոթ թեմայից: Դասախոսությունների նյութերին հաջորդում են գործնական առաջադրանքները, որոնց նպատակն է զարգացնել ուսանողների քննադատողական մտածելակերպը և գործնական պատկերացում տալ ընթերցվող նյութի վերաբերյալ, իսկ դասավանդողին՝ գնահատել ուսանողի ձեռք բերած գիտելիքներն ու թեմային տիրապետելու աստիճանը: Առաջին և երկրորդ դասախոսություններին կից ներկայացված են նաև ինքնուրույն հետազոտության թեմաներ, որոնք ուսանողին հնարավորություն են տալիս խորքային հետազոտության միջոցով առավել մանրամասն տիրապետել միջազգային հարաբերությունների և դրանցում կիրառվող պատժամիջոցների հայեցակարգին: Յուրաքանչյուր թեմային հաջորդում է թեմատիկ գրականության հավելյալ գրականության ցանկ, որի ընթերցումը պարտադիր է թեմային լիարժեք տիրապետելու համար:

Դասընթացի նպատակն է՝

- Տրամադրել համապարփակ և տեսականորեն հիմնավորված պատկերացում միջազգային հարաբերություններում պատժամիջոցների կիրառման բնույթի, նպատակի, արդյունավետության և ազդեցության վերաբերյալ:

- Ուսանողներին ծանոթացնել պատժամիջոցների քաղաքական և տեսական շրջանակներին, կիրառման մեխանիզմներին ու պատմական զարգացումներին,
- Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների օրինակով ուսանողներին ծանոթացնել պատժամիջոցների կիրառման փոփոխականներին և պատժամիջոցներին դիմակայելու հակամիջոցներին:
- Ներկայացնել պատժամիջոցների ազդեցությունը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական վերափոխումների վրա:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. Նկարագրել միջազգային հարաբերություններում պատժամիջոցների տեսական հիմքերն ու կիրառման հիմնական մոտեցումները:
2. Բացատրել պատժամիջոցների դերը միջազգային համակարգում՝ համադրելով պատմական օրինակներ և քաղաքական գործիքակազմ:
3. Վերլուծել տարբեր պետությունների, հատկապես՝ Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների նպատակները, մեխանիզմներն ու հետևանքները:
4. Գնահատել պատժամիջոցների արդյունավետությունը ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում:
5. Համադրել և կիրառել տեսական գիտելիքները կոնկրետ դեպքերի վերլուծության մեջ՝ բացահայտելով պատժամիջոցների ազդեցությունն արտաքին և ներքին քաղաքականության վրա:

6. Քննադատաբար վերլուծել պատժամիջոցների քաղաքական ու տնտեսական հիմնավորումները՝ հաշվի առնելով դերակատարների շահերը, ուժային բալանսը և իրավաքաղաքական միջավայրը:
7. Նախաձեռնել և ձևակերպել ինքնուրույն հետազոտական հարցադրումներ ու վերլուծական պնդումներ՝ հիմնված պատժամիջոցների կիրառման ժամանակակից պրակտիկայի և օրինակների վրա:

ԱՌԱՋԱԲԱՆ

Վերջին տասնամյակների ընթացքում պատժամիջոցները դարձել են միջազգային հարաբերությունների սուբյեկտների կողմից տարածաշրջանային և համաշխարհային քաղաքականությունում կիրառվող ամենատարածված գործիքներից: Միջուկային և մասսայական ոչնչացման զենքերի առկայության պայմաններում գերտերությունների միջև զինված հակամարտությունը կարող է կործանարար հետևանքներ ունենալ դրանում ներգրավված բոլոր կողմերի համար: Ոչ կոնվենցիոնալ զինատեսակների զարգացումն ու լայն տարածումն ու պետությունների անդամակցումը տարբեր ռազմաքաղաքական դաշինքներին սահմանափակում են քաղաքական նպատակներին հասնելու համար ռազմական ուժի կիրառման հնարավորությունները կամ դարձնում դրանք անտրամաբանական:

Միաժամանակ, սառը պատերազմի ավարտից հետո պետությունների միջև առևտրատնտեսական կապերի ընդլայնումն ու խորացումը հանգեցնում են պետությունների միջև փոխկապակցվածության ամրապնդմանը՝ ընդլայնելով պատժամիջոցների միջոցով քաղաքական ճնշում բանեցնելու հնարավորությունները: Հետսառըպատերազմյան աշխարհակարգում ԱՄՆ-ի համաշխարհային տնտեսական գերիշխանության և «սև ասպետի» բացակայության հանգամանքով պայմանավորված՝ պատժամիջոցների կիրառումը դարձել է գլոբալ քաղաքականության կարևորագույն գործիքներից մեկը: Ասվածի ապացույցն է այն, որ 1990 թվականից մինչև 2000 թվականն ընկած ժամանակահատվածում պատժամիջոցներ կիրառվել են 67 անգամ, նույնքան պատժամիջոցներ են կիրառվել 1915-1975 թվականների ընթացքում[1]:

---

[1] Տե՛ս Gary C. Hufbauer, Jeffrey Schott, Kimberly Ann Elliott, Barbara Oegg, "Economic Sanctions Reconsidered", Third Edition, Peterson Institute for International Economics, USA, 2007, էջ 18:

2022 թվականին Ռուսաստանի Դաշնության նկատմամբ Արևմուտքի կիրառած պատժամիջոցներն աննախադեպ էին իրենց քանակով, խորությամբ և համաշխարհային քաղաքական գործընթացների վրա ազդեցությամբ: Նշյալ պատժամիջոցների հետազոտությունն ունի առանցքային գործնական և տեսական նշանակություն: Գործնական նպատակներով կարևոր է հետազոտել և բացատրել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով առաջացող կամ արագացող, գլոբալ քաղաքական գործընթացների էությունը և նորովի վերաձևվող աշխարհակարգի ուժային հավասարակշռության միտումները:

Վերոնշյալ պատժամիջոցների հետազոտությունն ունի նաև կարևոր տեսական նշանակություն, քանի որ աննախադեպ էին ոչ միայն կիրառվող պատժամիջոցները, այլև դրանց դիմադրող պետության տնտեսության ծավալը և պատժամիջոցներին դիմագրավելու ռեսուրսները:

Թեման ունի կարևոր քաղաքական նշանակություն Հայաստանի համար: Հայաստանն ու Ռուսաստանը միավորված են ռազմաքաղաքական դաշինքով և սերտ առևտրատնտեսական կապերով, Ռուսաստանը Հայաստանի առևտրային խոշորագույն գործընկերն է, նաև առանցքային է նրա դերակատարությունն անվտանգային ճարտարապետությունում: Ռուսական ռազմաբազայի զինծառայողները հսկում են հայ-թուրքական և հայ-իրանական սահմանը: Հետևապես, Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ուղղակի և անուղղակի տնտեսական ու քաղաքական ազդեցությունն ունեն Հայաստանի և Ռուսաստանի կողմից Հարավային Կովկասի տարածաշրջանում վարվող քաղաքականության վրա:

ՄԱՍ 1. ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Թեմա 1. Պատժամիջոցները որպես քաղաքագիտական հետազոտությունների առարկա

Պատժամիջոցները՝ որպես միջազգային քաղաքականության գործիք, հանրաճանաչություն ձեռք բերեցին հատկապես 1945 թվականից՝ միջուկային աշխարհակարգի ձևավորումից հետո: Զանգվածային ոչնչացման զենքի ի հայտ գալուց հետո ռազմական ուժի կիրառումը դարձավ ոչ ցանկալի գործիք երկբևեռ աշխարհակարգի դերակատարների համար, քանի որ բախումը կարող էր հանգեցնել փոխադարձ ոչնչացման: Գերտերությունները սկսեցին ուժի օգտագործումն ընկալել որպես վերջին միջոց, քանի որ վերջինս գոյաբանական վտանգ էր առաջացնում բոլոր կողմերի համար: Հետևապես, հարաբերությունների սրման պարագայում առավել գերադասելի էր դառնում պատժամիջոցների կիրառումը: Ժամանակակից ռազմական տեխնոլոգիաների և զանգվածային ոչնչացման զենքերի զարգացումը ևս գոյաբանական վտանգ են առաջացնում պետությունների համար, ուստի միջպետական հարաբերություններում գերադասելի է դառնում հարկադրանքի այլ մեթոդների, այդ թվում՝ պատժամիջոցների կիրառումը: Պատժամիջոցները պետություններին թույլ են տալիս հզոր նախազգուշական ազդակներ հղել նաև հակառակորդ երկրներին:

Վերջին տարիների ընթացքում պատժամիջոցները հանրային ընկալումներում ձեռք են բերում հանրաճանաչության նոր մակարդակ: Վերջինս արտահայտում է հավատն առ այն, որ դիվանագիտության ձախողման պարագայում պատժամիջոցները

համեմատաբար էժան այլընտրանք են պատերազմին, քանի որ ռազմական ուժի կիրառումը հանգեցնում է ինչպես ֆինանսական ու տնտեսական, այնպես էլ մարդկային հսկայական կորուստների, այնինչ պատժամիջոցների կիրառումը ազատում է զգալի ծախսերից, ինչպես նաև մարտական գործողությունների ընթացքում նախաձեռնող կողմի քաղաքացիների կյանքը կորցնելու վտանգից: Այսպիսով, պատժամիջոցներն ընկալվում են որպես Սուն Ցզիի «լավագույն հաղթանակը առանց մարտի տարած հաղթանակն է»[2] հայեցակարգի իրագործման լավագույն գործիք:

Պատժամիջոցների կիրառումն առավել ակտիվացել է հատկապես հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում՝ պայմանավորված ԱՄՆ-ի համաշխարհային տնտեսական գերակայությամբ և «սև ասպետի» բացակայությամբ: Այսպիսով, վերջին տասնամյակների ընթացքում պատժամիջոցները միջազգային հարաբերություններում դարձել են լայնորեն կիրառվող գործիք: Քաղաքական կիրառման ընդլայնմանը զուգընթաց անհրաժեշտություն է առաջացել նաև մշակելու և կատարելագործելու պատժամիջոցների նոր մեխանիզմներ: Բազմապատկվել են նաև պատժամիջոցների հետազոտությանը միտված գիտական աշխատությունները:

Ինչպես ցանկացած տեսության, այնպես էլ քաղաքագիտական տեսության առաջնային խնդիրներից է անորոշ հասկացությունների և հետազոտվող առարկայի հստակության սահմանումը: Ուստի, հաջորդ թեմայի շրջանակներում կհստակեցնենք «պատժամիջոց» հասկացության քաղաքագիտական հայեցակարգը, կտանք պատժամիջոցների քաղաքագիտական սահմանումը, կտարանջատենք պատժամիջոցների կիրառման և հետազոտությունների ինստիտուցիոնալացման հիմնական փուլերը: Այնուհետև կվերհանենք պատժամիջոցների կիրառման հիմքերն ու քաղաքական նպատակները, մեխանիզմներն ու ներուժի սահմանափակումները:

[2] Տե՛ս Сунь-Цзы «Искусство войны», Издательская группа «АСТ», Россия, 2021, с. 5:

Գործնական հարցադրումներ

1. Ինչպիսի՞ գործոններ են պայմանավորում պատժամիջոցների գերադասումը պատերազմից:

2. Ի՞նչ գործոններ են նպաստել պատժամիջոցների կիրառման տարածմանը հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում:

3. Ինչո՞վ է պայմանավորված «պատժամիջոց» հասկացության հստակեցումը քաղաքական տեսության շրջանակում:

Վերլուծական աշխատանքի թեմաներ

1. Պատժամիջոցները՝ որպես պատերազմից խուսափելու գործիք. արդյո՞ք դրանք կարող են իրապես փոխարինել ռազմական ուժի կիրառմանը:

2. Պատժամիջոցների քաղաքական կիրառման ծավալները հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում:

3. Պատժամիջոցների քաղաքականության գիտականացումը. տեսական հստակեցումների անհրաժեշտությունն ու ուսումնասիրման սահմանները:

Լրացուցիչ գրականություն ցանկ

1. Mary Ellen O'Connell, "Debating the Law of Sanctions", European Journal of International Law, Volume 13, Issue 1, February 2002.

2. Thomas L. Ilgen, "Hard Power, Soft Power and the Future of Transatlantic Relations", Routledge, 2006.

3. Gary Clyde Hufbauer, Jeffrey Schott, Kimberly Ann Elliott, Barbara Oegg, "Economic Sanctions Reconsidered", Third Edition, Peterson Institute for International Economics, 2009.

Թեմա 2. «Պատժամիջոց» հասկացության քաղաքագիտական տեսահայեցակարգերը

Միջազգային պատժամիջոցների գործիքակազմում առանցքային նշանակություն ունեն տնտեսական պատժամիջոցները և պատժամիջոցների կիրառման իրավական կարգավորումները, ուստի պատժամիջոցների հետազոտությունը ոչ միայն քաղաքագիտության, այլև տնտեսագիտության և իրավագիտության ուսումնասիրության օբյեկտ է[3]: Հետևապես, առաջանում է պատժամիջոցների հետազոտության քաղաքագիտական հայեցակարգի կիրառման պարզաբանման և հիմնավորման օբյեկտիվ անհրաժեշտություն:

Պատժամիջոցների քաղաքագիտական հետազոտության կարևորագույն հանգամանք է այն փաստը, որ պատժամիջոցներն իրենց բնույթով քաղաքական երևույթ են, քանի որ պատժամիջոցների կիրառումն առաջին հերթին հետապնդում է քաղաքական նպատակ, իսկ տնտեսական սահմանափակումները և իրավական կարգավորումներն այդ նպատակին հասնելու գործիքներ են: Պատժամիջոցների սպառնալիքի կամ կիրառման միջոցով պետությունը, պետությունների դաշինքը կամ միջազգային կազմակերպությունն իրենց կամքն են պարտադրում միջազգային հարաբերությունների մեկ այլ սուբյեկտի կամ օբյեկտի՝ նպատակ ունենալով փոխել վերջինիս ոչ ցանկալի վարքագիծը, ստանալ կամ պահպանել գերակայություն նրա նկատմամբ: Պատժամիջոցների քաղաքական բնույթը կարելի է լավագույնս մեկնաբանել Մաքս Վեբերի իշխանության հայեցակարգի միջոցով, որը ենթադրում է երկու սուբյեկտների հարա-

[3] Տե՛ս Mary Ellen O'Connell, "Debating the Law of Sanctions", European Journal of International Law, Volume 13, Issue 1, February 2002, pp. 63–79:

բերություններում մի սուբյեկտի կողմից իր կամքը մյուսին պարտադրելու լեգիտիմ հնարավորություն[4]:

Այսպիսով, պատժամիջոցների հետազոտության քաղաքագիտական հայեցակարգը միջազգային հարաբերություններում պատժամիջոցների հետազոտության գլխավոր հայեցակարգն է, իսկ պատժամիջոցների տնտեսագիտական և իրավագիտական հետազոտությունները պատժամիջոցների քաղաքագիտական հետազոտությանը փոխլրացնող կարևոր գործոն են: Սա ապահովում է առարկայի հետազոտության դիալեկտիկական ամբողջականությունը:

Պատժամիջոցների կիրառումը միջազգային հարաբերություններում համարվում է կոշտ ուժի կիրառմամբ քաղաքական նպատակներին հասնելու միջոց: Սակայն կարևոր ենք համարում նաև պատժամիջոցների հայեցակարգային տարանջատումը ինչպես «կոշտ», այնպես էլ «փափուկ ուժ» հասկացություններից:

Ջոզեֆ Նայը «Առաջնորդության ուժը» աշխատության մեջ կոշտ ուժի գործիքակազմին է դասում ֆինանսական, տնտեսական, և հարկադրանքի այլ մեթոդների միջոցով մյուսներին ստիպելը, որպեսզի նրանք հրաժարվեն իրենց նախնական դիրքորոշումից[5]: Ըստ Ջ. Նայի՝ կոշտ ուժը հիմնված է «մտրակի և բլիթի» քաղաքականության վրա, այնինչ փափուկ ուժը հեղինակը բնորոշում է որպես ցանկալիին հասնելու այնպիսի միջոցների օգտագործում, որոնք հիմնված են գրավչության, ընդհանուր արժեքների, պարտավորվածության և արդարության մասին ընդ-

[4] Տե՛ս Вебер М., Типы господства (3 глава 1 полутома «Хозяйство и общество») (пер. с нем. А.Б. Рахманова) [Личность. Культура. Общество. 2008. Т. 10. Вып. 1 (40). С. 27-40]:
Հասանելի է՝ https://iphras.ru/uplfile/reznik/sovet/bibl/1/Weber8.pdf
[5] Տե՛ս Joseph S. Nye Jr., "The Powers to Lead", Oxford University Press, 2008, p. 29:

հանուր արժեքների վրա: Ուստի, պատժամիջոցները ռազմական ուժի հետ մեկտեղ կարելի է համարել կոշտ ուժի տարատեսակ, որոնք ոչ թե գրավչության, այլ հարկադրանքի միջոցով փորձում են մեկ այլ սուբյեկտի պարտադրել ցանկալի վարքի դրսևորում: Միևնույն ժամանակ, ոչ պակաս կարևոր է պատժամիջոցների տարանջատումը ռազմական ուժից, ուստի «պատժամիջոց» եզրույթի սահմանումը և հայեցակարգայնացումը դառնում են առաջնահերթություն:

«**Պատժամիջոց» հասկացության սահմանումները** Պատժամիջոցների սահմանումների մասին մասնագիտական գրականության և հանրագիտարանային բացատրությունների մեջ նկատվում են որոշակի հակասություններ: Մերիամ Վեբստերի բառարանում պատժամիջոցները սահմանվում են հետևյալ կերպ՝ «մեկ կամ մի քանի պետության կողմից այլ պետության նկատմամբ կիրառվող տնտեսական կամ ռազմական հարկադրանք՝ վերջինիս կողմից միջազգային իրավունքի խախտումը դադարեցնելու և միջազգային իրավական արդարադատության ենթարկելու համար»[6]: Քեմբրիջյան բառարանում քաղաքական պատժամիջոցների համար տրված է հետևյալ սահմանումը՝ «որևէ պետության հետ առևտուրը կանգնեցնելուն կամ հաղորդակցությունը սահմանափակելուն միտված պաշտոնական գործողություններ՝ նպատակ հետապնդելով ստիպել վերջինիս ենթարկվել միջազգային իրավունքին»[7]: Կարծում ենք, որ վերոնշյալ հանրագիտարանային սահմանումների տրամաբանությունում առկա է երկու անճշտություն: Նախ, ի տարբերություն ռազմական ուժի՝ պատժամիջոցները հարկադրանքի առավել փա-

[6] Տե՛ս Definition of Sanction, հասանելի է՝ https://www.merriam-webster.com/dictionary/sanction (Accessed: 23.02.2018):
[7] Տե՛ս Sanction, Cambridge Business English Dictionary:

փուկ տարատեսակ են, ուստի ռազմական հարկադրանքն անհրաժեշտ է տարանջատել պատժամիջոցների միջոցով կիրառվող հարկադրանքից[8]: Բացի այդ, սույն սահմանումների համատեքստում հստակ մեկնաբանվում է պատժամիջոցների կիրառման նպատակը՝ միջազգային իրավունքի խախտման վերացումը, մինչդեռ պատժամիջոցների կիրառումն ինքնին կարող է դիտարկվել իբրև միջազգային և հումանիտար իրավունքի խախտում, ինչպես, օրինակ, Իրաքի դեմ պատժամիջոցների կիրառումը[9]:

Վերոնշյալ սահմանումներն արտացոլում են պատժամիջոցների իրավագիտական հայեցակարգը, սակայն չեն արտահայտում պատժամիջոցների քաղաքական բնույթը: Հարկ ենք համարում նաև նշել, որ միջազգային իրավունքի մեկնաբանումը հաճախ երկակի բնույթ է կրում, օրինակ՝ ազգերի ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության իրավունքները հաճախ անհամատեղելի են: Ուստի և՛ մեկի, և՛ մյուսի աջակիցները կարող են միմյանց դեմ, սեփական քաղաքական շահերից ելնելով, պատժամիջոցներ սահմանել՝ որակելով այն միջազգային իրավունքի վերականգմանն ուղղված միջոցառում:

Քաղաքագիտական գրականության մեջ ևս գոյություն չունի պատժամիջոցների ունիվերսալ սահմանում: Ոլորտի հետազոտությամբ զբաղվող առաջատար մասնագետներն իրենց աշխատություններում տարբեր եզրակացությունների են հանգում պատժամիջոցների կիրառման արդյունավետության մասին, ինչն էլ հանգեցնում է առարկայի հետազոտությամբ զբաղվող մասնագետների միջև գիտական բանավեճի: Կարծում ենք, որ

[8] Տե՛ս Thomas L. Ilgen, "Hard Power, Soft Power and the Future of Transatlantic Relations", Routledge, 2006, p. 28:

[9] Տե՛ս Mary Ellen O'Connell, "Debating the Law of Sanctions", European Journal of International Law, Vol. 13, Issue 1, February 2002, pp. 63–79:

պատժամիջոցների արդյունավետության գնահատումը մեծապես կախված է հետազոտողի կողմից պատժամիջոցների սահմանման և նպատակների ընկալումից: Ուստի, պատժամիջոցների հետազոտությամբ զբաղվող հեղինակների կողմից առաջ քաշված սահմանումները մեջբերելու և սեփական հետազոտությունների միջոցով պատժամիջոցների կիրառման արդյունավետությունը վերլուծելու անհրաժեշտություն է առաջանում:

Մասնագիտական գրականության մեջ պատժամիջոցների տեսության հիմնադիր աշխատություն է համարվում Յ. Գալթունգի հեղինակած «Միջազգային տնտեսական պատժամիջոցների ազդեցության մասին. Ռոդեզիայի օրինակով» գիտական հոդվածը, որը լույս է տեսել 1967 թվականին, «Համաշխարհային քաղաքականություն» ամսագրում[10]: Հոդվածի շրջանակում Յ. Գալթունգը փորձում է վեր հանել պատժամիջոցների կիրառման մեխանիզմները, դրանց հետևանքով առաջացող հոգեբանական և սոցիալական մեխանիզմները, դիտարկման միջոցով հասկանալ պատժամիջոցների կիրառման արդյունավետությունը: Գալթունգը պատժամիջոցները բնութագրում է հետևյալ կերպ. «մեկ կամ մի քանի միջազգային դերակատարների (կիրառողներ) կողմից ձեռնարկված գործողություններ, որոնք ուղղված են մեկ կամ մի քանի այլ դերակատարների (թիրախ) պատժելուն՝ զրկելով նրանց որոշակի հնարավորություններից և (կամ) թիրախներին ստիպելու հետևել որոշակի նորմերի, որոնք կիրառողը կարևոր է համարում»[11]: Այնուամենայնիվ, հեղինակը նշում է, որ իր ուսումնասիրության հիման վրա գրված հետազոտագիրը կարելի է դիտարկել որպես փորձնական աշխատություն՝

[10] Տե՛ս On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia Author(s): Johan Galtung Source: World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), pp. 378-416, Published by Cambridge University Press:

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 379:

ստեղծելու պատժամիջոցների համընդհանուր տեսություն՝ հիմնված դարի պատմական նախադեպերի վրա:

Ընդհանուր առմամբ, Յ. Գալթունգը պատժամիջոցների արդյունավետության մասին բացասական եզրակացության է հանգում: Ըստ Յ. Գալթունգի՝ «հարված ստանալու և վիրավորվելու պարագայում օրգանիզմների մեծ մասը փորձում է փոխհատուցել վնասը և վերականգնել նախկին ստատուս քվոն՝ ելման կետը»[12]: Այսպիսով, թիրախավորված հասարակությունը կարող է անգամ մասամբ ամրապնդված դուրս գալ պատժամիջոցների փորձությունից, քանի որ պատժամիջոցների կիրառումը կարող է հանգեցնել հասարակական թաքնված էներգիայի ակտիվացմանը: Հետևապես պատժամիջոց կիրառողը ոչ միայն չի հասնի իր նպատակին, այլև պատժամիջոցների կիրառմամբ կարող է նպաստել հակառակ արդյունքին՝ ուժեղացնել հակառակորդին:

Պատժամիջոցների արդյունավետությունը բարձրացնելու համար հեղինակն առաջարկում է նոր մեխանիզմներ: Յ. Գալթունգը պատժամիջոցների երկու ենթաճյուղ է առանձնացնում՝ դրական և բացասական: Որպես դրական պատժամիջոց հեղինակը ներկայացնում է գրավչության գործիքների կիրառումը: Նա առաջարկում է բացասական պատժամիջոցը օգտագործել որպես «մտրակ», սակայն օգտագործել նաև «բլիթը»՝ որպես քաղաքականության գործիք: Միաժամանակ, Գալթունգն ընդգծում է, որ եթե կիրառող կողմի հասարակությունը պատժելուն նպատակաուղղված վերաբերմունք ունի, ապա այն նպաստում է բացասական պատժամիջոցների պահպանմանը և, եթե անգամ պատժամիջոցների կիրառման արդյունքում պատժամիջոցներ «ընդունող» կողմը չի ենթարկվում կիրառողի կամքին, ապա կիրառողը, միևնույնն է, մասնակիորեն բավարարված է, քանի որ ունի համոզմունք, որ մեղավորը պատժված է: Այս պարագայում բացասական պատժամիջոցներն ավելի ապահով են, քան դրականները: Եվ եթե կողմերի միջև ատելությունը խորացած է, ապա պատժամիջոցների կիրառումն անգամ քննարկման առարկա չի հանդիսանում:

Սակայն ինչպես արդեն նշվել է, գրավչության կամ քաջալերանքի միջոցով մի սուբյեկտի կողմից մյուս սուբյեկտի վրա ազդեցություն ունենալն արդի միջազգային հարաբերությունների տեսության շրջանակներում ավելի ճիշտ է դիտարկել ոչ թե պատժամիջոցների, այլ փափուկ ուժի հայեցակարգում[13]: Ուստի, սույն աշխատանքում «քաջալերանքի գործիքները» կամ «դրական» պատժամիջոցները մեր կողմից չեն դիտարկվում որպես հետազոտության առարկա: Կարծում ենք, որ պատժամիջոցները միջանկյալ տեղ են զբաղեցնում ռազմական և փափուկ ուժերի միջև:

Ըստ ներքոնշյալ աշխատանքի[14]՝ պատժամիջոցները սահմանում են հետևյալ կերպ. «կառավարության կողմից ֆինանսական և տնտեսական հարաբերությունների կանխամտածված կասեցում կամ կասեցման սպառնալիք»: Ընդ որում, հեղինակներն իրենց աշխատության մեջ ընդգծում են այն հանգամանքը, որ պատժամիջոցները վերաբերում են ոչ միայն գոյություն ունեցող հարաբերությունների սահմանափակմանն ու կասեցմանը, այլև այն ծրագրերի զարգացմանը, որոնք պատժամիջոցների բացակայության պարագայում զարգանալու ներուժ կարող էին ունենալ:

---

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 408:

[13] Տե՛ս Joseph S. Nye Jr., "The Powers to Lead", Oxford University Press, 2008, p. 35:

[14] Տե՛ս Gary Clyde Hufbauer, Jeffrey Schott, Kimberly Ann Elliott, Barbara Oegg, "Economic Sanctions Reconsidered", Third Edition, Peterson Institute For International Economics, 2009, էջ 3:

Հեղինակներն իրենց աշխատությունում կատարել են առաջին աշխարհամարտից հետո կիրառված պատժամիջոցների 174 իրավիճակային հետազոտություն (case study) և եզրահանգել են, որ պատժամիջոցների կիրառման ընդամենը մեկ երրորդ դեպքերում է կիրառող կողմը հասել հաջողության: Ընդ որում, հեղինակները նշում են, որ առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած հարյուր տարիների ընթացքում պատժամիջոցների կիրառման դեպքերի ճնշող մեծամասնությունը՝ 174-ից 109-ը, կատարվել է ԱՄՆ-ի կողմից: Վերոնշյալ հանգամանքը ցույց է տալիս, որ որքան ավելի հզոր է պետությունը տնտեսապես, այնքան այն ավելի շատ է հակված պատժամիջոցների կիրառման միջոցով հասնելու իր քաղաքական նպատակներին: Հարկ է նշել նաև, որ հեղինակները որպես պատժամիջոց չեն դիտարկում ինքնիշխան պետությունների միջև հարկային, ֆինանսական և առևտրային հարաբերությունների կարգավորումները:

Կարծում ենք, որ սույն մոտեցումն ունի մի քանի հիմնապատճառ: Գիրքը հրատարակվել է 2007 թվականին, երբ ԱՄՆ-ի կողմից դեռևս պատժամիջոցները չէին կիրառվում որպես տնտեսական մրցակցության գործիք, այնինչ Դոնալդ Թրամպի նախագահության ժամանակաշրջանում տնտեսական պատժամիջոցները դարձան նաև տնտեսական և տեխնոլոգիական գերակայության պահպանման գործիք, ինչպիսիք էին չինական «HUAWEI» կազմակերպության նկատմամբ կիրառվող պատժամիջոցները: Թրամպի «պատժամիջոցային քաղաքականությունը» արժանանում էր քաղաքական հակառակորդների քննադատությանն առ այն, որ ԱՄՆ-ն խախտում է ինքնիշխան հավասարության սկզբունքը:

Եթե ինքնիշխանության խնդիրը դիտարկենք միջազգային-իրավական հարթությունում, ապա բոլոր պետությունները հավասարապես ինքնիշխան են: Դիցուք, ԱՄՆ-ն և Անգոլիան ունեն

միջազգային-իրավական հավասար ինքնիշխանություն, երկու պետությունների անկախությունն էլ ճանաչված է, երկու պետություններն էլ ՄԱԿ-ի անդամներ են: Սակայն, եթե խնդիրը դիտարկում ենք քաղաքական՝ ուժի, հզորության և ազդեցության հարթությունում, ապա արձանագրում ենք, որ պետությունները միմյանցից տարբերվում են իրենց ռազմական, տնտեսական արդյունաբերական ներուժով և հզորություններով, ուստի պետությունների հարաբերություններն անհամաչափ են: Այդ իսկ պատճառով, որոշ պետությունների համար պատժամիջոցները միջազգային հարաբերությունների լեգիտիմ գործիք են, իսկ այլոց համար՝ ոչ: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ-ն իր ռազմական, արդյունաբերական և տնտեսական ներուժով գերազանցում էր աշխարհի բոլոր պետություններին, այդ իսկ պատճառով ուներ պատժամիջոցների միջոցով իր խնդիրները կարգավորելու շատ ավելի մեծ գործիքակազմ: Անհրաժեշտ է արձանագրել, որ պատժամիջոցները հարուստ պետությունների «սպառազինությունում» շատ ավելի մեծ տեղ են զբաղեցնում՝ ի տարբերություն տնտեսական և ֆինանսական սահմանափակ հնարավորություններ ունեցող պետությունների:

Փրինսթոնի համալսարանի միջազգային հարաբերությունների պրոֆեսոր Դեյվիդ Բոլդվինն իր հեղինակած «Տնտեսական դիմակայություն» գրքում ընդլայնում է պատժամիջոցների հետազոտության տիրույթը և պնդում, որ տնտեսական պատժամիջոցների հայեցակարգը պետք է ընդլայնվի՝ ներառելով «տնտեսական դիմակայության» բոլոր ասպեկտները, այդ թվում՝ ոչ միայն տնտեսական հարկադրանքը քաղաքական նպատակներով (պատժամիջոցների ավանդական ընկալում), այլև հարկադրանքը, որը կիրառվում է տնտեսական նպատակներով (առևտրային վեճեր), ինչպես նաև տնտեսական պատերազմի մեջ թիրախ պետության ներգրավումը, սեփական երկրում ներքաղաքական

աջակցության մոբիլիզացիայի ապահովումը, երրորդ կողմի լսարաններին վճռականություն ցույց տալը կամ, պարզապես, պատժի կիրառումը: Դեյվիդ Բոլդվինը վերահրատարակել է իր «Տնտեսական դիմակայություն» գիրքը, որտեղ նա Յ. Գալթունգի օրինակով փորձում է դիտարկել տնտեսական խրախուսման գործիքների կիրառումը պատժամիջոցների համատեքստում[15]:

Պատժամիջոցների հայեցակարգի ընդլայնման ջատագովներից է նաև Դ. Դրեզները, որը պատժամիջոցները համադրում է «տնտեսական հարկադրանքի» հետ: Նա իր հեղինակած գրքում պատժամիջոցները սահմանում է որպես «ազգային պետության կամ պետությունների դաշինքի կողմից (կիրառող) մեկ այլ պետության (ընդունող) նկատմամբ տնտեսական փոխգործակցության ընդհատում կամ սպառնալիք, եթե վերջինս չի համաձայնում կիրառողի կողմից հստակ ձևակերպված պահանջների հետ»[16]: Տնտեսական փոխգործակցության ընդհատումը կարող է ներառել առևտրային պատժամիջոցները, բոյկոտը, օգնության կասեցումը, ֆինանսական միջոցների սառեցումը, հարկային սակագների դրույքաչափերի մանիպուլյացիան: Ավելին, հեղինակն իր աշխատությունում «տնտեսական հարկադրանք», «տնտեսական պատժամիջոցներ» և «տնտեսական դիմակայություն» (statecraft) տերմիններն օգտագործում է որպես հոմանիշներ՝ նշելով, սակայն, որ դրանք տեխնիկապես տարբերվում են: Ըստ հեղինակի՝ տնտեսական դիմակայությունը (statecraft) ներառում է ոչ միայն տնտեսական պատժամիջոցների, այլև տնտեսական խթանների օգտագործումը: Դրեզների հիմնավորմամբ, հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում պատժամիջոցների կիրառումը կրկնապատկվել է, այնինչ դրանց հետազոտությունները՝ ոչ, չնայած այն հանգամանքին, որ պատժամիջոցները դարձել են միջազգային հարաբերությունների արտահայտման կարևոր միջոց[17]:

Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, քաղաքագետ Ռոբերտ Փեյփը համարում է, որ «Վերանայված տնտեսական պատժամիջոցները» հետազոտության եզրակացությունները թերի են, և պատժամիջոցները հաջողել են ոչ թե աշխատությունում ներկայացվող 40, այլ ընդամենը 5 դեպքերում: Փեյփը պատժամիջոցի հաջողություն չի համարում բոլոր այն դեպքերը, երբ, պատժամիջոցներից բացի, այլ միջոցներ են կիրառվել ցանկալի արդյունքի հասնելու համար: Հեղինակը կարծում է, որ պատժամիջոցները արդյունավետ գործիք չեն, քանի որ ժամանակակից պետությունների իշխանությունները տիրապետում են տարբեր վարչական մեթոդների, որոնց միջոցով կարողանում են մեղմել պատժամիջոցների ազդեցությունը կամ դրա ծանրությունը դնել քաղաքական հակառակորդների ուսերին[18]:

Հակադրվելով պատժամիջոցների՝ Դեյվիդ Բոլդվինի առաջ քաշած հայեցակարգին՝ Փեյփը նաև տարանջատում է պատժամիջոցները տնտեսական և առևտրային պատերազմներից: Ըստ Փեյփի՝ պատժամիջոցների և առևտրային պատերազմների նպատակները տարբեր են. տնտեսական պատերազմի նպատակներն ավելի լայն ու շատ են, իսկ պատժամիջոցներինը՝ սահմանափակ: Ըստ հեղինակի՝ չտարանջատման պարագայում պատժամիջոցների սահմաններն ընդլայնվելու են՝ ներառելով

[15] David A. Baldwin, "Economic Statecraft", Princeton University Press, 2020, pp. 40-41:

[16] Տե՛ս Drezner, D. "*The Sanctions Paradox: Economic Statecraft and International Relations*" (Cambridge Studies in International Relations). Cambridge: Cambridge University Press, 1999. doi:10.1017/CBO9780511549366 pp. 2-3:

[17] Տե՛ս նույն տեղում, էջ 6:

[18] Տե՛ս Pape, R. "Why Economic Sanctions Do Not Work", *International Security, 22* (2), 90-136,1997, էջ 93:

գրեթե ցանկացած միջազգային տնտեսական բանակցություն, իսկ պատժամիջոցների արդյունավետության չափումը անհնարին է դառնալու:

Ըստ հեղինակի կողմից առաջ քաշվող հայեցակարգի՝ պատժամիջոցներն ուժի կիրառման այլընտրանք են, ուստի եթե կիրառվում է ուժ, ապա պատժամիջոցներն անարդյունավետ են[19]: Փեյփը տնտեսական պատերազմի գործողությունները, ինչպիսիք են, օրինակ, ծովային շրջափակումները, չի համարում տնտեսական պատժամիջոց: Նա համարում է, որ նման գործողության նպատակը հակառակորդի ռազմական ներուժի թուլացումն է, ուստի դրա կիրառումը չի կարող համարվել արդյունավետ պատժամիջոց: Հեղինակը պնդում է, որ երկրորդ աշխարհամարտի ժամանակ Գերմանիայի ծովային շրջափակման պարագայում նպատակը նաև ռազմական ներուժի սահմանափակումն էր: Այդ իմաստով դաշնակիցները հասան իրենց նպատակին՝ նաև պատժամիջոցների միջոցով թուլացնելով գերմանական ռազմական ներուժը:

Ըստ Փեյփի՝ պատժամիջոցներն արդյունավետ են, եթե համապատասխանում են հետևյալ երեք չափանիշներին՝ 1) թիրախավորված պետությունն ընդունել է պատժամիջոց կիրառող պետության պայմանները, 2) թիրախավորված պետության վարքի փոփոխությանը նախորդել է պատժամիջոցների կիրառում կամ սպառնալիք և 3) գոյություն չունի թիրախավորված պետության վարքի փոփոխության վերաբերյալ առավել արժանահավատ բացատրություն: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի դաշնակիցների շրջափակումը որակվում է և՛ որպես տնտեսական պատերազմ, և՛ որպես տնտեսական պատժամիջոց, քանի որ այն նախատեսված էր երկու նպատակների

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 98:

համար՝ նվազեցնել գերմանական ռազմական ուժը, ինչպես նաև ցավ պատճառելու միջոցով ստիպել գերմանացի ժողովրդին հանձնվել: Շրջափակումը հաջող էր որպես տնտեսական պատերազմ, որը նպաստեց Գերմանիայի ռազմական պարտությանը, բայց որպես տնտեսական պատժամիջոց անհաջող էր, որովհետև ժողովրդական ճնշում չստեղծեց գերմանական կառավարության վրա, որը չհանձնվեց, մինչև չճանաչեց իր ռազմական դիրքի անհուսությունը[20]:

Մի շարք այլ հեղինակներ ևս կարծում են, որ պատժամիջոցները միջազգային հարաբերությունների արդյունավետ գործիք չեն: Այսպես՝ Աբրամ Չայեսը և Անտոնիան Հենդլերը համարում են, որ տնտեսական պատժամիջոցներն արդյունավետ չեն, քանի որ դրանք և՛ դանդաղ են արդյունք տալիս, և՛ առանձնապես ազդեցություն չեն ունենում վարքի փոփոխության վրա[21]: Մարգարեթ Դոքսին պնդում է, որ ոչ ռազմական տեսակի միջազգային պատժամիջոցների կիրառմամբ, եթե անգամ դրանք կիրառվում են միջազգային կազմակերպությունների շրջանակներում, չի հաջողվում կտրուկ փոխել թիրախի արտաքին կամ ներքին քաղաքականությունը[22]:

«Պատժամիջոցների քաղաքականություն. նպատակներ, ռազմավարություններ, գործիքներ» գրքի հեղինակ Ռուսաստանի միջազգային հարաբերությունների խորհրդի (ՊՀՄԴ) ծրագրային տնօրեն Իվան Տիմոֆեևը նշում է, որ «պատժամիջոցները գերակայության գործիք են միջազգային հարաբերությունևե-

[20] Տե՛ս Pape, R. "Why Economic Sanctions Do Not Work", *International Security, 22*(2), 1997, p. 99, 90-136:

[21] Chayes, A. "The New Sovereignty: Compliance with International Regulatory Agreements", (1995), p. 2:

[22] Տե՛ս Doxey M.P. (1987) "The Impact of Sanctions. In: International Sanctions in Contemporary Perspective", Palgrave Macmillan, London, 1987, p. 92:

ռում, որը ենթադրում է նախաձեռնող երկրների կողմից թիրախ երկրների վրա տնտեսական ճնշման միջոցների կիրառում՝ նրանց քաղաքական ուղու փոփոխության հասնելու նպատակով»[23]: Տիմոֆեևը պատժամիջոցները համարում է պետության ինքնիշխանությանը միջամտության փորձ: Ըստ հեղինակի՝ միջազգային իրավական ինքնիշխանության և պետությունների հզորության միջև անհամաչափությունը պատժամիջոցների կիրառման կարևոր նախապայման է, քանի որ, որպես կանոն, պատժամիջոցներ կիրառող կողմը տնտեսապես գերազանցում է պատժամիջոցների թիրախում գտնվող պետությանը, որն ապահովում է նրա անձեռնմխելիությունը պատասխան գործողություններից: Հեղինակը պատժամիջոցների կոնցեպտուալիզացիայի նպատակով օգտագործում է Փեյփի հայեցակարգը և տնտեսական պատերազմներն առանձնացնում է պատժամիջոցներից՝ համարելով, որ, ի տարբերություն տնտեսական պատերազմների, պատժամիջոցները հետապնդում են քաղաքական նպատակներ[24]:

Մեկնաբանելով պատժամիջոցների վերաբերյալ գրականությունը՝ Դ. Բալդվինը նկատում է, որ թեմայի վերաբերյալ գոյություն ունեցող գրականության հիմնական երկու բնութագրիչներն են սակավությունը և գրեթե համընդհանուր միտումը արժեզրկելու արտաքին քաղաքականության նման գործիքների օգտակարությունը: Ըստ Բալդվինի՝ պատժամիջոցները գնահատելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մանրուքներին. ինչպես սուզվելու մրցույթները գնահատելիս, այնպես էլ պատժամիջոցների արդյունավետության գնահատման պարագայում միավորները պետք է ճշգրտվեն ըստ դժվարության մակարդակի: Այնինչ, մի շարք նրբություններ անտեսվում են մասնագիտական գրականության մեջ արված պատժամիջոցների պարզ՝ հաջողության/անհաջողության բաժանման մեջ: Մեր օրերում դժվար է համաձայնել Դ. Բալդվինի պնդման հետ, քանի որ 1985 թվականից ի վեր հարյուրավոր աշխատություններ են գրվել պատժամիջոցների մասին, սակայն դժվար է չհամաձայնել, որ այդ աշխատությունների զգալի մասը պատժամիջոցները համարում են անարդյունավետ: Կարծում ենք, որ նման մոտեցման հիմնական պատճառը պատժամիջոցների տարբեր սահմանումներն են:

Մենք սկզբունքորեն համաձայն չենք Փեյփի առաջ քաշած պատժամիջոցների և դրանց արդյունավետության հայեցակարգի հետ: Այդ տեսությունը հիմնված է պատճառահետևանքային հիմնավորման պարզ շղթայի վրա, որի դեպքում տնտեսական պատժամիջոցը հանգեցնում է տնտեսական քայքայման, որը տանում է քաղաքական կազմալուծման, որն էլ, իր հերթին, հանգեցնում է թիրախի հնազանդմանը[25]: Ըստ այս տրամաբանության, պատժամիջոցներն իմաստ ունեն միայն այն պարագայում, երբ միայն պատժամիջոցների կիրառման միջոցով է հնարավոր դառնում վերադառնալ այն ստատուս-քվոյին, որը գոյություն ուներ նախքան պատժամիջոցների հանգեցնող ագրեսիայի ակտը: Այնինչ, ինչպես նշում են որոշ հեղինակներ, պատժամիջոցների նպատակները շատ ավելի պակաս հավակնոտ են: Եթե պատժամիջոցների կիրառման հետևանքով առաջացել է որոշակի փոխզիջում կամ պատժամիջոցները ազդեցություն են

[23] Տե՛ս Иван Тимофеев, «Экономические санкции как политическое понятие». В книге «Политика санкций: цели, стратегии, инструменты», Москва 2020г., с. 45:
[24] Տե՛ս Baldwin D.,"Economic Statecraft", Princeton University Press, 2020, p. 46:
[25] Տե՛ս Pape, R. "Why Economic Sanctions Do Not Work", *International Security, 22*(2), 90-136,1997, p. 95:

ունեցել թիրախ պետության վարքագծի վրա, ապա պատժամիջոցները կարելի է համարել մասնակիորեն հաջողված[26]:

Կարծում ենք, որ պատժամիջոցների կիրառման արդյունավետության գնահատումը չի կարելի , գնահատել միայն հաջողված կամ անհաջող: Ցանկացած պատժամիջոց առաջացնում է որոշակի հետևանքներ, ինչպես կիրառողի, այնպես էլ օբյեկտ հանդիսացող պետության համար, ուստի հարկավոր է հետազոտել և գնահատել այդ ազդեցությունը: Բացի այդ, միջազգային հարաբերություններում պատժամիջոցների կիրառման փիլիսոփայությունը կարելի է համադրելի համարել քրեական պատժամիջոցի փիլիսոփայության հետ, որի նպատակներն են ռեաբիլիտացիան, զսպումը և պատժիչ արդարադատությունը:

Մեր ձևակերպմամբ՝ *միջազգային պատժամիջոցները պետությունների կամ պետությունների միավորման կողմից միջազգային հարաբերությունների մեկ այլ սուբյեկտի նկատմամբ սահմանափակումների կիրառումն է, որը միտված է հարկադրելու պատժամիջոցների ենթարկվողին՝ փոփոխել իր քաղաքականությունը, սահմանափակել նրա կարողությունները կամ պատժել՝ կիրառողի ընկալմամբ անընդունելի վարքագիծ դրսևորելու համար*: Ձեռնարկում պատժամիջոցների օբյեկտ պետությունը պայմանականորեն անվանում ենք պատժամիջոցների *թիրախ* պետություն, իսկ պատժամիջոցներ օգտագործող պետությանը՝ *կիրառող*:

Տնտեսական պատերազմների շրջանակներում կիրառվող սահմանափակումները մենք դիտարկում ենք որպես պատժամիջոցներ, քանի որ տնտեսական պատերազմների նպատակը ևս քաղաքական գերակայության ապահովումն է: Հարկ է նաև նշել,

[26] Daoudi and Dajani, "Economic Sanctions: Ideals and Experience", London, Boston, Melbourne and Henley: Routledge & Kegan Paul, 1983 (1983), p. 2.

որ արդի միջազգային հարաբերություններում պատժամիջոցները կիրառվում են որպես տնտեսական պատերազմների գործիք: Հետևապես, անտրամաբանական ենք համարում Փեյփի կողմից առաջ քաշվող այն մոտեցումը, որով անտեսվում է պատժամիջոցների հետազոտությունը տնտեսական պատերազմի համատեքստում: Միաժամանակ՝ այս աշխատանքի շրջանակներում մենք չենք դիտարկում Գալթունգի և Բոլդվինի առաջ քաշած «դրական» պատժամիջոցները՝ որպես հետազոտության առարկա, քանի որ, մեր կարծիքով, պատժամիջոցները հարկադրանքի փափուկ տարատեսակ են, մինչդեռ քաջալերումը, իր բնույթով, հարկադրանքի տարատեսակ չէ:

Հարկ ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ ձեռնարկի շրջանակում «պատժամիջոց» հասկացությունը ներառում է տնտեսական պատժամիջոցները, սակայն չի սահմանափակվում դրանցով: Պատժամիջոցների տարատեսակներին և մեխանիզմներին առավել մանրամասն անդրադարձ կկատարենք հետագա բաժիններում:

Պատժամիջոցների հայեցակարգի ընկալումն ամբողջականացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում հաջորդիվ անդրադառնալ պատժամիջոցների կիրառման և դրանց ինստիտուցիոնալացման պատմությանը:

Գործնական հարցադրումներ

1. Ինչպիսի՞ գործոններ պայմանավորեցին պատժամիջոցների հանրաճանաչության աճը միջուկային դարաշրջանում՝ ռազմական ուժի սահմանափակման համատեքստում:

2. Որքանո՞վ են պատժամիջոցները արդյունավետ «հաղթանակ առանց մարտի» հասնելու տեսանկյունից, և ինչ պայմաններում են դրանք ձախողվում:

3. Ի՞նչ դեր է խաղում պատժամիջոցների ֆինանսատնտեսական «էժանությունը»՝ դրանց որպես դիվանագիտական գործիք ընտրության մեջ:

4. Ինչպիսի՞ն է ԱՄՆ-ի և գլոբալ ուժերի կառուցվածքային դերն այն գործընթացում, որով պատժամիջոցները դարձան միջազգային հարաբերությունների «նորմալացված» գործիք:

5. Ի՞նչ տեսական ու մեթոդաբանական խնդիրներ են առաջանում պատժամիջոցների՝ որպես քաղաքական գիտության օբյեկտի ուսումնասիրության ժամանակ:

Վերլուծական աշխատանքի թեմաներ

1. Պատժամիջոցները որպես ռազմաքաղաքական մրցակցության գործիք միջուկային դարաշրջանում:

2. Պատժամիջոցները որպես դիվանագիտության ձախողման արդյունք. քաղաքական, տնտեսական և գաղափարական հիմնավորումներ:

3. Պատժամիջոցների ինստիտուցիոնալ և տեսական զարգացումը որպես առանձին քաղաքական գործիք. քաղաքագիտական մոտեցումների համեմատական վերլուծություն:

Լրացուցիչ գրականություն ցանկ

1. Baldwin D., "Economic Statecraft", Princeton, N. J.: Princeton University Press, 1985.

2. Drezner D., "The Sanctions Paradox: Economic Statecraft and International Relations" (Cambridge Studies in International Relations). Cambridge: Cambridge University Press, 1999.

3. Pape R., "Why Economic Sanctions Do Not Work", International Security, 22(2), 90-136, 1997.

Թեմա 3. Պատժամիջոցները միջազգային հարաբերությունների պատմությունում

Պատժամիջոցների կիրառման արդյունավետությունն ու ինստիտուցիոնալացումը հստակեցնելու, ինչպես նաև նրանց արտաքին քաղաքականության գործիք դառնալու երևույթն առավել հստակ պատկերացնելու նպատակով սույն թեմայում կատարել ենք միջազգային քաղաքականությունում պատժամիջոցների կիրառման պատմական վերափոխման վերլուծություն, առանձնացնելով այն հիմնական ժամանակահատվածները, երբ պատժամիջոցները՝ որպես քաղաքական երևույթ, ինստիտուցիոնալ կառուցվածքի և զարգացման միտումներ են ունեցել:

Ժամանակակից մասնագիտական գրականությունում, որպես միջազգային հարաբերություններում պատժամիջոցների կիրառման ինստիտուցիոնալ առաջին դրսևորում, մատնանշվում է մ.թ.ա. 432 թվականը, երբ Աթենական քաղաք-պետության ղեկավար Պերիկլեսը արգելեց աթենացիներին և դաշնակիցներին առևտրով զբաղվել հարևան Մեհերյան քաղաք-պետության հետ, ինչը, ի վերջո, հանգեցրեց Պենեպոլեսյան պատերազմին:[27] Պատժամիջոցի կիրառման նշյալ դեպքը պատմագրության մեջ փաստված առաջին դեպքն է, սակայն տրամաբանական է, որ պատժամիջոցներ կիրառվել են նաև մինչ այդ:

Տնտեսական և առևտրային սահմանափակումների քաղաքականություն էին վարում նաև միջնադարյան քրիստոնեական առաջնորդներն ընդդեմ մուսուլմանների: 1179 թվականին Լաթերանյան երրորդ ժողովի ժամանակ Հռոմի Ալեքսանդր երրորդ պապն արգելում է քրիստոնյաներին մուսուլման սարացիններին

[27] Տե՛ս Thucydides, "On the Athenian Boycott" in the "History of the Peloponnesian War", p. 73:

վաճառել նավեր, զենք, զինամթերք և դրանց պատրաստման համար օգտագործվող նյութեր: Կանոնը խախտողներին սպառնում էր բանադրություն և ունեզրկում: Այսպիսով, կաթոլիկ եկեղեցին պաշտոնապես ամրագրեց միակողմանի տնտեսական պատժամիջոցների կիրառման պրակտիկան:

Ուշ միջնադարում պատժամիջոցները ինչպես պետությունների, այնպես էլ հզոր առևտրային կազմակերպությունների (օրինակ՝ Հանզայի միության) քաղաքականության գործիք էր:[28] 14-17-րդ դարերի ընթացքում առևտրային պատերազմների շրջանակներում Հանսայի միությունը, Անգլիան, Ֆրանսիան և Հոլանդիան միմյանց նկատմամբ փոխադարձ պատժամիջոցներ էին կիրառում՝ նպատակ ունենալով թուլացնել հակառակորդի նավատորմն ու գերակա ազդեցություն տարածել Եվրոպայի հյուսիսային ջրերում: Միջերկրական ծովում նավատորմային մրցակցության սահմանափակման նմանատիպ քաղաքականություն էին վարում նաև Պորտուգալիան և Վենետիկը: Տնտեսական սահմանափակումները դրված էին անգլո-ամերիկյան վաղ շրջանի հարաբերությունների հիմքում: Անգլիացիների կողմից տնտեսական շրջափակման դեմ բողոքն ամրագրված էր նաև ԱՄՆ անկախության հռչակագրում: Սակայն հարկ է նշել, որ այս ժամանակաշրջանում առևտրային պատերազմներն ու պատժամիջոցները դիտարկվում էին սոսկ սեփական տնտեսության զարգացման ու քաղաքական նկրտումներին հասնելու համատեքստում և դեռևս չունեին ինստիտուցիոնալ բնույթ ու կիրառման հստակ իրավակարգավորումներ:

19-րդ դարի ընթացքում Եվրոպայում նոր թափ էր հավաքում ինդուստրացման գործընթացը՝ հանգեցնելով ավանդական

[28] Տե՛ս John Conybeare, "Trade Wars: A Comparative Study of Anglo-Hanse, Franco-Italian, and Hawley-Smoot Conflicts", World Politics, Vol. 38, No. 1 (Oct. 1985), p. 153:

հասարակության ձևափոխմանը և ժամանակակից՝ ազգային պետությունների առաջացմանը: Ազգային պետությունների ի հայտ գալով՝ պատժամիջոցները նոր որակ ձեռք բերեցին, քանի որ ազգային պետության կարևորագույն նպատակը սեփական շուկայի պաշտպանությունն ու առևտրային էքսպանսիան էր: Ըստ Տիմոֆեևի՝ ազգային պետությունը նաև հնարավորություն ուներ մոբիլիզացնելու ավելի մեծ ռեսուրսներ՝ ի դեմս պետական բյուրոկրատիայի պատժամիջոցների մշակման և կիրառման: Մեր դիտարկմամբ, ինդուստրալացման և ազգային պետությունների ի հայտ գալուն զուգահեռ՝ ստեղծվում էին զանգվածային բանակներ, որոնց զինելու և կերակրելու համար անհրաժեշտ էր հումքի և սննդամթերքի մշտական մատակարարում: Վերջինս առավել խոցելի էր դարձնում պետությունների տնտեսությունները, քանի որ հակառակորդ պետություններին հնարավորություն էր տալիս տնտեսական շրջափակումների միջոցով էականորեն նվազեցնել պետության տնտեսական և հետևապես՝ քաղաքական ներուժը: Այսպիսով, բացվում էր պատժամիջոցների կիրառման հնարավորության մի նոր ժամանակաշրջան: Պատժամիջոցներն արդյունավետ կիրառելու կամ դրանց դիմակայելու համար ստեղծվում էին ռազմաքաղաքական նոր դաշինքներ:

19-րդ դարի՝ նոր ժամանակաշրջանի արդյունաբերության և առևտրի բուռն զարգացումը խորացնում էր պետությունների փոխկապակցվածությունը, այսպիսով՝ պարարտ հող նախապատրաստելով պատժամիջոցների լայն կիրառման համար: Պատերազմող պետությունները ձգտում էին հակառակորդին հնարավորինս զրկել արդյունաբերական և, հատկապես, ռազմաարդյունաբերական ներուժից: Ռուս հետազոտող Իվան Տիմոֆեևը համարում է, որ Նապոլեոնի ռուսաստանյան արշավանքը հրահրված էր այն պատճառով, որ Պետերբուրգը փաստացի սպառնաժի էր ենթարկում Մեծ Բրիտանիայի տնտեսական չե-

զոքացմանը միտված ցամաքային շրջափակման միջոցառումները: 19-րդ դարում Ռուսաստանի նկատմամբ յուրօրինակ պատժամիջոցներ կիրառելու մեխանիզմ ուներ նաև Օսմանյան կայսրությունը, օրինակ՝ 1829 թվականին արգելեցին ռուսական նավերի մուտքը Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներ, քանզի Ռուսաստանն աջակցում էր հունական հեղափոխությանը: Այսօր էլ Բոսֆորի և Դարդանելի նեղուցներով տարանցման արգելքը Թուրքիան կարող է օգտագործել որպես պատժամիջոցային գործիք: Թեպետ 1936 թվականին կնքված Մոնտրոյի կոնվենցիայով Թուրքիան իրավունք չունի արգելել սևծովյան պետությունների առևտրային և ռազմական նավերի տարանցումը նեղուցներով, սակայն, գործնականում Թուրքիան կարող է գտնել տարբեր ճանապարհներ՝ խոչընդոտելու այլ պետությունների նավերի տարանցումը նեղուցներով՝ անտեսելով Կոնվենցիայի դրույթները:

Մարգարեթ Դոքսիի պնդմամբ, մասշտաբային առումով 19-րդ դարում կիրառված պատժամիջոցներն անհամեմատ ավելի մեծ էին, քան նախկինում կիրառվածները: Փաստացի՝ այս շրջանում պատժամիջոցների մասշտաբներն ընդգրկում էին գրեթե ողջ մայրցամաքային Եվրոպան: Սակայն, այս շրջանում պատժամիջոցները՝ որպես միջազգային քաղաքականության գործիք, կիրառվում էին առանձին պետությունների կամ դրանց ձևավորած դաշինքների կողմից և չունեին ինստիտուցիոնալ բնույթ: 19-րդ դարում կիրառված պատժամիջոցների մեծամասնությունը բաժին էր ընկնում պետությունների ծովային և նավահանգստային շրջափակումներին: Պատժամիջոցների կիրառումը ինստիտուցիոնալ բնույթ ստացավ 20-րդ դարի ընթացքում և

պատժամիջոցների ինստիտուցիոնալացման գործընթացը շարունակվում է մինչ օրս[29]:

Պատժամիջոցների կիրառումը նոր թափ և նոր որակ ստացավ Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո: Գիտական հայտնագործությունները և արդյունաբերական առաջընթացը փոխել էին ոչ միայն տնտեսության, այլև պատերազմի բնույթը: Ի հայտ էին եկել նոր՝ առավել ճշգրիտ և բարդ սպառազինություններ, ինչպիսիք էին տանկերը, ռազմանավերն ու սուզանավերը, իսկ աշխարհամարտի ավարտական փուլում ակներև էր օդային գերակայություն ունենալու կարևորությունը:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտի տարիներին պետության գոյատևումն ուղղակիորեն կախված էր պետության արդյունաբերական ներուժից, որի համար կենսական կարևորություն ուներ օգտակար հանածոների հասանելիությունը, ինչպիսիք են՝ երկաթը, նավթը, պղինձը և այլն[30]: Սակայն որևէ պետություն չուներ բնական հանածոների բավարար պաշարներ և չէր կարող առանց գիտատեխնիկական առաջընթացի փոխառությունների ապահովել սեփական տնտեսության առողջ զարգացումը: Ուստի, առաջ էր գալիս ռազմաքաղաքական և տնտեսական նոր դաշինքներ կազմելու անհրաժեշտություն: Ոչ պակաս կարևոր էր նաև պարենի և օգտակար հանածոների տեղափոխման համար ավտոճանապարհների և երկաթուղիների հասանելիությունը, որը կենսական նշանակություն ուներ: Մարգարեթ Դոքսին Առաջին աշխարհամարտում Գերմանիայի պարտությունը պայմանավորում է առաջին հերթին դաշնակիցների կողմից

[29] Տե՛ս Steve Chan, A. Cooper Drury, "Sanctions as Economic Statecraft: An Overview". Published by PALGRAVE Houndmills, Basingstoke, Hampshire, New York, 2000:

[30] Տե՛ս Margaret Doxey, "Economic Sanctions and International Enforcement", Second Edition, Royal Institute of International Affairs, 1980, p. 11:

արդյունավետ շրջափակմամբ, քանի որ վերջինիս հետևանքով, մի կողմից, թուլացել էր Գերմանիայի ռազմական ներուժը, մյուս կողմից, առաջ էր եկել ներհասարակական դժգոհություն, որն էլ ավելի էր խորացրել ներուժի մասնատումը:

Սակայն պատժամիջոցների միջազգային ինստիտուցիոնալիզացիան սկսվեց Առաջին աշխարհամարտից հետո միայն, երբ, Վերսալ-վաշինգտոնյան աշխարհակարգի շրջանակներում, դաշնակից պետությունների կողմից ստեղծվեց Ազգերի լիգան, որի գլխավոր նպատակն էր խաղաղության ապահովումը և պատերազմների կանխարգելումը:[31] Դեռևս 1919 թվականին Վուդրո Վիլսոնն Ազգերի լիգային է ներկայացնում բոյկոտի ամբողջական նախագիծ, որի միջոցով փակվելու էին հաղորդակցման ուղիները՝ ագրեսոր համարվող պետության քաղաքացիներին զրկելով առևտրով զբաղվելու հնարավորությունից: Վիլսոնը ոչ բռնի միջոցներով պայքարի ջատագով էր և կարծում էր, թե հնարավոր է պետությանը պարտության մատնել առանց ռազմական ուժի կիրառման: Ըստ Վիլսոնի՝ բոյկոտի ենթարկված պետությունը գտնվում է անձնատվության փուլում և տնտեսական հարկադրանքի հաջող կիրառման պարագայում, ուժի կիրառման կարիք չի լինի: Վիլսոնը պնդում էր, որ պատժամիջոցի կիրառումը նաև բոյկոտված պետությունից դուրս մարդկային կյանքի զոհաբերություն չի պահանջում, սակայն ճնշում է գործադրում այդ պետության ներսում՝ հանգեցնելով պետության անձնատուր լինելուն[32]: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Վիլսոնն այս հայտարարությամբ հանդես էր

[31] Տե՛ս League of Nations:
Հասանելի է՝ https://www.britannica.com/topic/League-of-Nations:

[32] Տե՛ս Hufbauer G. C., Schott J. J., and Elliot K. A., "Economic Sanctions Reconsidered: History and Current Policy", 2nd Edition, Washington, D.C.: Institute of International Economics, 1990, p. 9:

եկել Առաջին աշխարհամարտին հաջորդող ժամանակաշրջանում, երբ մարդկանց մոտ դեռևս առկա էր այն սարսափը, որն առաջացել էր պատերազմի մասշտաբների և արհավիրքների պատճառով: Այսպիսով, պատժամիջոցները Վիլսոնը դիտարկում էր իբրև կանխարգելիչ միջոց և այլընտրանք պատերազմին: Ըստ այս տրամաբանության՝ ժամանակին և արդարացիորեն կիրառվող պատժամիջոցներով հնարավոր էր կանխել ագրեսոր պետության հզորացումը: Այս դրույթն ամրագրվեց Ազգերի լիգայի կանոնադրության 16-րդ հոդվածում, որի անդամ բոլոր պետությունները պարտավորվում էին, նախ և առաջ, տնտեսական պատժամիջոցների կիրառմամբ ճնշել ագրեսոր պետությանը: Այսպիսով, առաջին անգամ միջազգային կառույցը լեգալացնում էր պատժամիջոցների կիրառումը:

Կարող ենք արձանագրել, որ Ազգերի լիգայում պատժամիջոցներն առաջին անգամ ստացան համակարգային բնույթ և սկսեցին օգտագործվել՝ պաշտպանելու միջազգային իրավունքը: Պատժամիջոցների ժամանակակից բնույթի հիմնադիրը ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնն է: Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ Ազգերի լիգան այնպիսի ունիվերսալ կառույց չէր, ինչպիսին ՄԱԿ-ն է այսօր: Ազգերի լիգային անդամակցում էին ավելի քիչ պետություններ, հետևապես՝ այս կառույցի սահմանած պատժամիջոցները չէին կարող այնպիսի ազդեցություն ունենալ, ինչպիսին այսօր կարող են ունենալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից սահմանված պատժամիջոցները:

Սակայն հարկ է նշել, որ վիլսոնյան բանաձևի հաջողման համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ ազգային, գաղափարական առանձնահատկությունները, տնտեսական ինքնաբավության աստիճանը, միջազգային հեղինակությունն ու ստեղծված միջազգային իրադրու-

թյունը: Երբեմն, պատժամիջոցների կիրառումը կարող է հակառակ ազդեցություն ունենալ և համախմբել պատժամիջոցներ ստացող պետության ուժերը՝ դիմակայելու այն մարտահրավերներին, որոնք ծագել են տվյալ պետության դեմ պատժամիջոցների կիրառման հետևանքով: Դեռևս 1941 թվականին՝ Փերլ Հարբոր նավահանգստի ռմբակոծությանը նախորդող ժամանակաշրջանում, ԱՄՆ-ն տնտեսական պատժամիջոցներ էր կիրառում Ճապոնիայի նկատմամբ՝ գրեթե արգելելով առևտուրը ճապոնացիների հետ և սառեցնելով ճապոնական ակտիվները: Պատժամիջոցներ էին սահմանվում ոչ միայն ամերիկյան, այլև օտարերկրյա այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք Ճապոնիա ռազմական կարևորության արտադրանք կտեղափոխեին: Փերլ Հարբորի վրա հարձակումից մեկ շաբաթ առաջ ԱՄՆ-ում Ճապոնիայի դեսպանն իր գործընկերոջը ասել էր. «Ճապոնացիները կարծում են, որ տնտեսական պատժամիջոցները պատերազմի ավելի արդյունավետ միջոց են, քան ռազմականը: Նրանք ենթարկվում են Միացյալ Նահանգների խիստ ճնշմանը՝ ամերիկյան դիրքերին զիջելու համար, սակայն նրանց համար գերադասելի է պատերազմելը, քան ենթարկվելը և զիջելը»[33]: Այսպիսով, պատերազմի կանխարգելմանը միտված պատժամիջոցների կիրառումը առիթ հանդիսացավ ԱՄՆ-ի դեմ ճապոնացիների ռազմական հարձակման համար[34]:

Դժվար է թերագնահատել տնտեսական պատժամիջոցների ազդեցությունը Երկրորդ աշխարհամարտի վերջնարդյունքի վրա: Ճապոնիայի և Գերմանիայի նկատմամբ ԽՍՀՄ-ի, ՄԲ-ի և ԱՄՆ-ի իրականացրած տնտեսական շրջափակման քաղաքա-

[33] Տե՛ս Zarate, Juan Carlos, "Treasury's War: The Unleashing of a New Era of Financial Warfare". 2013, published in the United States by Public Affairs, p. 5:

[34] Տե՛ս Daniel W. Drezner, "The Sanctions Paradox: Economic Statecraft and International Relations", Cambridge Studies in International Relations, 1999, p. 6:

կանությունն էականորեն թուլացրել էր թիրախում գտնվող պետությունների ռազմական ներուժը, քանի որ էապես սահմանափակվել էր ռազմաարդյունաբերության համար անհրաժեշտ նյութերի հասանելիությունը:

Գործնական հարցադրումներ

1. Պատմական տարբեր փուլերում տնտեսական պատժամիջոցները ինչպե՞ս են վերաճել միջազգային իրավունքի ու ինստիտուցիոնալ կառույցների գործիքների, և արդյո՞ք կարող ենք դրանք ընկալել որպես ուժի կիրառման այլընտրանք, թե՞ քաղաքական ճնշման նոր ձև:

2. Որո՞նք են այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են պատժամիջոցների արդյունավետությունը կամ անարդյունավետությունը, հատկապես հաշվի առնելով ազգային ինքնաբավությունը, միջազգային դաշնակցային ցանցերը և գաղափարական համախմբվածությունը:

3. Կարո՞ղ են արդյոք տնտեսական պատժամիջոցները խթանել ագրեսիվ քաղաքականություն կամ պատերազմ:

Լրացուցիչ գրականություն

1. Daniel W. Drezner, "The Sanctions Paradox: Economic Statecraft and International Relations", Cambridge Studies in International Relations, 1999.

2. Margaret Doxey, "Economic Sanctions and International Enforcement", Second Edition, Royal Institute of International Affairs, 1980.

3. Steve Chan, A. Cooper Drury, "Sanctions as Economic Statecraft: An Overview". Published by PALGRAVE Houndmills, Basingstoke, Hampshire, New York, 2000.

Թեմա 4. Պատժամիջոցները որպես միջազգային հարաբերությունների լեգիտիմ գործիք

Պատժամիջոցների կիրառումը՝ որպես միջազգային հարաբերությունների լեգիտիմ գործիք, ինստիտուցիոնալացվեց միայն 1945 թվականին, երբ ստեղծվեց ՄԱԿ-ը, իսկ պատժամիջոցները՝ որպես միջազգային քաղաքականության գործիք, ստացան իրենց վերջնական տեսքը՝ ամրագրվելով ՄԱԿ-ի կանոնադրությամբ: ՄԱԿ-ի անդամ են աշխարհի գրեթե բոլոր ճանաչված պետությունները, որոնք ընդունում են վերջինիս կանոնադրությունը: Վերջինում էլ ամրագրված է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից պատժամիջոցներ կիրառելու իրավունքը: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ Անվտանգության խորհուրդն օբյեկտի նկատմամբ կարող է պատժամիջոցներ սահմանել միայն այն դեպքում, երբ ՄԱԿ-ի մշտական հինգ անդամից (ԱՄՆ, ՄԲ, Ֆրանսիա, ՌԴ, ՉԺՀ) ոչ մեկը դեմ չի քվեարկել տվյալ նախագծին[35]: ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածով պատժամիջոցների կիրառումը ստացավ նաև միջազգային լեգիտիմ գործիքի կարգավիճակ: Ըստ նշյալ հոդվածի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ստացավ լիազորություն որոշելու, թե զինուժից զատ այլ ի՞նչ միջոցների կարող է դիմել որոշումներն ի կատար ածելու համար: Դրանք կարող են ընդգրկել «տնտեսական հարաբերությունների, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, ռադիո և հաղորդակցության այլ ձևերի լիակատար կամ մասնակի ընդհատումը և դիվանագիտական հարաբերությունների խզումը»: Այսպիսով, առաջին անգամ

[35] Տե՛ս Charter of the United Nations, Chapter V, հասանելի է՝ http://www.un.org/en/sections/uncharter/chapter-v/index.html. (Accessed: 02.03.2018):

միջազգային կազմակերպության կողմից, որին անդամակցում էին միջազգային ճանաչում ունեցող գրեթե բոլոր պետությունները, պատժամիջոցները ստացան Հիմնավորման միջազգային օրինականացում ագրեսիան կանխարգելելու կամ կանգնեցնելու համար:

Քաղաքական պատմության իմաստով ՄԱԿ-ի կողմից պատժամիջոցների կիրառումը կարող ենք բաժանել երկու հիմնական ենթափուլի՝ առաջին ենթափուլը ներառում էր սառը պատերազմի շրջանը՝ 1945 թվականից մինչև 1990-ականների սկիզբը: Ինչպես արդեն նշվեց, ըստ ՄԱԿ-ի կանոնադրության, ԱԽ մշտական անդամ պետությունները պետք է ունենան որոշումների կայացման կոնսենսուս, այդ թվում՝ պատժամիջոցների սահմանման համար: Սառը պատերազմի շրջանում ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև դժվար էր պատկերացնել կոնսենսուս: Հատկանշական է, որ այս շրջանում ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից ընդամենը երկու անգամ են պատժամիջոցներ սահմանվել՝ 1966 թվականին՝ Ռոդեզիայի դեմ և 1977 թվականին ՀԱՀ-ի դեմ:[36] Տվյալ պարագայում պատժամիջոցների կիրառման պատճառը ռասայական խտրականությունն էր՝ իշխանության ապարտեիդ ռեժիմը, որը հակասում էր թե՛ խորհրդային, թե՛ արևմտյան ճամբարների պաշտոնական գաղափարախոսությանը:

Սառը պատերազմի ժամանակաշրջանին առավել բնորոշ էր երկկողմանի պատժամիջոցների կիրառումը, քանի որ մրցակցող հիմնական ճամբարները չէին կարող ՄԱԿ-ի միջոցով ինչպես միմյանց, այնպես էլ դաշնակիցների նկատմամբ սահմանել պատժամիջոցներ: Նման պատժամիջոց էր, 1948 թվականից

[36] Տե՛ս Cortright D., and Lopez G. A., "Learning from Sanctions Decade", Summer 2000, p. 1:
Հասանելի է՝ URL: https://www.globalpolicy.org/global-taxes/49076-learning-from-the-sanctionsdecade.html (Accessed: 04.03.2018)

սկսած, Արևմտյան Բեռլինի շրջափակումը ԽՍՀՄ-ի կողմից կամ Աֆղանստանում ԽՍՀՄ գործողությունների պատճառով Արևմուտքի սահմանած պատժամիջոցները[37]: Սակայն սառը պատերազմի ժամանակաշրջանում առաջանում էին տնտեսական ներուժ ունեցող այլ բևեռներ ևս, որոնք տնտեսական պատժամիջոցների միջոցով փորձում էին իրենց քաղաքական օրակարգը առաջ տանել: Օրինակ՝ 1973 թվականի արաբա-իսրայելական պատերազմից հետո Արաբական Լիգայի անդամ պետություններն արհեստականորեն թանկացրին նավթի գինը, որի նպատակն էր ստիպել ԱՄՆ-ին հրաժարվել Իսրայելին աջակցելուց[38]: Միաժամանակ, Արաբական լիգայի անդամ պետությունները համընդհանուր բոյկոտ հայտարարեցին Իսրայելին: Այդ պատժամիջոցները կրում էին ինստիտուցիոնալ բնույթ. Դամասկոսում բացվեց բոյկոտի գրասենյակ և նշանակվեց հանձնակատար: Արաբական պետություններն արգելում էին ցանկացած ապրանքի արտահանում և ներմուծում, արգելում էին իրենց պետությունների տարածքով դեպի Իսրայել տարանցումը և հրաժարվում էին համագործակցել այն կազմակերպությունների հետ, որոնք համագործակցում էին Իսրայելի հետ[39]: Բոյկոտն ավարտվեց 1979 թվականին Իսրայելի և Եգիպտոսի միջև կնքված հաշտության պայմանագրով:

[37] Տե՛ս Brandsma, Andries S., and A. J. Hughes Hallett. "Do Economic Sanctions against the Soviet Union Make Sense?" *Interfaces*, vol. 14, No. 4, 1984, pp. 53–68:
[38] Տե՛ս Frank Verasto, "The Arab Oil Embargo - 40 Years Later", October 16, 2013, Center for Strategic and International Studies:
Հասանելի է՝ https://www.csis.org/analysis/arab-oil-embargo%E2%80%9440-years-later
[39] Տե՛ս Nancy Turck, "The Middle East: The Arab Boycott of Israel", 1977:
Հասանելի է՝ https://www.foreignaffairs.com/articles/middle-east/1977-04-01/middle-east-arab-boycott-israel

Նավթի գնի բարձրացումը նաև զգալի հարված հասցրեց ԱՄՆ-ի տնտեսությանը, մյուս կողմից՝ այն նշանակալի աջակցություն էր ԽՍՀՄ-ին, որի տնտեսությունը շահեց նավթի բարձր գներով արդյունահանումից: Սակայն երկարաժամկետ հեռանկարում գուցեև նավթի գների բարձրացումը կործանարար հետևանք ունեցավ ԽՍՀՄ-ի համար, քանի որ նավթի արդյունահանման պատճառով ԽՍՀՄ-ը չիրականացրեց տնտեսական բարեփոխումներ, որի հետևանքով էլ տանուլ տվեց տնտեսական մրցակցությունը:

Տնտեսական և տեխնոլոգիական գերակայությունը ԱՄՆ-ին հնարավորություն էր տալիս առավել արդյունավետ օգտագործել պատժամիջոցները՝ որպես ճնշման միջոց: Միաժամանակ հենց ԱՄՆ-ն էր, որ նախաձեռնում էր պատժամիջոցների բյուրոկրատական ինստիտուցիոնալիզացիան թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում: 1946 Ջորջ Քենանի հեղինակած «Երկար նամակը»[40], իսկ հետագայում նաև «Թրումանի դոկտրինը»[41], որոնք միտված էին ԽՍՀՄ-ի նկատմամբ վարելու «զսպման քաղաքականություն» ստեղծում էին քաղաքական նախադրյալներ ԱՄՆ-ում պատժամիջոցների ինստիտուցիոնալացման համար: Իսկ արդեն 1949 թվականին ընդունված «Արտահանման վերահսկողության» և 1951 թվականին ընդունված «Փոխադարձ պաշտպանության աջակցության» ակտերով ԱՄՆ-ն արգելում էր սոցիալիստական ճամբարում գտնվող պետությունների հետ ռազմավարական ապրանքների առևտուրը և սպառնում էր դադարեցնել օգնության տրամադրումն այն պետություններին, որոնք չէին հետևի ԱՄՆ-ի կողմից սահմանվող սահմա-

[40] Տե՛ս George Kennan's 'Long Telegram', February 22, 1946:
Հասանելի է՝ https://digitalarchive.wilsoncenter.org/document/116178.pdf
[41] Տե՛ս The Truman Doctrine, 1947:
Հասանելի է՝ https://history.state.gov/milestones/1945-1952/truman-doctrine

նափակման կանոններին: Այսպիսով, ԱՄՆ-ն փաստացի ամրագրեց նաև երկրորդային պատժամիջոցների կիրառման մեխանիզմը:

1950 թվականին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց ռազմավարական ապրանքատեսակների արտահանումը դեպի ԽՍՀՄ արգելող խորհրդակցական կոմիտեն (COCOM), որին անդամակցում էին ՆԱՏՕ-ի անդամ երկրները՝ բացի Իսլանդիայից: Կոմիտեն կազմալուծվեց միայն 1994 թվականին: ԱՄՆ-ը նմանատիպ կոմիտե հիմնեց նաև Հեռավոր Արևելքում (CHINCOM), որի նպատակն էր Չինաստանի և Հյուսիսային Կորեայի դեմ պատժամիջոցների կոորդինացումը (CHINCOM)[42]:

Անշուշտ, ԱՄՆ-ի կողմից կիրառվող պատժամիջոցները, որոնք միտված էին ԽՍՀՄ-ի և սոցիալիստական ճամբարի մյուս պետությունների ինչպես տնտեսական, այնպես էլ տեխնոլոգիական զարգացումը կասեցնելուն, իրենց ազդեցությունն ունեին ԽՍՀՄ տնտեսության հետընթացի վրա: Սակայն ըստ Ի. Տիմոֆեևի՝ ԽՍՀՄ-ը յուրօրինակ պետություն էր, որն ուներ ռեսուրսային ինքնաբավություն և կարող էր հաղթահարել պատժամիջոցները: Սառը պատերազմում ԽՍՀՄ-ի պարտության հիմնական պատճառը ինքնակործան քաղաքականությունն էր այլ ոչ թե պատժամիջոցները:

Սառը պատերազմի ավարտով սկզբնավորվեց նաև նոր՝ միաբևեռ, աշխարհակարգը[43]: Փոփոխության էր ենթարկվում նաև պատժամիջոցների քաղաքականությունը: Մասնագիտական գրականության մեջ որոշ հեղինակներ 1990-2000 թվականներն անվանում են նաև պատժամիջոցների տասնամյակ:[44] ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1994 թվականին 7 անգամ պատժամիջոցներ է սահմանել, այնինչ իր գոյության նախկին 45 տարիների ընթացքում ընդամենը 2 անգամ էր պատժամիջոց սահմանել:

ԱՄՆ-ը 1992-1996 թթ. 60 անգամ տնտեսական պատժամիջոցներ է կիրառել կամ սպառնացել կիրառել 35 պետությունների դեմ, որոնք ներառում են համաշխարհային բնակչության 42 տոկոսը:[45] Այս ժամանակաշրջանում ԱՄՆ-ի սահմանած մեծաքանակ պատժամիջոցների կիրառումը պայմանավորված էր երկբևեռ աշխարհակարգի տապալումով, քանի որ անհետացել էր «սև ասպետը», որը ի զորու կլիներ աջակցել պատժամիջոցների թիրախում հայտնված պետություններին և դարձնել նրանց իր դաշնակիցը: Երկրորդ հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ համաշխարհային տնտեսության գլոբալիզացիան աշխարհակարգի կենտրոնում գտնվող պետությունների համար պատժամիջոցները դարձրեց հարմար գործիք: Ըստ Ի. Տիմոֆեևի՝ պատժամիջոցները դարձել էին անհամաչափ ուժի կիրառման մեթոդ, այն իմաստով, որ համաշխարհային հեգեմոնը կարող էր արդյունավետորեն կիրառել պատժամիջոցներ մի շարք պետությունների դեմ՝ առանց համաչափ պատասխանից կամ կորուստներից վախենալու:[46] Կարևոր գործոն է նաև այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն գտնվում է համաշխարհային ֆինանսական համակարգի կենտրոնում, որն առավել լայն գործիքակազմ է տրամադրում ԱՄՆ-ին՝ կիրառելու իր համար «անվնաս» պատ-

[42] Տե՛ս Margaret Doxey, "Economic Sanctions and International Enforcement", Second Edition, Royal Institute of International Affairs, 1980, p. 19:

[43] Թեմայի մասին առավել մանրամասն տե՛ս Francis Fukuyama, "The End of History and the Last Man", New York: The Free Press, 1992:

[44] Տե՛ս David Cortright and George A. Lopez, "The Sanctions Decade: Assessing UN Strategies in the 1990s", June 15, 2000:

[45] Տե՛ս Drezner, Daniel W. "Serious About Sanctions." *The National Interest*, No. 53, 1998, pp. 66-74:

[46] Տե՛ս Иван Тимофеев «Экономические санкции как политическое понятие», интернет портал СНГ, 23 июня 2018 г., https://e-cis.info/news/566/62494/:

ժամիջոցներ: Այսպիսով, պատժամիջոցներն անդառնալիորեն իրենց տեղն էին զբաղեցրել ԱՄՆ արտաքին քաղաքականության առանցքում:

Հատկանշական է, որ 1990-2000 թթ. ընթացքում միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կիրառել է ավելի քան 30 մասնավոր և համընդհանուր պատժամիջոց՝ Իրաքի դեմ՝ 1990 թվականին, Հարավսլավիայի դեմ՝ 1991, 1992 և 1998 թվականներին, Սոմալիի դեմ՝ 1992 թվականին, Ռուանդայի դեմ՝ 1994 թվականին, Սուդանի դեմ՝ 1996 թվականին, Աֆղանստանի դեմ՝ 1999 թվականին և այլն: Սակայն, կիրառած պատժամիջոցները, երբեմն, ոչ միայն չէին հասնում իրենց նպատակին, այլև հանգեցնում էին հումանիտար աղետի: Մասնավորապես՝ 1990 թվականի հակաիրաքյան պատժամիջոցները, թեև որոշակիորեն թուլացնում են Իրաքի ռազմաքաղաքական կարողությունները, բայց և անդառնալի ազդեցություն են թողնում խաղաղ բնակչության վրա: Այս շրջանում պատժամիջոցներից ավելի շատ տուժում էին շարքային քաղաքացիները, մինչդեռ էլիտան շարունակում էր ապրել շքեղության մեջ: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ բռնատիրական նման պետություններում հակաիշխանական ցանկացած ընդվզում դատապարտված էր արյունալի վախճանի: Սա էր հիմնական պատճառը, որ ՄԱԿ-ը սկսեց մշակել պատժամիջոցային նոր մեխանիզմներ, որոնց միջոցով բարձրացվելու էր պատժամիջոցների արդյունավետությունն ու նվազելու էր պատժամիջոցների ենթարկվող հումանիտար աղետների հնարավորությունը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի սահմանած պատժամիջոցների մանրամասն մշակման և կիրառման նպատակով համապատասխան բանաձևերի հիման վրա ստեղծվում են մասնագիտական կոմիտեներ:[47]

[47] Տե՛ս ՄԱԿ-ի պաշտոնական կայքը, Sanctions and Other Committees:

ՀՊատժամիջոցները տնտեսապես ուժեղ պետությունների և դաշինքների արտաքին քաղաքականության առանցքային գործիք են, ինչպիսիք են ԱՄՆ-ն և ԵՄ-ն: Սակայն, ի տարբերություն ԱՄՆ-ի, ԵՄ-ն չունի միասնական ռազմական ուժեր և ԵՄ-ի արտաքին քաղաքականության առանցքում փափուկ ուժն ու պատժամիջոցներն են դրված և, ըստ էության, պատժամիջոցների գործածումը կատարում է ԵՄ արտաքին քաղաքականության մտրակի դերը: Դեռևս 2003 թվական ԵՄ խորհուրդն ընդունել է պատժամիջոցների կիրառման ուղեցույց, որը նկարագրում էր պատժամիջոցների սահմանման ընդհանուր սկզբունքները: Միաժամանակ, պատժամիջոցների քաղաքականության մշակման և կիրառման արդյունավետության գնահատման համար ստեղծվել էր արտաքին հարաբերությունների խորհրդատուների աշխատանքային խումբ (RELEX): ԵՄ-ում պատժամիջոցների ընդունման, երկարաձգման կամ չեղարկման մասին որոշումները կայացնում է Եվրոպական միության խորհուրդը՝ Միության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության գերագույն հանձնակատարի առաջարկությունների հիման վրա: Իսկ Եվրոպական հանձնաժողովն էլ, իր հերթին, վերահսկում է ԵՄ անդամ պետությունների կողմից պատժամիջոցների կիրառմանը:

Ի տարբերություն ԱՄՆ-ի ԵՄ պատժամիջոցային քաղաքականությունը շատ ավելի մեղմ է, պատժամիջոցներ կիրառելու որոշման կայացումն առավել թափանցիկ: Ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ նախագահը կարող է կայացնել պատժամիջոցների կիրառման որոշում, ԵՄ-ում պատժամիջոցներ կիրառվում են միայն Եվրախորհրդարանի համապատասխան բանաձևի հի-

Հասանելի է՝ https://www.un.org/securitycouncil/content/repertoire/sanctions-and-other-committees

ման վրա, որն էլ, իր հերթին, ներկայացվում է ԵՄ արտաքին քաղաքականության հարցերով գլխավոր հանձնակատարի կամ Եվրոպական հանձնաժողովի կողմից: Կարևոր է, սակայն ընդգծել այն հանգամանքը, որ ի տարբերություն ԱՄՆ-ի՝ որտեղ նահանգները չունեն ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու, այդ թվում՝ պատժամիջոցներ կիրառելու իրավասություն, ԵՄ անդամ պետություններն ունեն ինքնուրույն պատժամիջոցներ սահմանելու և կիրառելու իրավունք, իսկ անդամ մի շարք պետություններ պատժամիջոցներին տվել են ինստիտուցիոնալ բնույթ՝ ամրագրելով այն ազգային օրենսդրության շրջանակներում:

Վերջին տասնամյակի ընթացքում, բացի արևմտյան տնտեսական գերտերություններից՝ ԱՄՆ-ից և ԵՄ-ից, պատժամիջոցներ կամ հակապատժամիջոցներ են կիրառում նաև ՌԴ-ն և Չինաստանը: Սակայն, քանի որ պատժամիջոցների քաղաքականությունը դեռ այդ պետությունների արտաքին քաղաքականության անկյունաքարային մեխանիզմ չէ, պատժամիջոցները դեռևս պատշաճ կերպով չեն ինստիտուցիոնալացվել և պատժամիջոցների կիրառման իրավական հիմքը դեռևս դրված չէ: Ավելին, հաճախ փաստացի պատժամիջոց հանդիսացող սահմանափակումները, օրինակ՝ լոլիկի ներմուծումը կամ թռիչքների չեղարկումը, մեկնաբանվում են որպես սանիտարական և համաճարակաբանական անհրաժեշտություն: Ի տարբերություն ԵՄ պատժամիջոցների, ռուսական սահմանափակումները կատարվում են առանց ավելորդ քաղաքական աղմուկի, սահմանափակումների վերացումը ևս կատարվում է նույն մեխանիզմով:

Այսպիսով, քաղաքական մշակույթից և իշխանության բնույթից ելնելով՝ պետությունները կարող են պատժամիջոցների տարբեր մեխանիզմներ կիրառել միևնույն քաղաքական նպատակին հասնելու համար: Պատժամիջոցների կիրառման նպատակներին առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

Գործնական հարցադրումներ

1. Ինչպե՞ս է ՄԱԿ-ի ստեղծումը փոխել պատժամիջոցների կիրառման լեգիտիմության և ինստիտուցիոնալացման տրամաբանությունը՝ համեմատած սառը պատերազմի նախորդ շրջանի հետ:

2. Որո՞նք են ԱՄՆ-ի և ԵՄ-ի պատժամիջոցային քաղաքականությունների հիմնական տարբերությունները՝ մեխանիզմների, իրավական շրջանակների և քաղաքական մշակույթի տեսանկյունից:

3. Ի՞նչ մարտահրավերներ են առաջանում պատժամիջոցների կիրառման դեպքում, երբ դրանք ունեն հումանիտար բացասական հետևանքներ, և ի՞նչ լուծումներ են մշակվել միջազգային մակարդակում այդ խնդիրները մեղմելու համար:

4. Ինչպե՞ս են քաղաքական, տնտեսական և մշակութային գործոնները ձևավորում ոչ արևմտյան պետությունների (օրինակ՝ Ռուսաստանի և Չինաստանի) պատժամիջոցային վարքագիծը և իրավական հենքը:

Լրացուցիչ գրականություն

1. David Cortright and George A. Lopez, "The Sanctions Decade: Assessing UN Strategies in the 1990s", June 15, 2000.

2. Drezner, Daniel W., "Serious About Sanctions." The National Interest, No. 53, 1998, pp. 66–74.

3. David Cortright and George A. Lopez, "Are Sanctions Just? The Problematic Case of Iraq", Journal of International Affairs 52, No. 2 (spring 1999).

Թեմա 5. Ժամանակակից միջպետական հարաբերություններում պատժամիջոցների կիրառման նպատակները

Պատժամիջոցների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է ճիշտ հասկանալ ինչպես պատժամիջոցի կիրառման պաշտոնական, այնպես էլ իրական քաղաքական նպատակը: Միջազգային հարաբերությունների լիբերալ-լեգալիստական տեսաբաններն առավել հակված են պատժամիջոցների կիրառման նպատակները նույնացնել քրեական իրավունքում գործածվող պատժի նպատակների հետ՝ մեկուսացում, զսպում, վնասի փոխհատուցում և արդարության վերականգնում[48]: Սակայն պատժի կիրառումը ինչպես միջազգային հարաբերություններում, այնպես էլ քրեական իրավունքում չի երաշխավորում պատժամիջոցի օբյեկտ հանդիսացող անձի կամ պետության ենթարկվելն օրենքին: Այս առիթով Յ. Գալթունգը նշում էր. «Պատժամիջոցների կիրառումը հաճախ կարող է ունենալ այնպիսի ազդեցություն, ինչպիսին է հանցագործներին փողոցներից հեռացնելն ու բանտերում մեկուսացնելը, որի արդյունքում նրանց կատարած հանցանքներն առավել քիչ ազդեցություն են ունենում աշխարհի վրա, սակայն նրանք չեն դառնում առավել օրինապահ»[49]: Գալթունգը պատժամիջոցների արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ էր համարում թիրախ պետության քաղաքականության, վարքագծի կամ իշխող վարչակարգի

[48] Տե՛ս Elena Maculan, Alicia Gil Gil, "The Rationale and Purposes of Criminal Law and Punishment in Transitional Contexts", Oxford Journal of Legal Studies, Vol. 40, Is. 1, March 2020, pp. 132–157:

[49] Johan Galtung, "On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia", World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), p. 380. Published by Cambridge University Press.

փոփոխությունը: Ըստ էության, վերոնշյալ երկու մոտեցումները ոչ թե միմյանց հակասող, այլև միմյանց փոխլրացնող են և պնդում են, որ պատժամիջոցների կիրառումը նպատակաուղղված է օբյեկտի օրինախախտ վարքագծի վրա ազդեցություն ունենալուն:

Սկզբունքորեն համաձայնելով այս մոտեցումներին՝ համարում ենք, որ դրանք, այնուամենայնիվ, ամբողջապես չեն արտացոլում պատժամիջոցների կիրառման էությունը: Կարծում ենք, որ միջազգային իրավունքի վերականգնման նպատակը գերակա է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից կիրառման պարագայում, քանի որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից պատժամիջոցների կիրառման համար անհրաժեշտ է քաղաքական կոնսեսուսի ձևավորում Անվտանգության խորհրդի մշտական հինգ անդամների միջև: Իսկ առանձին պետությունների կողմից պատժամիջոցների կիրառման արդյունավետության գնահատումը շատ ավելի բարդ է, քանզի նրանց կողմից պատժամիջոցների կիրառման նպատակները շատ ավելի լայն կարող են լինել, քան նշվում է հեղինակների կողմից: Այս պետությունների միջև առկա մրցակցությունն ու տարաձայնությունները հաճախ խոչընդոտում կամ արգելակում են ՄԱԿ-ի կողմից պատժամիջոցների կիրառումը և պատժամիջոցներ կիրառելու շուրջ կարողանում են ձևավորել կոնսենսուս միայն այն պարագայում, երբ իսկապես առերեսվում են մարդկանց հիմնարար իրավունքների խախտմանը, ինչպիսիք են՝ ռասիզմը, ահաբեկչությունը, միջուկային զենքի տարածումը: Ուստի՝ հակված ենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից կիրառվող պատժամիջոցները կապել միայն պաշտոնական նպատակների հետ, ինչպիսիք են հետևյալ հանցագործությունների կանխարգելումը՝

- Ահաբեկչության և ահաբեկչության աջակցման,

- Միջուկային սպառազինության տարածման,
- Մարդկության դեմ հանցագործությունների,
- Մարդու իրավունքների խախտումների,
- Այլ պետությունների տարածքի ապօրինի բռնակցման,
- Ինքնիշխան պետության դիտավորյալ ապակայունացման:[50]

Պատժամիջոցների կիրառման վերոնշյալ հիմքերը ևս սուբյեկտիվ մեկնաբանությունների հիմք են, իսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ երկրները, երբեմն, վերոնշյալ խախտումների հեղինակ են լինում: Սակայն, օգտվելով իրենց վետո կիրառելու իրավունքից, նրանք կասեցնում են կազմակերպության կողմից պատժամիջոցների կիրառման փորձերն իրենց նկատմամբ, իսկ ԱԽ-ի կողմից պատժամիջոցները կիրառվում են այնպիսի պետությունների նկատմամբ, ինչպիսիք են՝ Սուդանը, Եմենը, Մալին և այլն: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն առանձին պետությունների կողմից կիրառվող միակողմանի պատժամիջոցների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից կիրառվող պատժամիջոցներն ունեն հետևյալ նպատակները՝ հարկադրել պատժամիջոցների թիրախ պետությանը փոխել իր կողմից իրականացվող քաղաքականությունը, զսպել հնարավոր ագրեսիան և ցույց տալ թիրախ պետությանը, որ նրա գործողություններն ընդունելի չեն միջազգային հանրության համար, քանի որ ՄԱԿ-ը միակ միջազգային կազմակերպությունն է, որն ունի լեգիտիմություն «միջազգային հանրության» անունից պատժամիջոցներ կիրառելու համար: Վերջինը պայմանավորված է նրանով, որ աշխարհի գրեթե բոլոր ճանաչված պետություններն անդամակցում են ՄԱԿ-ին և ընդունել են

[50] Տե՛ս Issue Brief UN General Assembly Fourth Committee: "Disarmament: The Role of the Sanctions in Diplomacy" ODUMUNC 2020, p. 2:

նրա կանոնադրությունը՝ այդպիսով լեգիտիմությամբ օժտելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից կիրառվող պատժամիջոցները: Մինչդեռ առանձին պետությունների կողմից կիրառվող պատժամիջոցների տրամաբանությունն ու նպատակներն ավելի բազմաշերտ և բազմաբովանդակ են, իսկ նպատակները առաջին հերթին՝ քաղաքական:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում պատժամիջոցների կիրառումը կարելի է դիտարկել Կարլ Կլաուզևիցի հայտնի սկզբունքի համաձայն՝ «պատերազմը քաղաքականության շարունակություն է այլ միջոցներով»[51]: Տվյալ պարագայում պատժամիջոցներն են քաղաքականության շարունակության վերոնշյալ այլ մեթոդը: Անհրաժեշտ ենք համարում պարզաբանել նաև, որ մյուս միջազգային կազմակերպությունները՝ ռազմական, քաղաքական կամ տնտեսական միություններին և դաշինքներին հակված ենք համարելու պատժամիջոցներ կիրառող առանձին սուբյեկտներ, որոնց հետաքրքրությունները համազոր ենք համարում առանձին պետությունների կողմից կիրառվող պատժամիջոցներին: Այսպիսով, գտնում ենք, որ նրանց կողմից կիրառվող պատժամիջոցների տրամաբանությունն անհրաժեշտ է դիտարկել առանձին պետությունների կողմից կիրառվող պատժամիջոցների տրամաբանության շրջանակում:

Առանձին պետությունները հաճախ պաշտոնապես պայմանավորում են պատժամիջոցների կիրառումը նույն հիմքերով, որոնցով այն պաշտոնապես պայմանավորվում է ՄԱԿ-ի կողմից՝ պաշտպանելու միջազգային իրավունքը: Սակայն, ի տարբերություն ՄԱԿ-ի, առանձին պետությունների կողմից պատժամիջոցների կիրառումն առավել հաճախ ունենում է սեփական շահերը պաշտպանելու քաղաքական նպատակներ: Այդ նպատակները

[51] Տե՛ս Carl von Clausewitz, "On War", Oxford University Press, p. 252:

բազմաշերտ են, կարող են ունենալ և՛ արտաքին քաղաքական, և՛ ներքաղաքական դրդապատճառներ: Ուստի՝ անհրաժեշտ է ընդգծել, որ պատժամիջոցների կիրառումը միտված է ոչ միայն միջազգային իրավունքի պահպանմանը, այլև պետությունների քաղաքական շահերի պաշտպանության գործիք է:

Պատժամիջոցների կիրառման ոչ պաշտոնական՝ արտաքին քաղաքական կարևորագույն նպատակներից է թիրախ-պետության *զսպումը* ռազմական և տնտեսական կարողությունների թուլացման միջոցով: Սառը պատերազմի ժամանակաշրջանում ԱՄՆ-ը տեխնոլոգիաների վաճառքի և մատակարարման պատժամիջոցներ էր սահմանել Խորհրդային Միության նկատմամբ, որն էականորեն նպաստում էր տեխնոլոգիական մրցավազքում վերջինիս պարտությանը և տնտեսական հետընթացին:[52] Պատժամիջոցները ԱՄՆ-ի *զսպման* քաղաքականության կարևորագույն մասն էին: Այժմ ևս պատժամիջոցները զսպման քաղաքականության ամենատարածված գործիքներից մեկն են:

Պատժամիջոցներ կիրառող պետության համար կարևոր քաղաքական նպատակ կարող է լինել թիրախ պետության քաղաքական իշխանության կամ *քաղաքական համակարգի փոփոխությունը*[53]: Այս նպատակով պատժամիջոցների կիրառումը բնորոշ էր հատկապես սառըպատերազմյան ժամանակաշրջանին, երբ ԽՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը փորձում էին պատժամիջոցների միջոցով նպաստել հակառակորդ ճամբարի պետություններում տնտեսական իրավիճակի վատթարացմանը, ցանկանալով հեղափոխությունների և քաղաքական կացութաձևի փոփոխության միջոցով թուլացնել հակառակորդի ճամբարի դաշնակցային կապերը և ընդլայնել սեփական դաշնակիցների թիվը: Քաղաքական համակարգի փոփոխությանը միտված պատժամիջոցների կիրառման առավել հայտնի դեպքերից են ՀԱՀ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, որոնց արդյունքում փոխվեց ռասայական խտրականության հիմքով ստեղծված քաղաքական համակարգը: Ժամանակակից միջազգային հարաբերություններում ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցներն օգտագործվում են որպես ժողովրդավարացման գործիք: Նրանք պատժամիջոցներ են կիրառում ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգերով պետությունների և այնտեղ գործող քաղաքական գործիչների նկատմամբ: Օրինակ՝ պատժամիջոցների սպառնալիքի միջոցով ԱՄՆ-ն և ԵՄ-ն փորձում են ավտորիտար համակարգ ունեցող պետություններում թուլացնել ճնշումը ազատ մամուլի նկատմամբ, ձևավորել քաղաքացիական հասարակություն, որն էլ, իր հերթին, պետք է հանգեցնի քաղաքական համակարգի փոփոխության: Ինչպես նշում է ռուս հետազոտող Իվան Տիմոֆեևը, ժողովրդավարացման խթանումն ամերիկյան արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է, իսկ պատժամիջոցները նպատակին հասնելու գործիքներից են:

Միջազգային և անվտանգության հարցերի գերմանական ինստիտուտի՝ ամերիկյան հետազոտությունների ղեկավար դոկտոր Պիտեր Ռուդոլֆը առանձնացնում է համակարգի փոփոխությանը միտված պատժամիջոցների կիրառման պլուրալիստական մոդելը: Այս մոդելը ենթադրում է պատժամիջոցների կիրառում թիրախավորված խմբերի նկատմամբ, որի միջոցով հնարավոր է հասնել թիրախ պետության քաղաքական համակարգի փոփոխության: Ըստ հեղինակի՝ պատժամիջոցներ կիրառելով

---

[52] Տե՛ս Роберт Блэквилл, Дженнифер М. Харрис, «Война иными средствами», Переводчик: Королев Кирилл Михайлович, Издание на русском языке. AST Publishers, 2017, с. 254:

[53] Տե՛ս Gary Clyde Hufbauer, Jeffrey J. Schott Kimberly, Ann Elliott Barbara Oegg, "Economic Sanctions Reconsidered", Third Edition, Washington, DC, November 2007, p. 13:

քաղաքական էլիտայի և նրան աջակցող հասարակական խմբերի նկատմամբ՝ հնարավոր է հասնել ցանկալի զիջումների և քաղաքական փոփոխությունների: Հեղինակը կարծում է նաև, որ պատժամիջոցները կարող են նաև հաջողություն բերել, եթե նրանք թիրախավորում են հասարակության մեջ կշիռ ունեցող, տնտեսապես ակտիվ և ազդեցիկ խմբերին, որոնք քաղաքական ակտիվություն չեն ցուցաբերում[54]: Նշված տրամաբանության համաձայն, պատժամիջոցների պատճառած տնտեսական վնասները կարող են ստիպել ազդեցիկ խմբերի ներկայացուցիչներին ճնշում բանեցնել որոշում ընդունողների վրա կամ ձևավորել ընդդիմադիր բևեռ՝ թուլացնելով իշխող համակարգի դիմադրողականությունը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ չի կարող քաղաքական համակարգի փոփոխություն կամ իշխանափոխություն տեղի ունենալ միայն պատժամիջոցների կիրառման արդյունքում: Եթե պետությունում առկա են իշխանափոխության միտումներ, ապա պատժամիջոցների առաջացրած սոցիալական բողոքը կարող է արագացնել արդեն ընթացող գործընթացը, իսկ նման միտումների բացակայության պարագայում պատժամիջոցները կարող են հակառակ ազդեցությունն ունենալ և իշխանությունների շուրջը համախմբել թիրախ հանդիսացող պետության հասարակությանը:

Պատժամիջոցների կիրառումը հաճախ պայմանավորված է լինում պետության ներսում առկա *հասարակական պահանջի* բավարարմամբ, որի միջոցով իշխող քաղաքական ուժը փորձում է քաղաքական դիվիդենտներ շահել: Այս պարագայում պատժամիջոցների էությունը նրա կիրառման մեջ է և ոչ թե թիրախ պետությանը հասցված վնասի: Պատժամիջոցներ կիրառող պետության իշխանությունն այդպիսով փորձում է ցույց տալ սեփական հասարակությանն իր վճռականությունը և այդ կերպ մեղմել անգործություն ցուցաբերելու մասին ընդդիմադիրների մեղադրանքները: Ըստ Ալեքսանդր Կերնի, պետությունները կիրառում են պատժամիջոցներ ոչ միայն ազգային անվտանգությունն ամրացնելու և միջազգային հարաբերություններում ազդեցության տարածման նպատակով, այլև պատժամիջոցների կիրառմամբ լուծում են սեփական ներքաղաքական խնդիրները և տնտեսական ճնշումները[55]:

Պատժամիջոցների կիրառող կողմը նաև փորձում է *ազդանշան* տալ այլ պետություններին, որ նմանատիպ գործունեության դեպքում իրենք ևս կարող են հայտնվել պատժամիջոցների ենթարկվող երկրների ցանկում: Պատժամիջոցների նպատակ է նաև *հեղինակության վնաս* պատճառելու միջոցով թուլացնել հակառակորդ պետության տնտեսական և քաղաքական դիրքերը: Պատժամիջոցների կիրառման ևս մեկ քաղաքական և տնտեսական պատճառ կարող է լինել *պրոտեկցիոնիզմի* քաղաքականության իրականացումը: Միջազգային պարտավորություններից ելնելով՝ պետությունները, երբեմն, չեն կարող պաշտոնապես վարել պրոտեկցիոնիզմի քաղաքականություն, իսկ պատժամիջոցները հարմար գործիք են փաստացի պրոտեկցիոնիզմի քաղաքականություն վարելու համար: Վերոնշյալի լավագույն օրինակն է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից մի շարք պետությունների, այդ թվում՝ ՉԺՀ-ի նկատմամբ տեխնոլոգիական և Թուրքիայի նկատմամբ պողպատի ներկրման պատժամիջոցների կիրառումը:

---

[54] Տե՛ս Peter Rudolf, "Sanctions in International Relations: On the Current State of Research", Berlin, 2007, p. 13:

[55] Տես Alexander, Kern, "*Economic Sanctions: Law and Public Policy*", Palgrave Macmillan Ltd., 2009, p. 8:

Պատժամիջոցների կիրառումը կարող է կրել նաև *գաղափարական* բնույթ, երբ պետության քաղաքական էլիտան կիրառում է պատժամիջոց գաղափարական հակասությունների պատճառով: Այսպիսի պատժամիջոցներին կարելի է դասել Ղրիմյան ճգնաժամին հետևած Մերձբալթյան պետությունների կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, երբ կառավարությունները, ընդառաջելով հանրային տրամադրություններին, առևտրային պատժամիջոցներ էին սահմանում ՌԴ-ի նկատմամբ՝ այդ կերպ վնաս հասցնելով սեփական գյուղատնտեսությանը: Տվյալ պարագայում առանցքային է նաև պատժամիջոցներ կիրառող պետությունում իշխանության գտնվող քաղաքական ուժերի դերը, քանի որ բազմակուսակցական համակարգ ունեցող պետությունների ոչ բոլոր քաղաքական ուժերն են կիսում պատժամիջոցներ կիրառելու քաղաքականության արդարացիությունն ու արդյունավետությունը:

Գործնական հարցադրումներ

1. Ինչպիսի՞ մեթոդաբանական մոտեցումներով կարող են միջազգային կազմակերպությունները գնահատել պատժամիջոցների արդյունավետությունը՝ հաշվի առնելով թե՛ պաշտոնական, և թե՛ իրական քաղաքական նպատակները:

2. Ի՞նչ գործնական դժվարություններ են առաջանում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատժամիջոցների և առանձին պետությունների միակողմանի պատժամիջոցների կիրառման գործընթացում, և ինչպե՞ս կարող են դրանք ազդել միջազգային իրավունքի ընկալման վրա:

3. Ինչպե՞ս են գործնականում իրականացվում քաղաքական համակարգի կամ իշխող էլիտայի վրա ազդեցություն գործելու ռազմավարությունները պատժամիջոցների միջոցով, և որո՞նք են դրանց սահմանները ժողովրդավարական կամ ավտորիտար համակարգերում:

4. Ի՞նչ գործնական ռազմավարական հաշվարկներ կարող են կատարել պետությունները՝ պատժամիջոցներ կիրառելու որոշում կայացնելիս՝ հաշվի առնելով ներպետական հասարակական պահանջները, միջազգային համախմբվածությունը և երկարաժամկետ ազդեցությունները:

Լրացուցիչ գրականություն

1. Johan Galtung, "On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia", World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), p. 380. Published by Cambridge University Press.

2. Peter Rudolf, "Sanctions in International Relations: On the Current State of Research" - Berlin, 2007.

3. Роберт Блэквилл, Дженнифер М. Харрис, «Война иными средствами», Переводчик: Королев Кирилл Михайлович, Издание на русском языке. AST Publishers, 2017.

Թեմա 6. Պատժամիջոցների կիրառման մեխանիզմները

Ինչպես պատերազմների, այնպես էլ պատժամիջոցների կիրառում սկսելն ավելի դյուրին է, քան հետագայում դրանից դուրս գալը կամ հրաժարվելը: Եթե թիրախ պետությունը չի բավարարում պատժամիջոցներ կիրառող պետության պաշտոնական պահանջները, ապա կիրառող պետության իշխանությունների համար պատժամիջոցների չեղարկումը կարող է արժենալ հեղինակության կորստի: Վերոնշյալ հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև հիմնվելով պատժամիջոցների կիրառման նպատակի կարևորության վրա՝ պետությունները մշակում են պատժամիջոցների տարբեր *մեխանիզմներ,* որոնք տարբերվում են և՛ իրենց ինտենսիվությամբ, և՛ բնույթով, և՛ գործիքակազմով:

Միջազգային խնդիրների առաջացման պարագայում պատժամիջոցների առաջին տեսակը, որը կիրառում են թիրախ պետությանը ազդանշան տալու նպատակով, ***դիվանագիտական*** պատժամիջոցներն են: Դրանց կիրառման մեխանիզմները տարբեր են և կարող են դրսևորվել պետությունների չճանաչումից, բարձր մակարդակի այցերի չեղարկումից և դիվանագետների ետկանչից ընդհուպ դեսպանատների փակում և դիվանագիտական կապերի խզում: Դիվանագիտական պատժամիջոցների շրջանակներում պետության ներկայացուցիչները կարող են հրաժարվել թիրախ պետության ներկայացուցիչների հետ համագործակցությունից միջազգային կառույցներում: Դիվանագիտական պատժամիջոցների գործիք է նաև թիրախ պետության առաջնորդների դուրս մղումը տարբեր միջազգային հարթակներից, ինչպես նաև կիրառող կողմի առաջնորդների մերժումը՝ հանդիպել թիրախ պետության առաջնորդներին: Ըստ էության, դիվանագիտական պատժամիջոցը քաղաքական քայլ

է, որի միջոցով կիրառող պետությունը ցույց է տալիս թիրախ պետության վարած քաղաքականության անընդունելիությունը: Այս պատժամիջոցի թույլատրելիություն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածում[56]: Դիվանագիտական պատժամիջոցների կիրառման մեզ քաջածանոթ դեպք է ՀՀ-ի կողմից դիվանագիտական կապերի խզումը Հունգարիայի հետ՝ Ռամիլ Սաֆարովի արտահանձնման դեպքի կապակցությամբ:

Դիվանագիտական պատժամիջոց կիրառող պետությունը հեղինակության հարված է հասցնում թիրախում գտնվող կողմին՝ միաժամանակ ցուցադրելով այլ պետություններին նման քաղաքականության անընդունելիությունն իր համար: Մյուս կողմից, դիվանագիտական պատժամիջոցներ կիրառող պետությունը զրկում է նաև թիրախ կողմին այն օժանդակությունից, որը տալիս էր իր ԱԳՆ-ի և զարգացման գործակալությունների միջոցով, եթե այդպիսիք գոյություն ունեն: Դիվանագիտական պատժամիջոցները համարվում են կիրառող կողմի համար նվազ վտանգներ ներկայացնող գործիք: Այնուամենայնիվ, որոշ մասնագետներ համարում են, որ դիվանագիտական պատժամիջոցներ կիրառելով՝ պետությունը կարող է թուլացնել իր հատուկ ծառայությունների դիրքերը և կորցնել տեղեկատվության հավաքագրման այնպիսի աղբյուր, ինչպիսին է դիվանագիտական ներկայացուցչությունը[57]:

Պատժամիջոցների զինանոցում գտնվող ամենատարածված գործիքը **տնտեսական պատժամիջոցներն** են: Տնտեսական պատժամիջոց են համարվում, օրինակ, արտահանման և ներկրման, ծառայությունների մատուցման արգելքները: Տնտե-

[56] Տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 41. 21.06.2020 թ.: Հասանելի է՝ https://www.un.am/res/UN%20Treaties/Charter_arm_unicode.pdf

[57] Տե՛ս Maller Tara, "Diplomacy Derailed: The Consequences of Diplomatic Sanctions", The Washington Quarterly 33, 2010 թ., էջ 61-79:

սական պատժամիջոցների խստագույն ձևը մենք համարում ենք տնտեսական շրջափակումը՝ բլոկադան: Տնտեսական պատժամիջոցների արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքան մեծ է թիրախ պետության կախվածությունը պատժամիջոց կիրառող պետությունից: Ընդ որում, տնտեսական պատժամիջոցներ կարող են կիրառվել նաև այն պետությունների նկատմամբ, որոնք աջակցում են պատժամիջոցների օբյեկտին: Նման պատժամիջոցները կոչվում են երկրորդային պատժամիջոցներ (secondary sanctions): Անհրաժեշտ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ արտահանման սահմանափակմանն ուղղված պատժամիջոցների նպատակն է թուլացնել թիրախ պետության տնտեսությունը, առաջացնել գործազրկություն և սոցիալական բողոք: Իսկ ներկրման արգելքը հաճախ միտված է լինում արգելակելու տեխնիկական զարգացումը կամ առաջացնելու որոշ ապրանքների դեֆիցիտ: Տնտեսական պատժամիջոցների հաջողությունը պայմանավորված է կիրառող պետության քաղաքական նպատակներով: Եթե այդ նպատակն է, օրինակ, էթնո-քաղաքական հակամարտությունում զիջում ստանալը, ապա այն հաճախ ունենում է հակառակ ազդեցություն և նպաստում է թիրախ պետությունում ազգային համախմբմանը[58]: Սակայն կարճաժամկետ հեռանկարում նման պատժամիջոցները կարող են որոշակիորեն արգելակել թիրախ պետության զարգացումը:

Տնտեսական պատժամիջոցների ավանդական և լայնորեն կիրառվող գործիք է էմբարգոն, որի ազդեցիկ տարատեսակ է օդային էմբարգոն՝ պետության օդային տարածքի վրայով թռիչքների արգելքը: Սակայն էմբարգոյի առավել տարածված

[58] Տե՛ս Johan Galtung, "On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia", World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), Cambridge University Press, p. 395:

տեսակ է զենքի էմբարգոն՝ վաճառքն ու առաքումը: Զենքի էմբարգոյի հետ միասին հաճախ արգելվում է նաև հարակից նյութերի, սարքավորումների, ինչպես նաև զենքի պահպանման և շահագործման հետ կապված տեխնիկական միջոցների վաճառքն ու տեղափոխումը: Կարող է արգելվել նաև զենքի հետ աշխատող անձնակազմի վերապատրաստումը: Այս գործիքի կիրառումը կարող է ունենալ ինչպես քաղաքական, այնպես էլ գաղափարական նպատակ: Համապատասխանաբար, պետությունները կարող են կիրառել այս գործիքը, որպեսզի մրցակից պետությունները չզարգացնեն իրենց ռազմական ներուժը, որի ակնառու օրինակ էր ԱՄՆ-ի ռազմական էմբարգոն ԽՍՀՄ-ի նկատմամբ: Սակայն միջազգային կազմակերպություններն ու պետությունները զենքի էմբարգո են կիրառում նաև հակամարտություն ունեցող կողմերի միջև ռազմական բախումը կանխելու նպատակով, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ի և ԵՄ պետությունների կողմից Հայաստանին և Ադրբեջանին ռազմամթերքի վաճառքի արգելքը: Զենքի էմբարգոն միջազգային հարաբերություններում հաճախակի կիրառվող գործիքներից է ոչ միայն այն պատճառով, որ այն բավական հասանելի է, այլև նրա համար, որ զենքի էմբարգոն կիրառող պետության համար ֆինանսապես առավել մատչելի է, ի տարբերություն, օրինակ, առևտրային պատժամիջոցների: Նշվածով հանդերձ, զենքի էմբարգոն զերծ չէ նաև քննադատություններից: Երբ միջազգային կազմակերպության կամ գերտերությունների կողմից կիրառվում է զենքի էմբարգո հավասարապես հակամարտության մեջ գտնվող բոլոր կողմերի նկատմամբ, ապա պաշտպանվող կողմը փաստացի զրկվում է պաշտպանվելու իրավունքից, որը ամրագրված է ՄԱԿ-ի կանոնդրության 51-րդ հոդվածում:

Զարգացած պետությունների համար տնտեսական պատժամիջոցների առավել ապահով տեսակն են *ֆինանսական*

պատժամիջոցները: Ֆինանսական պատժամիջոցներից են, օրինակ, զարգացմանը միտված պաշտոնական ֆինանսական աջակցության դադարեցումը: Այս տեսակի պատժամիջոցի կիրառմամբ կարող են կասեցվել ենթակառուցվածքների, առողջապահական, ռազմական, կրթական և այլ ծրագրեր: Նման պատժամիջոցի կիրառումը բացասական ազդեցություն է ունենում, հատկապես, զարգացող պետությունների հասարակության զարգացման վրա: Ֆինանսական պատժամիջոցների շրջանակներում կարող են դադարեցվել նաև վարկերի տրամադրումը, ինչպես նաև միջազգային բանկերը կարող են չեղարկել պատժամիջոցների թիրախում հայտնված պետության հետ առնչվող կազմակերպությունների դրամական փոխանցումները և սառեցնել բանկային հաշիվները, որն էական վնաս է հասցնում վերջինիս տնտեսությանը: Ֆինանսական պատժամիջոցների մեկ այլ գործիք է բանկային ակտիվների սառեցումը, որի կիրառման փաստացի մենաշնորհը պատկանում է ԱՄՆ-ին: Ֆինանսական պատժամիջոցների առավելությունն այն է, որ կիրառող պետությունն ու այդ պետությունում գործող կազմակերպությունները փաստացի վնասներ չեն կրում: Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ ֆինանսական պատժամիջոցները հարուստ պետությունների գործիք են, որոնք փաստացի կառավարում են միջազգային դրամական և բանկային համակարգերը:

Դեռևս 1960-ական թվականներին Գալթունգը, որպես պատժամիջոցների առանձին գործիք, առանձնացնում էր ***հաղորդակցային*** պատժամիջոցների կիրառումը: Այդ պատժամիջոցները, ըստ Գալթունգի, կարող են դրսևորվել հեռուստահաղորդակցման, հեռահաղորդակցման, ինչպես նաև զբոսաշրջային կապերի ընդհատմամբ:[59] Ժամանակակից միտումները հանգեցնում են պետությունների հաղորդակցային առավել խորը փոխկապվածության: Ժամանակակից աշխարհում դժվար է ապահովել պետական ապարատի և բյուրոկրատիայի ֆունկցիոնալությունն առանց համացանցի և ծրագրային հավելվածների, որոնց միջոցով իրականացվում է հսկայական ծավալների հասնող թղթաբանությունը: Մյուս կողմից, գործնականում անհնար է ժամանակակից կենսունակ և առողջ հասարակության ձևավորումն առանց համացանցի և ժամանակակից հաղորդակցային տեխնոլոգիաների: Այսպիսով, տեխնոլոգիական զարգացումը, մի կողմից, անհրաժեշտ պայման է պետության և հասարակության զարգացման համար, մյուս կողմից, այն նոր և հզոր պատժամիջոցների մեխանիզմ է ստեղծում տեխնոլոգիական առաջատար պետությունների համար:

Պատժամիջոցների զինանոցում գտնվող առավել նոր գործիք են համարվում *խելացի պատժամիջոցները (**smart sanctions**)*: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դրանք ոչ թե պատժամիջոցների առանձին տեսակ են, այլ կիրառման մոդել: Խելացի պատժամիջոցները մշակվել և կիրառության մեջ են հայտնվել 1990-ական թվականներին, երբ պարզ դարձավ, որ Իրաքի դեմ կիրառվող պատժամիջոցներն ավելի մեծ ազդեցություն են ունենում քաղաքացիական հասարակության վրա՝ հանգեցնելով մարդկային կորուստների, մինչդեռ Իրաքի քաղաքական էլիտան գրեթե անմասն էր մնում պատժամիջոցների անմիջական ազդեցությունից, իսկ երբեմն էլ օգուտներ էր քաղում՝ վերահսկելով «սև շուկան»: Խելացի պատժամիջոցները, ի տարբե-

[59] Տե՛ս Johan Galtung, "On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia", World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), pp. 378-416. Published by Cambridge University Press:

ություն համընդհանուրի, թիրախավորում են քաղաքական էլիտայի ներկայացուցիչներին, նրանց հետ փոխկապակցված անձանց և ձեռնարկությունները: Խելացի պատժամիջոցների միջոցով թիրախավորվում են այդ անձինք և կազմակերպությունները, սառեցվում են նրանց հաշիվները, արգելվում է նրանց մուտքը պատժամիջոց կիրառող պետության տարածք: Այսպիսով, խելացի պատժամիջոցներից ավելի շատ տուժում են պատժամիջոցների կիրառման պատճառ հանդիսացող անձինք և ոչ թե տվյալ պետության բնակչությունը: Նվազում է այդ անձանց ֆինանսական ազդեցությունը: Միաժամանակ խելացի պատժամիջոցները վնաս են հասցնում թիրախում հայտնված պետության հեղինակությանը: Խելացի պատժամիջոցները ներառում են թաքնված ազդանշան թիրախում հայտված հասարակությանն այն մասին, որ կիրառող պետության գործողություններն ուղղված են ոչ թե հասարակությանը, այլ որոշում ընդունողներին: Այսպիսով՝ փորձ է արվում նաև նպաստել երկրում քաղաքական փոփոխությունների:

Կարող ենք ընդգծել, որ պատժամիջոցները ծառայում են որպես քաղաքականության իրականացման գործիք: Միջազգային հարաբերությունների սուբյեկտները կիրառում են պատժամիջոցներ սեփական քաղաքական շահերի պաշտպանության համար, իսկ միջազգային իրավունքի պաշտպանությունն օգտագործվում է որպես պատրվակ հակառակորդ կամ մրցակից պետություններին պատժելու համար: Պատժամիջոցների կիրառման հիմքերը, նախ և առաջ, ներկայացնում են պետության քաղաքական, այդ թվում՝ գաղափարական շահերի իրականացումը: Ինչպես ռազմական ուժի կիրառումը, այնպես էլ պատժամիջոցները քաղաքականության իրացման միջոց են և ժամանակի ընթացքում համալրում են իրենց սպառազինությունները առավել արդիականացված գործիքներով, ինչպիսին են խելացի պատժամիջոցները:

Գործնական հարցադրումներ

1. Ինչպիսի՞ ռազմավարական և քաղաքական գործոններ պետք է հաշվի առնի պետությունը դիվանագիտական կամ տնտեսական պատժամիջոցների կիրառումից առաջ, հատկապես, երբ հետագա հրաժարումը կարող է ընկալվել որպես հեղինակության կորուստ:

2. Ինչպե՞ս կարող են խելացի պատժամիջոցները վերափոխել միջազգային հարաբերություններում «պատժման» ավանդական տրամաբանությունը:

3. Ինչպիսի՞ հետևանքներ կարող են ունենալ տնտեսական և հաղորդակցային պատժամիջոցները թիրախ պետության հասարակության վրա, և ինչպե՞ս կարող են կիրառող պետությունները համադրել ճնշման և հումանիստական սկզբունքների պահպանումը:

Լրացուցիչ գրականություն

1. Johan Galtung, "On the Effects of International Economic Sanctions: With Examples from the Case of Rhodesia", World Politics, Vol. 19, No. 3 (Apr., 1967), pp. 378-416. Published by Cambridge University Press.

2. Maller, Tara, "Diplomacy Derailed: The Consequences of Diplomatic Sanctions", The Washington Quarterly 33, 2010.

3. Hufbauer G. C., Economic Sanctions Reconsidered, Peterson Institute for International Economics, 2007.

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ռուսաստանի Դաշնության կողմից 2022 թվականի փետրվարին Ուկրաինայի դեմ ռազմական գործողության մեկնարկից հետո սկսվեց նաև արևմտյան պետությունների (ԱՄՆ-ն և դաշնակից պետությունները, ԵՄ-ն և անդամ պետությունները) կողմից ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների կիրառման նոր փուլը: Ռազմական գործողության մեկնարկից ընդամենը տասն օր անց ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցների քանակը պատմական ռեկորդի հասավ, իսկ ՌԴ-ն զբաղեցրեց պատժամիջոցների ենթարկված երկրներից առաջատարի դիրքը՝ առաջ անցնելով Իրանից և Հյուսիսային Կորեայից:[60] Ըստ Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ պատժամիջոցների քաղաքականության այդպիսի մոտեցումը նման է պատերազմի հայտարարման: Արևմուտքի կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ուսումնասիրությունն ունի կարևորություն պատժամիջոցների կիրառման քաղաքական նպատակների վերլուծության, ինչպես նաև ստեղծված նոր իրավիճակում պատժամիջոցների մեխանիզմների և հակամիջոցների արդյունավետության ուսումնասիրության համար:

ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ուսումնասիրությունն ունի նաև առանցքային քաղաքական կարևորություն, քանզի դժվար է թերագնահատել ՌԴ աշխարհաքաղաքական կարևորությունը ՀՀ համար: ՌԴ-ն ՀՀ ռազմաքաղաքական դաշնակիցն է: Բացի ռազմաքաղաքական դաշնակից լինելուց, ՌԴ-ն նաև Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերն է[61]: ՀՀ-ն անդամակցում է նաև ԵԱՏՄ-ին, որում առանցքային դերակատարությունը պատկանում է հենց ՌԴ-ին: Միաժամանակ, անհնար է թերագնահատել ՌԴ-ի դերը Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովման հարցում: Բացի այդ, ՌԴ-ում է գտնվում հայկական ամենամեծ համայնքը, որը հայկական աշխատանքային միգրացիայի հիմնական ուղղությունն է:

Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների քաղաքական տրամաբանությունն ու ազդեցությունը գլոբալ քաղաքական գործընթացների վրա նկարագրելու նպատակով՝ ձեռնարկի սույն մասում անդրադառնում ենք ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների քաղաքական նպատակներին ու հետևանքներին, համեմատում ենք պատժամիջոցների կիրառման արդյունավետության տեսական մոդելները ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցների էմպիրիկ փորձի հետ, որի արդյունքում փորձում ենք ներկայացնել ռազմավարական և մարտավարական այն սխալները, որոնք թույլ են տրվել պատժամիջոցների կիրառման հետևանքով:

---

[60] Nick Wadhams, "Russia Is Now the World's Most-Sanctioned Nation", Bloomberg, March 8, 2022,
հասանելի է՝ https://www.bloomberg.com/news/articles/2022-03-07/russia-surges-past-iran-to-become-world-s-most-sanctioned-nation

[61] Տե՛ս The Observatory of Economic Complexity, Report on Armenia:
Հասանելի է՝ https://oec.world/en/profile/country/arm

Թեմա 7. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցները հետսառըպատերազմյա ժամանակաշրջանում

Հակառուսական պատժամիջոցների արդյունավետության մասին գրվել են տասնյակ, եթե ոչ հարյուրավոր աշխատություններ ինչպես տեսական, այնպես էլ քաղաքական հետազոտությունների (Policy study) տեսքով: Մասնագետները Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներին տվել են թե՛ արդյունավետության և գովասանքի, թե՛ ամբողջական ձախողման քննադատողական գնահատականներ: Սակայն պատժամիջոցների կիրառման արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է, նախ, հասկանալ տվյալ պատժամիջոցի կիրառման իրական՝ քաղաքական, նպատակը, այնուհետև միայն հնարավոր կլինի գնահատել գործիքի՝ պատժամիջոցի կիրառման արդյունավետությունը:

Գ. Հոֆբաուերը, Ջ. Սքոթը և Ք. Էլիոթը առանձնացնում են պատժամիջոցների կիրառման հետևյալ նպատակները՝ վճռականության դրսևորման ցուցադրություն, ներքաղաքական պահանջների բավարարում, հանրությանը առավել վճռական միջոցների պատրաստում և հակառակորդ պետությունների զսպում: Հեղինակներն ընդգծում են նաև պատժամիջոցների կիրառման պատմականորեն ձևավորված նպատակները՝ հետ քաշել զորքերը սահմանային բախումներից, հրաժարվել տարածքների յուրացումից և ռազմական այլ արկածախնդրություններից: Սակայն, կարծում ենք, որ պատժամիջոցների իրական քաղաքական նպատակներն առավել ընդգրկուն են և ամենևին չեն սահմանափակվում պատժամիջոցի կիրառման պաշտոնական պատճառաբանությամբ: Ռուսաստանի Դաշնության նկատմամբ

կիրառվող պատժամիջոցները նոր հնարավորություն են ընձեռնում պատժամիջոցների կիրառման քաղաքական տրամաբանությունը ուսումնասիրելու համար:

Ռուսաստանի Դաշնությունը դե յուրե գտնվել է պատժամիջոցների ազդեցության տակ իր անկախության ողջ ընթացքում, քանի որ ԽՍՀՄ-ի նկատմամբ ԱՄՆ-ի կիրառած որոշ պատժամիջոցներ, ինչպիսին էր Ջեքսոն-Վենիկի ակտը, որը սահմանափակում էր առևտուրը ԽՍՀՄ-ի հետ, շարունակում էր գործել ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերջինիս իրավահաջորդ ՌԴ-ի նկատմամբ մինչև 2012 թ.՝ չնայած պատժամիջոցի հիմքը՝ հրեաների Իսրայել մեկնելու արգելքը, վաղուց չեղարկվել էր: ԱՄՆ-ի կողմից 2012 թվականին վերոնշյալ օրենքի չեղարկումը համընկավ ՌԴ-ի նկատմամբ «Օրենքի գերակայության հաշվետվողականության ակտի» (Մագնիտսկու ակտ) կիրառման հետ[62]: Դրա համաձայն՝ պատժամիջոցներ էին սահմանվում ՌԴ իրավապահ մարմիններում աշխատող այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք, ըստ ԱՄՆ կոնգրեսի, փոխկապակցված էին իրավապաշտպան Սերգեյ Մագնիտսկու սպանության գործի հետ: Թեպետ, Մագնիտսկու ակտի համաձայն՝ պաշտոնապես պատժամիջոցներ չէին կիրառվում ՌԴ-ի նկատմամբ՝ որպես պետության, այնուամենայնիվ, ակտն ուներ խորհրդանշական կարևորություն. ըստ էության, դա ԱՄՆ-ի կողմից առաջին պատժամիջոցն էր ՌԴ-ի նկատմամբ, քանի որ անգամ 2008 թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո ԱՄՆ-ն խուսափել էր ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուց: Մագնիտսկու ակտի կիրառումը ռուս-ամերիկյան հարաբերություններում

[62] Տե՛ս Website of the USA Congress, "Sergei Magnitsky Rule of Law Accountability Act of 2012", Reported to Senate (07/23/2012),հասանելի է՝ https://www.congress.gov/112/bills/s1039/BILLS-112s1039rs.pdf:

շրջադարձի ազդանշան էր, ըստ որի՝ երկու պետությունների միջև գոյություն ունեցող տարաձայնություններն այլևս անհնար էր դառնում լուծել միայն դիվանագիտական ճանապարհով և անցում էր կատարվում ուժային քաղաքականության կիրառմանը: Ընդ որում, կողմերից յուրաքանչյուրը հետագայում կիրառելու էր իրեն հասանելի և ընդունելի ուժային գործիքները միջազգային հարաբերություններում սեփական շահերի առաջ մղման համար՝ ՌԴ-ի պարագայում ռազմական միջամտության, իսկ ԱՄՆ-ի պարագայում տնտեսական, ֆինանսական, տեխնոլոգիական և այլ մեթոդներով ճնշում գործադրելու միջոցով:

Ռուսաստանի Դաշնության և Արևմուտքի միջև հարաբերությունների փոխակերպումը գործընկերությունից դեպի առճակատում առաջին անգամ հրապարակայնացվեց 2007թվականին՝ Մյունխենի անվտանգության քաղաքականության համաժողովի ընթացքում, որտեղ ՌԴ նախագահ Վ. Պուտինը հայտարարեց «միաբևեռ աշխարհակարգի և ՆԱՏՕ-ի՝ դեպի ՌԴ սահմանների ընդլայնման անթույլատրելիության» մասին: Այսպիսով, ՌԴ-ն բացահայտ մարտահրավեր էր նետում ՆԱՏՕ-ի՝ Եվրոպայում անվտանգության կառուցվածքի գլխավոր ճարտարապետը լինելու մենաշնորհին՝ ազդարարելով հետսառըպատերազմյան ստատուս քվոյի անընդունելիության մասին: Այնինչ, սառը պատերազմից հետո ՌԴ-ն որդեգրել էր ԱՄՆ-ի և, հատկապես, ԵՄ-ի հետ սերտ գործընկերության ռազմավարություն:

Մագնիտսկու մահը, անշուշտ, ողբերգական էր, սակայն ինչպես ՌԴ-ի և ԱՄՆ-ի, այնպես էլ աշխարհի շատ պետությունների մեկուսարաններում արձանագրվում են մարդկանց խոշտանգման և մահվան դեպքեր: Ուստի՝ Մագնիտսկու ակտի տրամաբանությունն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն մարդու իրավունքների և օրենքի, այլև առավել լայն՝ քաղաքական լույսի

ներքո: Մագնիտսկու ակտի ընդունման գործում իր ներդրումն է ունեցել վերջինիս գործատու կազմակերպության՝ «Hermitage capital» ընկերության գործադիր տնօրեն Վիլիամ Բրոդերը[63]: Վերջինս լոբբիստական գործունեություն էր իրականացնում նաև ԱՄՆ Սենատում և, այսպիսով, ազդում ԱՄՆ-ի կողմից Մագնիտսկու ակտի ընդունման գործընթացի վրա: Սակայն Մագնիտսկու ակտի մշակման և կիրառման գործում շատ ավելի լայն ազդեցություն ունեին թե՛ ԱՄՆ ներքաղաքական զարգացումները, թե՛ աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք տեղի էին ունենում մի շարք տարածաշրջաններում: Մագնիտսկու ակտի համաձայն՝ ԱՄՆ կոնգրեսը հնարավորություն էր ստանում պատժամիջոցներ կիրառելու ոչ միայն Մագնիտսկու մահվան մեջ մեղավորություն ունեցողների նկատմամբ, այլև նրանց նկատմամբ, ովքեր աշխարհի ցանկացած կետում պատասխանատու էին «արտադատական սպանությունների, խոշտանգումների կամ միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների և ազատությունների այլ կոպիտ խախտումների համար, որոնք կատարվել են այլ անձանց նկատմամբ»[64]: Այսպիսով, ԱՄՆ-ն հնարավորություն էր ստանում հետագայում պատժամիջոցներ կիրառել ոչ միայն Մագնիտսկու սպանության մեջ մեղադրվող և ՌԴ պաշտոնյա կամ քաղաքացի հանդիսացող անձանց նկատմամբ, այլև աշխարհի ցանկացած կետում ցանկացած անձի նկատմամբ, որոնք, ըստ ԱՄՆ պետդեպի, կհանդիսանային ակտում սահմանված ապօրինությունների կատարման «հանցակից», և նրանց նկատմամբ կարող է կիրառվել ԱՄՆ մուտքի արգելքի և հաշիվների սառեցման պատժամիջոց:

---

[63] Տե՛ս William Browder, Founder and CEO, "Hermitage Capital, the Russian State and the Case of Sergei Magnitsky", Chatham House, London, 15 December 2009:

[64] Տե՛ս S. 1039 (112th): "Sergei Magnitsky Rule of Law Accountability Act of 2012", Section 4, p. 2, July 2012.

2016 թվականին ԱՄՆ կոնգրեսը ընդունեց «Գլոբալ Մագնիտսկու» ակտը, որն առավել լայն և ճկուն գործիքակազմ էր տրամադրում ԱՄՆ նախագահին պատժամիջոցներ կիրառելու համար[65]: Վերոնշյալ օրենքների կիրառմամբ պատժամիջոցների ծածկույթը տարածվում է ՌԴ-ից մինչև Եմեն, ՉԺՀ-ից մինչև Հաիթի[66]: Նոր ակտը նաև հնարավորություն էր տալիս բռնագրավելու պատժամիջոցների տակ հայտնված անձանց անշարժ և շարժական գույքը:

Իրավական տեսանկյունից Մագնիտսկու ակտի կարգավորման ոլորտը խիստ խոցելի է, քանի որ հնարավորություն է տալիս ԱՄՆ կոնգրեսին արտադատական պատժամիջոց կիրառել ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց մեղավորությունը ճանաչված չէ դատարանի կողմից: Առհասարակ միջազգային պատժամիջոցների կիրառման օրինականությունն իրավաբանության փորձագետների համար բանավեճի լայն և անվերջանալի թեմա է: Յեյլի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Մայքլ Ռայսմանը համարում է, որ քաղաքական նպատակին հասնելու համար կարճատև և թիրախավորված պատերազմն իրավունքի տեսանկյունից առավել հիմնավոր կարելի է համարել, քան համընդհանուր և երկարաժամկետ պատժամիջոցների կիրառումը, որն ավելի մեծ վնաս է հասցնում հասարակ քաղաքացիներին: Ավելին, հեղինակն առաջարկում էր համապատասխանեցնել պատժամիջոցների կիրառումը ռազմական օրենքների սկզբունքներին: Սակայն թե՛ պատժամիջոցների կիրառումն առհասարակ, թե՛ Մագնիտսկու ակտի կիրառումը, թե՛ հետագա պատժամիջոցների սահմանումը ԱՄՆ-ի կողմից բխում են ռեալիզմի քաղաքական մտածողությունից:

Մագնիտսկու ակտն ընդունվեց ԱՄՆ-ի կողմից ռազմական ուժի միջոցով հակամարտությունը լուծելու գերակայության քաղաքականությունից հրաժարվելու պայմաններում: Նման փոփոխությանը նպաստել էր ԱՄՆ-ում տիրող հանրային տրամադրությունների փոխակերպումները, որոնք 2012 թվականին էականորեն տարբերվում էին 2001թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններին հաջորդած ժամանակահատվածի հասարակական տրամադրություններից: 2008 թվականի նախագահական ընտրություններին ԱՄՆ նախագահ էր ընտրվել Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Բարաք Օբաման, որի արտաքին քաղաքական հռետորաբանությունն ավելի չափավոր էր, քան իր նախորդինը (Ջորջ Բուշ կրտսեր), իսկ արտաքին քաղաքականության իրականացման գործիքները՝ առավել մեղմ[67]: Դեռևս 2011թվականի դեկտեմբերին ԱՄՆ նախագահ Օբաման հայտարարեց Աֆղանստանից և Իրաքից զորքերը դուրս բերելու ԱՄՆ-ի նպատակների մասին: Այսպիսով, ԱՄՆ արտաքին քաղաքականության ուժային գործիքակազմում ռազմական ուժի կիրառումն աստիճանաբար իր տեղը զիջում էր պատժամիջոցներին: Մեր գնահատմամբ քաղաքականության իրացման գործիքի փոփոխությունը ոչ թե ԱՄՆ-ի կողմից սեփական շահերի, այդ թվում՝ համաշխարհային քաղաքականության մեջ ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական գերիշխանության պահպանման քաղաքականությունից հրաժարվելն է, այլ տվյալ ժամանակա-

---

[65] Տե՛ս S.284 - Global Magnitsky Human Rights Accountability Act 114th Congress (2015-2016):
Հասանելի է՝ https://www.congress.gov/bill/114th-congress/senate-bill/284/text

[66] Տե՛ս U.S. Department of State, "2020 Global Magnitsky Program Designations", 10 December 2020:
Հասանելի է՝ https://www.state.gov/wp-content/uploads/2020/12/Infographic_v1.8-508.pdf

[67] James Dobbins, "Rethinking American National Strategy for the 21st Century", National Interest Journal, July 24, 2015.

հատվածում այդ շահերի պահպանմանը միտված առավել օպտիմալ գործիքի ընտրությունը:

Մագնիտսկու ակտի ընդունումը, թերևս, հետևանքն էր նաև ՌԴ-ի և ԱՄՆ-ի միջև աստիճանական աճող լարման, որն արդեն իսկ 2012 թվականի սեպտեմբերին հանգեցրել էր ՌԴ-ի կողմից ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության գործունեության կասեցմանն իր տարածքում: Այսպիսով, Մագնիտսկու ակտի կիրառմամբ ԱՄՆ-ն փորձում էր նաև հեղինակության պատասխան վնաս հասցնել ՌԴ-ին: Սակայն ԱՄՆ-ի կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն էականորեն սաստկացան 2014 թվականից հետո:

Գործնական հարցադրումներ

1. Ինչպե՞ս է Մագնիտսկու ակտը փոխակերպել միջազգային պատժամիջոցների գործիքը՝ տարածելով դրա ազդեցությունն առանձին անձանց և գլոբալ իրավունքների պաշտպանության օրակարգի վրա:

2. Ի՞նչ մեթոդաբանական մարտահրավերներ են առաջանում հակառուսական պատժամիջոցների քաղաքական նպատակները և իրական ազդեցությունները գնահատելիս:

3. Ի՞նչ գործոններ պայմանավորեցին ԱՄՆ-ի՝ պատժամիջոցները, որպես գերակա արտաքին քաղաքական գործիք, ընտրելու գործընթացը 2000-ականների երկրորդ կեսին:

4. Որքանո՞վ է միջազգային պատժամիջոցների օրինականությունը համահունչ միջազգային իրավունքի նորմերին, հատկապես, երբ դրանք կիրառվում են հատուկ անձանց նկատմամբ առանց դատարանի վճռի:

Լրացուցիչ գրականություն

1. James Dobbins, "Rethinking American National Strategy for the 21st Century", National Interest Journal, July 24, 2015.

2. William Browder, Founder and CEO, "Hermitage Capital, the Russian State and the Case of Sergei Magnitsky", Chatham House, London, 15 December 2009.

3. Morgan, T. Clifton, et al. "Economic Sanctions: Evolution, Consequences, and Challenges." The Journal of Economic Perspectives, vol. 37, No. 1, 2023, pp. 3–30. JSTOR.

4. Тимофей Бордачев, «Совершают ли державы самоубийства? Руководство к действию», журнал Россия в Глобальной Политике, 04.02.2021.

Թեմա 8. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների նպատակները

Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառված պատժամիջոցների միտումները հասկանալու և արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում վերլուծել դրանց նպատակները: Ժողովրդավարական համակարգ ունեցող պետություններում, ինչպիսին է ԱՄՆ-ն, հանրային տրամադրությունները մեծ նշանակություն ունեն քաղաքական դերակատարների համար, ուստի՝ թե՛ դեմոկրատական, թե՛ հանրապետական քաղաքական գործիչների շարքերում կան քաղաքական գործիչներ, որոնք փորձում են հասարակական տրամադրությունները վերածել սեփական քաղաքական կապիտալի: Միջուկային սպառազինության առկայությունը ՌԴ-ի նկատմամբ ռազմական ուժի կիրառումը դարձնում է անտրամաբանական, ուստի՝ ամերիկյան քաղաքական գործիչները պատժամիջոցներն օգտագործում են որպես իրենց քաղաքական ուժի վճռականության ցուցադրության գործիք: Այսպիսով, Մագնիտսկու ակտի և հետագա պատժամիջոցների սահմանման ժամանակ ԱՄՆ-ում և նրա դաշնակից պետություններում ներքաղաքական դերակատարների քաղաքական շահերը պատժամիջոցների կիրառման անարհամարհելի գործոն են:

2014 և 2017 թթ. ԱՄՆ-ում պատժամիջոցների սահմանման շուրջ հակասություններն ընթանում էին ոչ միայն հանրապետականների և դեմոկրատների, այլև նախագահների վարչակազմերի և սենատի անդամների միջև: Եթե 2014 թվականին նախագահ Օբամային հաջողվում էր կոնսենսուս գտնել կոնգրեսականների հետ պատժամիջոցներ սահմանելիս, ապա 2017 թվականին Դ. Թրամփը ստիպված էր գնալ զիջումների, երբ ընդունվեց «Ամերիկայի հակառակորդներին պատժամիջոցների միջոցով հակազդելու մասին» օրենքը:[68] Թրամփը օրենքի ընդունումը համարում էր հիմնադիր հայրերի կողմից գործադիրին օժտած լիազորությունների սահմանափակում Կոնգրեսի կողմից: Օրենքը փաստացի զրկում էր ԱՄՆ նախագահին պատժամիջոցների չեղարկման օպերատիվ ղեկավարման հնարավորությունից, բայց ավելի շատ լիազորություններ և ճկուն գործիքակազմ էր տալիս ԱՄՆ գանձապետարանին և պետքարտուղարությանը, ըստ անհրաժեշտության, ընդլայնելու պատժամիջոցները ՌԴ-ի նկատմամբ: Այսպիսով, մի կողմից ստեղծվում էր նոր և ճկուն գործիք ԱՄՆ-ի հակառակորդների նկատմամբ օպերատիվորեն նոր պատժամիջոցներ կիրառելու համար, մյուս կողմից վնաս էր հասցվում քաղաքական հակառակորդին՝ ի դեմս Թրամփի: Հարկ է նշել, որ օրենքն ընդունվել էր Թրամփի նախագահ ընտրվելու գործընթացում ՌԴ-ի միջամտության խոսույթների լայն քննարկման հանգամանքներում: Այսպիսով, ԱՄՆ-ի կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցների նպատակներից մեկն է ներքաղաքական հաղորդակցությունը երկու մակարդակում՝ հորիզոնական, երբ պատժամիջոցների կիրառման նախաձեռնության համար միմյանց հետ մրցակցում են քաղաքական ուժերը, ինչպես Մագնիտսկու ակտի ընդունման ժամանակ էր, և ուղղահայաց, երբ իշխանությունները փորձում են պատժամիջոցների կիրառմամբ ցույց տալ իրենց վճռականությունը ներքին լսարանին:

Մագնիտսկու ակտը, իր էությամբ, «խելացի պատժամիջոցների» կիրառման տարատեսակ էր՝ ուղղված անհատների դեմ, և հիմնական արտաքին նպատակը ՌԴ-ին քաղաքականության

[68] Տես U.S. Congress, "Countering America's Adversaries through Sanctions Act", Public Law 115-44-AUG. 2, 2017:

անընդունելիության ազդակ տալն էր: ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցների նպատակների թվում հետագայում ևս պահպանվել է հաղորդակցային գործառույթը: Ղրիմում անցկացված հանրաքվեից հետո՝ 2014 թվականի մարտ-ապրիլ ամիսներին, ԱՄՆ-ն, ԵՄ-ն, Կանադան և Ճապոնիան սկսեցին պատժամիջոցներ կիրառել ՌԴ-ում քաղաքական ազդեցություն ունեցող անհատների նկատմամբ՝ սառեցնելով վերջիններիս բանկային հաշիվներն ու թույլ չտալով մուտք գործել իրենց պետության տարածք: Այս փուլում պատժամիջոցները զգուշավոր էին, իսկ դրանց կիրառման արդյունավետությունը՝ խիստ կասկածելի: Ռուսաստանի Դաշնությունն արդեն իսկ ուժ էր կիրառել Ուկրաինայի նկատմամբ և, ըստ էության, հասել իր նպատակներին, իսկ ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից անհատների հաշվեհամարների սառեցումը տվյալ պարագայում անհամաչափ պատասխան էր: Սակայն անհամաչափությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ԱՄՆ-ի, ԵՄ-ի և նրանց դաշնակիցների համար անակնկալ էր ՌԴ-ի կողմից ուժի նման «հանդուգն» կիրառումը: ԵՄ-ի մի շարք պետություններ ունեին սերտ տնտեսական կապեր ՌԴ-ի հետ և նախնական փուլում դժկամությամբ էին այդ շահերը զիջում: Մյուս կողմից, սառը պատերազմից հետո ԵՄ-ն չուներ պատժամիջոցների կիրառման այնպիսի փորձ և ինստիտուցիոնալացում, ինչպիսին ուներ Ամերիկայի Միացյալ Նահանգները:

Սակայն, 2014 թվականի հուլիսին Ուկրաինայի արևելյան հատվածի երկնքում Մալազիական ավիաուղիներին պատկանող ինքնաթիռի խոցման դեպքից հետո ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները խստացվեցին: Պատժամիջոցների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ԱՄՆ-ն և ԵՄ-ն սկսեցին կոորդինացնել իրենց պատժամիջոցները և

ընդլայնել պատժամիջոցների թիրախում հայտնված օբյեկտների ցանկը՝ ներառելով ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձանց: ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների այս ալիքի հիմնական թիրախն էին ՌԴ սոցիալ-տնտեսական և անվտանգային զարգացման համար կարևոր ճյուղերը, ինչպիսիք են՝ բանկային և ներդրումային, պաշտպանական և տեխնոլոգիական, հանքագործության և վերամշակման ոլորտները: Սահմանափակումներ էին մտցվում ռուսական խոշոր բանկերի՝ ՎՏԲ բանկի, Գազպրոմբանկի և մի շարք այլ ֆինանսական կառույցների նկատմամբ: Համաձայն նոր պատժամիջոցների՝ խստացվում կամ արգելվում էր ֆինանսական միջոցների տրամադրումը ռուսական առաջատար ֆինանսական կազմակերպություններին: Սակայն այս սահմանափակումները ընդգրկուն չէին և միտված էին ոչ թե պատժամիջոցների թիրախում հայտնված կազմակերպությունների գործունեության խաթարմանը, այլ թուլացմանը: Պատժամիջոցների կիրառման կարևորագույն նպատակը ՌԴ ռազմաարդյունաբերական ոլորտի զարգացման կանխումն էր, այդ պատճառով պատժամիջոցների թիրախում էին հայտնվել այնպիսի կազմակերպություններ ինչպիսիք են «Կալաշնիկով» կոնցեռնը, ՀՕՊ համակարգեր արտադրող «Ալմազ-Անտեյը», մի շարք այլ գործարաններ և գիտահետազոտական կառույցներ, որոնք զբաղվում էին ժամանակակից սպառազինությունների նախագծման և արտադրման աշխատանքներով: Համաձայն պատժամիջոցների՝ արգելվել էր ֆինանսական և տեխնոլոգիական համագործակցությունը նշյալ կազմակերպությունների հետ, սառեցվել էին վերջիններիս ֆինանսական միջոցները արևմտյան ֆինանսական կառույցներում: Կարելի է պնդել, որ ռուսական ռազմաարդյունաբերական համալիրի նկատմամբ կիրառված պատժամիջոցներն ազդարարում էին ՌԴ-ի նկատմամբ

զսպման նոր քաղաքականության մեկնարկը, որը փաստացի ավարտվել էր սառը պատերազմի և ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո: Միաժամանակ, ԱՄՆ-ը փորձում էր նաև ճնշել սպառազինությունների արտադրության և արտահանմամբ զբաղվող իր հիմնական մրցակիցներից մեկին:

Հակառուսական պատժամիջոցների երրորդ ուղղությունը նպատակաուղղված էր ՌԴ էներգետիկ համակարգի թուլացմանը: ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից պատժամիջոցներ էին սահմանվել ռուսական էներգետիկ և հանքարդյունաբերական կազմակերպությունների նկատմամբ: Ընդ որում, պատժամիջոցները արգելք էին սահմանում ոչ թե ռուսական էներգակիրների գնման, այլ ռուսական հանքարդյունաբերող կազմակերպություններին ժամանակակից տեխնոլոգիաներ վաճառելու վրա: ԱՄՆ-ն արգելել էր գազի և նավթի արդյունահանման համար խորքային հորատման տեխնոլոգիաների, ինչպես նաև Արկտիկայում թերթաքարային գազի և նավթի ստացման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների արտահանումը դեպի ՌԴ[69]: Կարող ենք եզրակացնել, եթե ԱՄՆ-ի կողմից ՌԴ-ի ֆինանսական և ռազմաարդյունաբերական ոլորտի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները կարող են երկակի մեկնաբանվել միջազգային իրավունքի և պետության տարածքային ամբողջականության նկատմամբ ոտնձգության տեսքով, ապա Արկտիկայում էներգակիրների արդյունահանմամբ զբաղվող ռուսական կազմակերպությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը կարող է մեկնաբանվել միայն որպես նոր ռեսուրսների համար տարածաշրջանային տերությունների միջև մրցակցություն: Գլոբալ տաքացումը նպաստում է արկտիկական սառույցների վերացմանը և առավել մատչելի դարձնում տարածաշրջանում գտնվող ռեսուրսների արդյունահանումը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է տարածաշրջանային պետությունների միջև նոր մրցավազքի:

2014 թվականի ուկրաինական ճգնաժամից հետո առավել ծավալուն պատժամիջոցներ են կիրառվել Ղրիմի, Դոնեցկի և Լուգանսկի՝ Ուկրաինայի վերահսկողությունից դուրս գտնվող հատվածներում գործունեություն ծավալող և ռազմավարական ենթակառուցվածքի նշանակություն ունեցող կառույցների ու կազմակերպությունների նկատմամբ, արգելվել է ցանկացած տեսակի ներդրում իրականացնել այդ տարածքներում[70]: Ընդ որում, պատժամիջոցները կիրառվում էին ոչ միայն վերոնշյալ տարածքներում անմիջական գործունեություն ծավալող կազմակերպությունների, այլև նրանց մատակարարների նկատմամբ: Սահմանափակվել էր անգամ համացանցային որոշ ծրագրերի հասանելիությունը: Սույն պատժամիջոցների կիրառումն ընդգրկում էր սահմանափակ աշխարհագրական տարածք և նպատակ ուներ բարդացնել ՌԴ-ի կողմից Ուկրաինայից անջատված տարածքների յուրացումը՝ հնարավորինս բարձրացնելով ՌԴ-ի կատարած ծախսերի գինը և ձգտելով սոցիալ-տնտեսական դեպրիվացիայի հասցնել նշյալ տարածքի բնակիչներին:

Ռուսաստանի Դաշնության նկատմամբ պատժամիջոցների ցանկն ընդլայնվել է նաև 2015 թվականից հետո՝ 2017 թվականին[71]: ԱՄՆ-ի կողմից ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների կի-

---

[69] Տե՛ս 15 CFR § 746.5 "Russian Industry Sector Sanctions", Code of Federal Regulations, 6 August 2014:
Հասանելի է՝ https://www.ecfr.gov/current/title-15/subtitle-B/chapter-VII/subchapter-C/part-746/section-746.5

[70] OFAC Sanctions Attorney, "Ukraine-Related Sanctions Targeting Crimea Region": Հասանելի է՝ https://ofaclawyer.net/economic-sanctions-program/ukraine-related/crimea-region/

[71] Տե՛ս Reuters "Russia Sanctions: Trump Signs Bill Imposing New Measures", 02.08.2017: Հասանելի է՝ https://www.theguardian.com/us-news/2017/aug/02/donald-trump-sanctions-russia-signs-bill

ռաման պաշտոնական պատճառաբանությունները եղել են տարատեսակ՝ միջամտություն Ամերիկայի Միացյալ Նահանգների ընտրություններին, Սկրիպալների և ընդդիմադիր գործիչ Նավալնիի թունավորման, ինչպես նաև վերջինիս ձերբակալման կապակցությամբ: Տնտեսական պատժամիջոցներին զուգահեռ ՌԴ-ն և ԱՄՆ-ն միմյանց տարածքներից վտարում էին հակառակ կողմի դիվանագետներին, ինչն աստիճանական լարվող հարաբերությունների ևս մեկ ազդակ էր:

2022 թվականին Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի նկատմամբ ռազմական ուժի կիրառմամբ պայմանավորված՝ ՌԴ-ի նկատմամբ կիրառված պատժամիջոցների քանակը գրեթե կրկնապատկվեց՝ 2400-ից հասնելով 4700-ի (2022 թվականի մարտի 15-ի դրությամբ): Այսպիսով, ՌԴ-ն սահմանեց համաշխարհային հակառեկորդ իր նկատմամբ կիրառված պատժամիջոցների քանակով: ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները ռեկորդային էին ոչ միայն իրենց քանակով, այլև տեսակների բազմազանությամբ: Ընդ որում, եթե մինչ 2022 թվականը ԵՄ-ի և ԱՄՆ-ի կիրառած պատժամիջոցները տարբերվում էին ինչպես իրենց գործիքակազմով, այնպես էլ կիրառման քաղաքական տրամաբանությամբ, քանի որ, ի տարբերություն ԱՄՆ-ի, ԵՄ-ն առավել մեղմ և ճկուն գործիքակազմ օգտագործելու կողմնակից էր և ըստ անհրաժեշտության նաև մեղմում էր պատժամիջոցները՝ հնարավոր դրական ազդակներ տալու և քաղաքական երկխոսություն ծավալելու նպատակով: 2022 թվականին ՌԴ-ի «Հատուկ ռազմական գործողությունը» վերափոխեց ԵՄ-ի մոտեցումը, և վերջինս ԱՄՆ-ի նմանությամբ որդեգրեց մաքսիմալ վնաս հասցնելու մարտավարություն: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ ԵՄ ռեսուրսներն առավել սահմանափակ են, իսկ կառույցի անդամ որոշ պետություններ, ինչպիսին Հունգարիան է, ունեն կախվածություն ռուսական էներգակիրներից: ՌԴ-ին առավելագույն վնաս հասցնելու միտմամբ պատժամիջոցների կիրառումը զգալի վնաս է հասցնում նաև ԵՄ որոշ պետությունների տնտեսությանը: Այնինչ, ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցների կիրառումը միտված է ոչ միայն ՌԴ-ի զսպմանը, այլև սեփական տնտեսական պրոտեկցիոնիզմի քաղաքականության իրագործմանը, որն անընդունելի է համարվում գործող աշխարհակարգի և Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ԱՄՆ-ի անդամակցության պայմաններում, որի հիմնական ճարտարապետը հենց ԱՄՆ-ն է:

ՌԴ-ի կողմից ռազմական գործողության նախաձեռնումը էականորեն նպաստեց ԱՄՆ-ի շուրջ դաշնակիցների համախմբմանը և միասնական ճակատով Ռուսաստանի դեմ պատժիչ գործողությունների մեկնարկին: Հավաքական պատժամիջոցներ են սահմանվել մի շարք ոլորտներում: Փորձենք ստորև առանձնացնել պատժամիջոցների թիրախում հայտնված հիմնական ոլորտները, որոնք տարբեր ժամանակագրական միջակայքերում շոշափելի վնաս են հասցնելու ՌԴ-ին:

Պատժամիջոցների է ենթարկվել ֆինանսական ոլորտը, ըստ որի՝ ԱՄՆ-ն արգելել է իր քաղաքացիներին և կազմակերպություններին ՌԴ-ում ներդրում կատարել, ինչպես նաև ռուսական պետական ինստիտուտների և կազմակերպությունների հետ գործարքներ իրականացնել: ԵՄ-ում և ԱՄՆ-ում սառեցվել են ռուսական խոշորագույն բանկերի՝ հարյուրավոր ֆիզիկական և իրավաբանական անձանց ակտիվները, որոնք պահվում էին եվրոպական, ամերիկյան և պատժամիջոցներին միացած այլ պետությունների ֆինանսական կառույցներում: «Վիզա» և «Մաստեր» քարտային համակարգերը ևս դադարեցրել են իրենց աշխատանքը ՌԴ-ում: ԵՄ-ն ռուսական մի շարք բանկեր

անջատել է նաև փոխանցումների SWIFT համակարգից: ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող երկրներին է միացել նաև Շվեյցարիան՝ խախտելով պատմականորեն ձևավորված չեզոքության քաղաքականության ավանդույթը: ՌԴ արտաքին գործերի նախարար Լավրովը «անսպասելի և գողություն» է որակել Արևմուտքի կողմից ՌԴ ոսկեարժութային պահուստների արգելափակումը, որի մոտ կեսը պահվում էր արևմտյան տարբեր պետությունների ֆինանսական կառույցներում: Թե՛ Լավրովի՝ ակտիվների սառեցման անսպասելիության մասին պնդումը, թե՛ մինչև ռազմագործողության մեկնարկը ակտիվները դուրս չբերելու փաստը խոսում են ՌԴ-ում որոշում կայացողների՝ արևմտյան պետությունների միավորվելու վճռականությունը թերագնահատելու մասին:

Պատժամիջոցների երկրորդ կարևոր ճյուղը տարածվում է տնտեսական և առևտրային հարաբերությունների վրա: Այստեղ ևս կիրառվող պատժամիջոցները կարելի է անվանել աննախադեպ, քանի որ պատժամիջոցների թիրախում են հայտնվել անգամ ռուսական առևտրային նավերը, որոնց արգելվել է մուտք գործել մի շարք պետությունների նավահանգիստներ: Շուրջ 40 պետություններ արգելել են իրենց օդային տարածքով ռուսական ինքնաթիռների թռիչքները: ԱՄՆ-ն ամբողջությամբ դադարեցրել է ՌԴ-ից էներգակիրների ներկրումը, որը ՌԴ արտահանման հիմնական ապրանքատեսակն է և ապահովում է բյուջետային եկամուտների զգալի մասը: ԵՄ-ն ևս փորձում է գտնել այլընտրանքներ ռուսական էներգակիրներին: ԱՄՆ-ն և ԵՄ-ն սահմանափակել են նաև լյուքս դասի իրերի արտահանումը ՌԴ, սպասարկման և առևտրային ոլորտի արևմտյան տասնյակ կազմակերպություններ հայտարարել են ՌԴ-ում գործունեության դադարեցման մասին:

ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ցանկում առանցքային դեր ունեն տեխնոլոգիական պատժամիջոցները: ԱՄՆ-ից ՌԴ տեխնոլոգիական արտադրանքի արտահանման նկատմամբ սահմանվել է լիցենզավորում: Ընդ որում, այն տարածվում է ցածր տեխնոլոգիական մշակվածություն ունեցող ապրանքատեսակների վրա, որոնք կարող են օգտագործվել պաշտպանության, օդատիեզերական և ծովային ոլորտներում: ԵՄ-ն ևս միացել է տեխնոլոգիական պատժամիջոցներին և արգելել ռազմական բնույթի սարքավորումների ու ծրագրերի վաճառքը ՌԴ-ին: Հարավային Կորեան, Թայվանը և Ճապոնիան ևս միացել են տեխնոլոգիական պատժամիջոցներին, որը դժվար կացության մեջ է դնում ռուսական տեխնոլոգիական սեկտորը, քանի որ ռուսական տեխնոլոգիական կազմակերպությունների աշխատանքը մեծապես կախված է նշյալ պետությունների տեխնոլոգիական ապրանքների մատակարարումներից: Ռուսաստանում իրենց գործունեությունը և մատակարարումները դադարեցրել են առաջատար տեխնոլոգիաներ արդյունահանող տասնյակ կազմակերպություններ: Այսպիսով, Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տեխնոլոգիական պատժամիջոցներից տուժելու են մի շարք ոչ ռազմարդյունաբերական ոլորտներ, ինչպիսիք են՝ մեքենաշինությունը, փոխադրումները, հանքարդյունաբերությունը, հեռահաղորդակցությունը: Այս ոլորտում կիրառվող պատժամիջոցները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում առավել դժվար հաղթահարելին են և հանգեցնելու են շղթայական խնդիրների:

Անկախ Ուկրաինայում ծավալվող ռազմական գործողությունների արդյունքից՝ ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները դեռ երկար ժամանակ չեն չեղարկվելու, քանի որ այսուհետ ՌԴ-ն ԱՄՆ-ի կողմից ընկալվում է որպես հիմնական սպառնալիք: ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցները

միտված են լինելու ոչ միայն Ուկրաինայի միջազգայնորեն ճանաչված տարածքներից ռուսական զորքերի դուրսբերմանը և ռազմական գործողությունների դադարեցմանը, այլև սոցիալ-տնտեսական համակարգի կազմալուծմանը և քաղաքական համակարգի փոփոխությանը, միջազգային մեկուսացման միջոցով ՌԴ-ի քաղաքական ազդեցության նվազմանը:

Գործնական հարցադրումներ

1. Ի՞նչ դեր ունի Մագնիտսկու ակտը՝ որպես քաղաքական ազդակ, ԱՄՆ-ի և Ռուսաստանի հարաբերությունների փոփոխման համատեքստում:

2. Ինչպե՞ս են միջազգային պատժամիջոցները գործարկվում՝ առանց դատական որոշման՝ մարդու իրավունքների խախտման մեղադրանքով և ի՞նչ իրավական ու քաղաքական հետևանքներ են առաջացնում:

3. Ինչպե՞ս են քաղաքական և տնտեսական շահերը ձևավորում միջազգային պատժամիջոցների կիրառումներն իբրև մարդու իրավունքների պաշտպանության գործիք:

4. Որքանո՞վ են հակառուսական պատժամիջոցները հասել իրենց քաղաքական նպատակներին՝ հաշվի առնելով Ռուսաստանի քաղաքական արձագանքները և արտաքին քաղաքական ռազմավարությունը:

Լրացուցիչ գրականություն

1. Kazantsev, S. V. (2017). Anti-Russian Sanctions: Then and Now. Problems of Economic Transition, 59(1–3), 84–99.

2. Иван Тимофеев, Тимур Махмутов, «Политика санкций: цели, стратегии, инструменты». Москва, 2018 г., 276 с.

Թեմա 9. Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցների տնտեսական փոփոխականները

Պատժամիջոցների կիրառմամբ քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետությունը պայմանավորված է տնտեսական և քաղաքական տասնյակ կախյալ փոփոխականներով: Թեմայի վերաբերյալ կարևորագույն ակադեմիական աշխատանքում Գ. Հոֆբաուերը, Ջ. Սքոթը և Ք. Էլիոթը պատժամիջոցների հաջողության համար առավելապես կարևորում են հետևյալ տնտեսական փոփոխականները՝ 1) պատժամիջոց կիրառող պետության/պետությունների ՀՆԱ-ն պետք է առնվազն տասն անգամ գերազանցի պատժամիջոցների թիրախում հայտնված պետության ՀՆԱ-ն, 2) թիրախավորված պետության արտաքին առևտրի առնվազն 1/3-ը պետք է լինի կիրառող պետությունների հետ և 3) պատժամիջոցները պետք է թիրախավորեն տնտեսության առավել զգայուն ոլորտները, որպեսզի վնասը լինի բազմապատիկ: Ըստ հեղինակների՝ տնտեսական այս փոփոխականների առկայությունն անհրաժեշտ, սակայն պատժամիջոցների հաջողության համար ոչ բավարար պայման է:

Ըստ տարբեր հաշվարկների՝ Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ն կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի 2.5-ից 3%-ը[72], մինչդեռ ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող պետությունների ՀՆԱ-ների հանրագումարը հավասարվում է համաշխարհային ՀՆԱ-ի մոտ կեսին: 2020 թվականի դրությամբ, ՌԴ արտաքին առևտրի կեսից ավելին բաժին էր ընկնում այն պետություններին, որոնք այժմ պատժամիջոցներ են կիրառում ՌԴ-ի

[72] Տե՛ս Russia: Share of Global Gross Domestic Product (GDP) Adjusted for Purchasing Power Parity (PPP) from 2016 to 2026:
Հասանելի է՝ https://www.statista.com/statistics/271379/russias-share-of-global-gross-domestic-product-gdp/

նկատմամբ: Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները համապատասխանում և անգամ գերազանցում են հեղինակների առաջ քաշած տեսական մոդելի երրորդ կետը՝ թիրախավորելով երկրի տնտեսության գրեթե բոլոր ոլորտները: Հետևապես, «Վերանայված տնտեսական պատժամիջոցները» տեսության տրամաբանության համաձայն՝ պատժամիջոցների կիրառման սպառնալիքն անգամ կարող էր զսպել Ռուսաստանին Ուկրաինայի նկատմամբ ռազմական գործողություններ նախաձեռնելու հարցում: Բայց պատժամիջոցների սպառնալիքը ոչ միայն գործնականում չկանխեց և հետագայում չկանգնեցրեց ռազմական գործողությունները, այլև ավելի սրեց լարվածությունը: Առաջանում է տրամաբանական հակասություն տեսական մոդելի և Ռուսաստանի նկատմամբ իրականացվող պատժամիջոցային քաղաքականության միջև:

Ստեղծված տրամաբանական խնդրի լուծման համար անհրաժեշտ ենք համարում քննել Ռուսաստանի արտաքին առևտրի կառուցվածքը, Ռուսաստանի և նրա նկատմամբ պատժամիջոցներ կիրառող պետությունների առևտրային կապերը, ինչպես նաև պատժամիջոցների հակազդեցությունը վերջիններիս վրա: Վերջին տասնամյակում Ռուսաստանի ՀՆԱ-ում արտաքին առևտրի մասն ունեցել է շարունակական նվազման միտում[73]: Այս հանգամանքը մեծապես պայմանավորված է 2014 թվականից ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով: Արևմուտքի պատժամիջոցների առաջին ալիքի հաղթահարման նպատակով Ռուսաստանը փորձել է, մի կողմից՝ տնտեսությունը կառուցել ինքնաբավության սկզբունքով, մյուս կողմից, հնարավորինս ապակենտրոնացնել այն: Ռուսական տնտեսության առանձնահատկություններից մեկն այն է, որ, առանց նավթի և գազի արտահանման, Ռուսաստանի արտաքին առևտրի տեսակարար կշիռը կազմում է ՀՆԱ-ի ընդամենը 25%-ը[74]: Հետևապես, ռուսական արտահանումների շուկայում ամենախոցելին էներգակիրների և հանքանյութերի արտահանման ոլորտն է, որը կազմում է Ռուսաստանից արտահանվող ապրանքների ծավալի գերակշիռ մասը՝ շուրջ 60%-ը:[75] Սակայն ռուսական տնտեսության տեսականորեն խոցելի կողմը գործնականում նաև նրա ուժեղագույն կողմն է, քանի որ Ռուսաստանը բնական գազի արտահանման համաշխարհային առաջատարն է, ինչպես նաև ունի աշխարհում ամենամեծ գազային պահուստները: ԵՄ-ն Ռուսաստանից ներմուծում էր գազի սպառման 40%-ից ավելին, նավթի և նավթամթերքի 30-ից և ածխի 40-ից ավելին:[76] ԵՄ անդամ մի շարք պետություններ 2020 թվականի դրությամբ բնական գազն ամբողջությամբ ստանում էին ՌԴ-ից, իսկ ԵՄ տնտեսապես առաջատար տնտեսություններ ունեցող պետությունների՝ Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի և Իտալիայի գազի և նավթի սպառման կեսը մատակարարում էր ՌԴ-ն:[77] 2020 թվա-

[73] Տե՛ս Russian Federation Trade (% of GDP) at World Bank National Accounts Data and OECD National Accounts Data Files.
https://data.worldbank.org/indicator/NE.TRD.GNFS.ZS?end=2019&locations=RU&name_desc=false&start=1960:

[74] Տե՛ս The Observatory of Economic Complexity (OEC) on Russia:
Հասանելի է՝ https://oec.world/en/profile/country/rus/?subnationalTimeSelector=timeYear

[75] Տե՛ս Official website of World Bank, Russia Trade:
Հասանելի է՝ https://wits.worldbank.org/countrysnapshot/en/RUSSIA/textview#:~:text=RUSSIA%2C%20Exports%20of%20goods%20and,percentage%20of%20GDP%20is%2028.54%20%25

[76] Տե՛ս Energy Imports Dependency, Eurostat:
Հասանելի է՝ https://ec.europa.eu/eurostat/cache/infographs/energy/bloc-2c.html#carouselControls?lang=en

[77] Տե՛ս Statista "Share of Gas Supply from Russia in Europe in 2020, by Selected Country":
Հասանելի է՝ https://www.statista.com/statistics/1201743/russian-gas-dependence-in-europe-by-country/

կանին միայն ռուսական Գազպրոմ ընկերությունը արտահանել է 185 մլրդ խմ բնական գազ, որի 10%-ը բաժին է ընկել Գերմանիային: Ռուսական գազից ԵՄ-ի հրաժարվելը գործնականում անհնար է պատկերացնել, քանի որ այլընտրանքային արդյունահանողներ և լոգիստիկ կապեր գոյություն չունեն: Հետաքրքրական է, որ Միջազգային էներգետիկ գործակալությունը ԵՄ-ի համար խորհրդատվություն է պատրաստել մեկ տարվա ընթացքում ռուսական գազամատակարարումների կրճատման մասին: Այս խորհրդատվության համաձայն՝ ԵՄ-ն պետք է ավելացներ գազի ներկրումն Ադրբեջանից և Նորվեգիայից, արագացներ արևային էներգիայի զարգացումը, Ատոմային էլեկտրական կայանների վերագործարկումն արդեն 2022 թվականին[78]: Սակայն գործնականում այս խորհրդատվությունն իրագործելը և ԵՄ-ի կողմից ռուսական էներգակիրներից հրաժարվելը կարճաժամկետ հեռանկարում անիրագործելի էին: Անհրաժեշտ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ մինչև 2025 թվականն Ուկրաինան ևս չէր դադարեցնում իր տարածքով ՌԴ-ից դեպի ԵՄ գազի մատակարարումները՝ միաժամանակ մեղադրելով այլ պետությունների, որ վերջիններս չեն միանում ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներին:

ԵՄ առանձին պետությունների՝ ռուսական նավթի մատակարարումներից հրաժարվելը տեսականորեն կարելի է հնարավոր համարել՝ հաշվի առնելով նավթային այլ շուկաների առկայությունը և լոգիստիկ հնարավորությունները: Սակայն ԵՄ ընդհանուր շուկայից ռուսական նավթի դուրսմղումը ևս գործնականում անհնար է, քանի որ ՌԴ-ից դեպի ԵՄ շուկա նավթի օրա-

[78] Տե՛ս International Energy Agency, "How Europe Can Cut Natural Gas Imports from Russia Significantly within a Year", report, 03 March 2022:
Հասանելի է՝ https://www.iea.org/news/how-europe-can-cut-natural-gas-imports-from-russia-significantly-within-a-year

կան մատակարարումները գերազանցում էին 2 մլն բարելը:[79] Եթե անգամ տեսականորեն կարելի է թույլատրելի համարել անհրաժեշտ քանակի նավթի արդյունահանումը, ապա վերջինիս տեղափոխման խնդիրները չունեին գործնական լուծում: ԵՄ-ն փորձեց հնարավորինս ապակենտրոնացնել էներգակիրների ներմուծումը, սակայն ԵՄ-ի կողմից ռուսական էներգակիրներից ամբողջությամբ հրաժարվելը հնարավոր է պատկերացնել առնվազն միջնաժամկետ հեռանկարում: Այդ ընթացքում ՌԴ-ն ևս ապակենտրոնացրեց իր էներգակիրների արտահանման շուկաները առավելապես չինական և հնդկական շուկաների հաշվին:

Ի տարբերություն ԵՄ-ի՝ ԱՄՆ-ն 2022 թվականին ամբողջությամբ արգելել է ՌԴ-ից էներգակիրների ներմուծումը, սակայն դա զգալի վնաս չի կարող հասցնել ռուսական արտահանումներին, ուստի և տնտեսությանը, քանի որ ՌԴ-ի և ԱՄՆ-ի միջև առևտրաշրջանառությունը 2021 թվականին կազմել է 16 մլրդ դոլար: Ընդ որում, ընդհանուր առևտրաշրջանառության մեկ երրորդը ռուսական նավթամթերքի ներմուծումից էր: Հետևապես, ամերիկյան առևտրային ուղղակի պատժամիջոցները չէին կարող զգալի վնաս հասցնել Ռուսաստանի տնտեսությանը, մինչդեռ անորոշությունն էներգակիրների շուկայում առաջացրել է վառելիքի գների կտրուկ տատանումներ: Վառելիքը ԱՄՆ-ի տնտեսության համար ունի կենսական նշանակություն մարդկանց տեղաշարժի և ծառայությունների շղթան ապահովելու տեսանկյունից: Վառելիքի գների թանկացումը հանգեցրել է շղթայական թանկացման, և ըստ ԱՄՆ աշխատանքի գործակալության, 2022 թվականի փետրվարին ինֆլյացիան ԱՄՆ-ում կազ-

[79] Տե՛ս BBC.com «Насколько мир зависит от российской нефти и газа?», 8 марта 2022:

մել է գրեթե 8%[80]: Սպառողական ծախսերը կազմում էին Ամերիկայի Միացյալ Նահանգների ՀՆԱ-ի 2/3-ը:[81] Թանկացումների պատճառով կարճաժամկետ հեռանկարում աճում էին մարդկանց կենցաղային ծախսերը, սահմանափակվում էին ներդրումները և նվազում էր տնտեսական ակտիվությունը՝ հանգեցնելով տնտեսական աճի դանդաղեցմանը: Սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ԱՄՆ-ն Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պատճառով էական տնտեսական վնասներ չի կրի՝ ի տարբերություն ԵՄ պետությունների: Ավելին, նավթի և գազի արդյունահանման համաշխարհային առաջատարը հենց ԱՄՆ-ն է: Այդ ոլորտը ամերիկյան տնտեսության առաջատար ճյուղերից է, որտեղից գեներացվում են ավելի քան 180 մլրդ հարկային եկամուտներ:[82] Ստեղծված իրավիճակը նոր հնարավորություն է ստեղծում՝ առավել ընդլայնելու ամերիկյան թերթաքարային նավթարդյունաբերությունը: Ստեղծված ճգնաժամային պայմաններում ԵՄ մի շարք պետությունների համար ռուսական էներգակիրների փաստացի միակ փոխարինողն է դառնում ԱՄՆ-ն, ինչպես արդյունաբերական ծավալների հզորությամբ, այնպես էլ փոխադրումների հնարավորություններով: Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների մեկնարկից հետո

[80] Տե՛ս Olivia Rockeman, "U.S. Inflation Hit Fresh 40-Year High of 7.9% Before Oil Spike", 10 March 2022:
Հասանելի է՝ https://www.bloomberg.com/news/articles/2022-03-10/u-s-inflation-hits-fresh-40-year-high-of-7-9-before-oil-spike

[81] Տե՛ս Collin Eaton, "How Much Oil Does the U.S. Import From Russia and Why Did Biden Ban It?", 21 April 2022:
Հասանելի է՝ https://www.wsj.com/articles/why-does-the-u-s-still-buy-russian-oil-11646151935

[82] Տե՛ս David Wethe and Catarina Saraiva, "U.S. Oil Boom Towns Risk Ghost Town Future", Bloomberg, March 26, 2022:
Հասանելի է՝ https://www.bloomberg.com/news/features/2022-03-26/what-happens-to-u-s-oil-boom-towns-when-fossil-fuel-industries-go-away

ամերիկյան «Շեվրոն» (Chevron) կազմակերպության բաժնետոմսերը երկու շաբաթվա ընթացքում թանկացել էին ավելի քան 25%-ով[83]: Այսպիսով, ԱՄՆ-ն մի կողմից ավելի է մեծացնելու սեփական արդյունաբերությունը, մյուս կողմից էլ մեծացնելու է քաղաքական-տնտեսական ազդեցությունը ԵՄ-ի նկատմամբ:

Այսպիսով, ևս մեկ անգամ կարող ենք արձանագրել, որ պատժամիջոցների արդյունավետության համար Գ. Հոֆբաուերի, Ջ. Սքոթի և Ք. Էլիոթի առաջ քաշած առաջին երկու փոփոխականները անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայմաններ են պատժամիջոցների արդյունավետության տեսանկյունից: Առաջին երկու փոփոխականներն առավելապես արտացոլում են ուժերի այն հարաբերակցությունը, որը գոյություն ունի հակամարտության և պատժամիջոցների սահմանման պահին, իսկ հեղինակների առաջ քաշած անհրաժեշտ երրորդ փոփոխականի՝ պատժամիջոցների բազմապատկող ազդեցության դիտարկումը թույլ է տալիս ավելի լավ պատկերացնել պատժամիջոցների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը:

ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցները թիրախավորում են տնտեսության բոլոր ոլորտները: Մենք արդեն անդրադարձել ենք ՌԴ-ից էներգակիրների արտահանումների սահմանափակման խնդրին: Սակայն կիրառվող պատժամիջոցների տրամաբանությունը և ազդեցությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել ՌԴ տնտեսության կառուցվածքը: Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ն 2021 թվականին ուներ հետևյալ կառուցվածքը՝ արդյունաբերություն՝ 26%, հանքարդյունաբերու-

[83] Տե՛ս Артур Арутюнов, «Европа хочет отказаться от российского нефтегаза: чьи акции могут вырасти», 31 Марта 2022, Forbes:
Հասանելի է՝ https://www.forbes.ru/investicii/460745-evropa-hocet-otkazat-sa-ot-rossijskogo-neftegaza-c-i-akcii-mogut-vyrasti

թյուն՝ 21%, պետական հատված՝ 18%, տրանսպորտ՝ 15%, հաղորդակցային ծառայություններ՝ 7%, շինարարություն՝ 8%, գյուղատնտեսություն՝ 5%[84]: Ինչպես երևում է, Ռուսաստանի տնտեսության համար առանցքային է ոչ միայն հանքարդյունաբերության ոլորտը, որին արդեն անդրադարձել ենք, այլև արդյունաբերությանը:

Ռուսաստանյան բանկերի նկատմամբ պատժամիջոցները, ինչպես նաև արևմտյան ակտիվների ներգրավման արգելքը կարճաժամկետ հեռանկարում փաստացի կրճատում էին նոր ներդրումները ռուսական արդյունաբերության ոլորտում: Ռուսաստանյան տասնյակ առաջատար ձեռնարկատերեր հայտնվել են արևմտյան պատժամիջոցների առանցքում, սառեցվել են նրանց ակտիվները արևմտյան ֆինանսական կառույցներում, առգրավվել է նրանց պատկանող գույքը, արգելվել է պատժամիջոցների տիրույթում հայտնված գործարարների և նրանց պատկանող կազմակերպությունների հետ առևտրային և ֆինանսական գործարքների կատարումը: Master և Visa համակարգերի կասեցումը, ռուսաստանյան խոշոր բանկերի անջատումը SWIFT համակարգից ևս կարճաժամկետ հավելյալ դժվարություններ են ստեղծում ռուսական արդյունաբերական համալիրի համար: Սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ռուսական արդյունաբերության վրա առավել ծանր է ազդելու տասնյակ արևմտյան մասնավոր կազմակերպությունների՝ ՌԴ-ում ձեռնարկատիրությամբ զբաղվելուց հրաժարվելը: ՌԴ-ում իրենց գործունեությունը կասեցրել են ինքնաթիռաշինական համաշխարհային առաջատարներ եվրոպական «Էյրբասն» ու ամերիկյան «Բոինգը», ավտոմոբիլային արդյունաբերության ոլորտում՝

[84] Տե՛ս Росинфостат, Валовой внутренний продукт России в текущих ценах (2021 թվական ի դրությամբ), հասանել է՝ https://rosinfostat.ru/vvp/:

համաշխարհային առաջատարներ «Ջեներալ մոթորսը», «Տոյոտան» և տասնյակ այլ կազմակերպություններ: Ընդ որում, նրանք դադարեցրել են նաև պահեստամասերի մատակարարումները, հրաժարվել են սպասարկել ռուսական ինքնաթիռները[85]: Ռուսական արդյունաբերական տասնյակ կազմակերպություններ հայտնվել են գոյաբանական խնդրի առջև: ՌԴ-ում մի շարք արդյունաբերական գործարաններ համարվում են քաղաքաստեղծ ձեռնարկություններ, ուստի՝ այս ընկերությունների հնարավոր սնանկացումը կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական նոր խնդիրների, որոնք մեղմելու նպատակով պետությունը պետք է իրականացնի սոցիալական նոր ծրագրեր, փոխհատուցի փաստացի գործազուրկ մնացած մարդկանց աշխատավարձերը: Պետական հատկացումները և պետական հատվածի ծախսերն ավելանալու են, իսկ բյուջետային եկամուտների ծավալի մեծացման համար այլընտրանքային աղբյուրներ չեն գոյանալու: Տրանսպորտային միջոցների արտադրման, ներկրման և սպասարկման ոլորտի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ազդելու են նաև տրանսպորտային ոլորտի վրա, քանի որ վերանորոգումը դառնալու է գործնականում անհնար:

Բացի առևտրային և ֆինանսական պատժամիջոցներից՝ Արևմուտքը Ռուսաստանի նկատմամբ վարում է նաև տեխնոլոգիական և տեղեկատվական ռեսուրսների սահմանափակման քաղաքականություն: Համացանցը և տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակակից տնտեսությունների և հասարակությունների լոկոմոտիվն են: Դրանք անսահմանափակ հնարավո-

[85] Տե՛ս Irina Ivanova, Kate Gibson, These are the Companies that Have Pulled Out of Russia Since its Invasion of Ukraine, March 11, 2022: Հասանելի է՝ https://www.cbsnews.com/news/russia-ukraine-corporations-pull-out-invasion/

ություններ են տալիս ոչ միայն հաղորդակցվելու, այլև ինք-նակրթվելու, նպաստում են մարդկային կապիտալի զարգացման-ը, հեշտացնում՝ տնտեսական գործունեությունը: Համացանցը հնարավորություն է ընձեռում հաջողակ կազմակերպություններին դուրս գալու միջազգային շուկաներ: Պատժամիջոցների հետևանքով արևմտյան տեխնոլոգիական տասնյակ կազմակերպություններ լքել են ռուսական շուկան, արգելվել է նրանց ծրագրերի օգտագործումը Ռուսաստանի տարածքում:[86] Տարբեր պատժամիջոցներից տուժել են նաև ռուսական տեխնոլոգիական կազմակերպությունները, որոնց մի հատվածը ստիպված է եղել հեռանալ Ռուսաստանից կամ վերագրանցվել այլ պետությունների տարածքում: Ռուսական տեխնոլոգիաների առաջատար «Յանդեքս» կազմակերպությունը հայտնվել է ծանր դրության մեջ՝ արևմտյան շուկաներից դուրս մղվելու հետևանքով:[87]

Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տեխնոլոգիական պատժամիջոցները չեն ավարտվում միայն ծրագրային սահմանափակումներով, դրանք ներառում են նաև տեխնիկական սարքավորումների և պահեստամասերի՝ ՌԴ արտահանման սահմանափակումներ: 2020 թվականին մեքենաշինական ու էլեկտրոնային սարքավորումները և դրանց պահեստամասերը կազմում էին ՌԴ ներմուծված ապրանքների շուրջ 30%-ը[88]:

[86] Տե՛ս Carrie Mihalcik Sarah and Lord Corinne Reichert, "These Companies Have Left Russia: The List Across Tech, Entertainment, Finance, Sports", April 26, 2022: Հասանելի է՝ https://www.cnet.com/news/politics/what-companies-have-left-russia-see-the-list-across-tech-entertainment-and-financial-institutions/

[87] Տե՛ս Эльдар Муртазин «Яндекс в свободном падении. Поспешный уход с западных рынков», 18 марта 2022:
Հասանելի է՝ https://mobile-review.com/all/articles/analytics/yandeks-v-svobodnom-padenii-pospeshnyj-uhod-s-zapadnyh-rynkov/?fbclid=IwAR2kYjc-Bhy8_N6OkzINbD-PZ88IgidGz41UISnXz_Q-P6rOywIFkOImQNFU

[88] Տե՛ս Oec.world/en, Russia:
Հասանելի է՝ https://oec.world/en/profile/country/rus?depthSelector2=HS2Depth

Արևմտյան տեխնոլոգիական առաջատար մի շարք կազմակերպություններ, ինչպիսիք են «Google»-ը և «Appl»-ը, սեփական նախաձեռնությամբ դադարեցրել են իրենց գործունեությունը ՌԴ-ում: ԱՄՆ-ն, օրինակ, լիցենզիա է սահմանել վերահսկվող էլեկտրոնիկայի, համակարգիչների, հեռահաղորդակցության սարքավորումների, սենսորների, լազերների, նավիգացիայի, ավիացիոն, ծովային, օդատիեզերական և շարժիչ տեխնոլոգիաների՝ Ռուսաստան արտահանման համար[89]: Տեխնոլոգիական պատժամիջոցներն իրենց բացասական ազդեցությունն են ունենալու ինչպես մարդկանց կյանքի որակի, այնպես էլ արդյունաբերական ներուժի վրա: Սպառողական շուկայում կրճատվելու է նորարարական արևմտյան բջջային հեռախոսների, համակարգիչների, հեռահաղորդակցության ոլորտի այլ սարքավորումների քանակը, բարդանալու է շուկայում արդեն առկա սարքավորումների ծրագրերի ապահովումը: Սակայն, եթե սպառողական պարագաները հնարավոր է փոխարինել չինական արտադրության ապրանքատեսակներով, ապա ավիացիոն, ավտոմեքենաշինական և արդյունաբերական այլ ոլորտների տեխնոլոգիական բաղադրիչների փոխարինումը անհամեմատ ավելի բարդ է, իսկ երկրորդային պատժամիջոցների սպառնալիքն այն կարող է դարձնել ավելի դժվար: Ենթադրվում էր, որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում տեխնոլոգիական ոլորտի սահմանափակումներն ունենալու էին բազմապատկող ազդեցություն և թուլացնելու էին ռուսական տնտեսության արդյունաբերական ու տրանսպորտային ոլորտները:

Վերոնշյալ ոլորտների թուլացումը հանգեցնելու էր դրանց մրցակցայնության անկման՝ առաջացնելով ֆինանսական

[89] Տե՛ս New Financial and Trade Sanctions Against Russia, March 17, 2022:
Հասանելի է՝ https://crsreports.congress.gov/product/pdf/IF/IF12062

խնդիրներ ոլորտում ներգրավված առաջատար մասնագետների համար: Ռուսաստանը հայտնի է բարձրակարգ օդաչուներով, ինժեներներով և ոլորտային այլ մասնագետներով: Ստեղծված իրավիճակում տեխնոլոգիական և բարձր որակավորում պահանջող այլ ոլորտներից սկսվելու է կադրերի արտահոսք: Արևմտյան պատժամիջոցների հետևանքով արգելվել է սպառողական մի շարք ապրանքատեսակների ներմուծումը ՌԴ, որը պետք է բացասաբար ազդեր կյանքի որակի վրա և հանգեցներ բարձր որակավորում ունեցող քաղաքային բնակչության միգրացիայի: ԱՄՆ նախագահ Բայդենի վարչակազմը նպատակադրված էր 2023 թվականի ֆիսկալ տարում (սկսվում էր 2022 թվականի հոկտեմբերից) ֆինանսական միջոցներ հատկացնել Ռուսաստանից բարձրորակ կադրերի ներհոսքը խրախուսելու համար: Ծրագրի հիմնավորման մեջ նշվում է, որ Ռուսաստանից գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտի տաղանդավոր ներկայացուցիչների ներհոսքը կուժեղացնի ԱՄՆ-ն և կզրկի Ռուսաստանին նորարարական ներուժից:[90] Ռուսաստանից որակյալ կադրերի և, հատկապես, ճարտարագետների արտահոսքին միտված քաղաքականություն էին վարում նաև եվրոպական մի շարք երկրներ: Որակավորված կադրերի արտահոսքի մեկ այլ ուղղություն է ՉԺՀ-ն:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ, բացի պատժամիջոցներից, ԱՄՆ-ն վարում է նաև «ուղեղների արտահոսքի» (brain draining) քաղաքականություն: Հետարդյունաբերական տնտեսության պայմաններում «ուղեղների արտահոսքը» կարող է ունենալ շատ ավելի վտանգավոր հետևանքներ, քան ֆինանսական և առևտրային պատժամիջոցները: Ուղեղների արտահոսքի պայմաններում պետությունը փաստացի զրկվում է ստեղծարար խավից, որն ունի ներուժ՝ ստեղծելու նորարարական տեխնոլոգիաներ, մեղմելու պետությանը հասցված վնասը և հասարակության և տնտեսության լոկոմոտիվն է: Ստեղծարար խավի հեռանալը երկարաժամկետ հեռանկարում լեցուն է վտանգով, այն ՌԴ տնտեսության և հասարակության լճացում կառաջացնի: Սառը պատերազմում Խորհրդային Միության պարտության հիմնական պատճառն այն էր, որ նրա տնտեսությունն ի վիճակի չէր մրցակցել տեխնոլոգիական առաջատարություն ունեցող տնտեսությունների հետ[91]:

Այսպիսով, արձանագրեցինք այն օբյեկտիվ պատճառները (տնտեսության կառուցվածք), որոնք նպաստում են ռուսական տնտեսության դիմադրողականությանը 20 անգամ գերազանցող դաշինքի հարվածներից պաշտպանվելուն: Սակայն ոչ պակաս կարևոր է անդրադարձն այն սուբյեկտիվ գործոններին, որոնց միջոցով ՌԴ-ն բարձրացրել էր դիմադրողականությունը՝ կիրառվող պատժամիջոցներին դիմակայելու նպատակով:

Գործնական հարցադրումներ

1. Որո՞նք են «Մագնիտսկու» ակտի և «Գլոբալ Մագնիտսկու» ակտի քաղաքական և իրավական տարբերությունները, և ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել դրանք ԱՄՆ-ի պատժամիջոցային քաղաքականության ձևավորման վրա:

2. Ինչպե՞ս են ԱՄՆ-ի ներքաղաքական զարգացումները և արտաքին քաղաքական ռազմավարության փոփոխությունները ձևավորել Ռուսաստանի Դաշնության նկատմամբ պատժամիջոցների կիրառման տրամաբանությունը:

---

[90] Տե՛ս The White House "FY_2022_Emergency_Supplemental_Assistance-to-Ukraine", 4.28.2022:
Հասանելի է՝ https://www.whitehouse.gov/wpcontent/uploads/2022/04/FY_2022_Emergency_Supplemental_Assistance-to-Ukraine_4.28.2022.pdf

[91] Տե՛ս John Mearsheimer, "The Tragedy of Great Power Politics" (2001), Chapter 6, Great Powers in Action, p. 202:

3. Հնարավո՞ր է արդյոք դիտարկել Մագնիտսկու ակտը որպես աշխարհաքաղաքական մրցակցության՝ ոչ ռազմական, այլ համակարգային գործիք: Ինչպե՞ս է այն ազդել ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունների դինամիկայի վրա:

4. Ինչպե՞ս է պատժամիջոցների կիրառումը վերափոխում միջազգային իրավունքի գործառույթներն ու սահմանները՝ հատկապես ֆիզիկական անձանց նկատմամբ արտադատական պատժամիջոցների համատեքստում:

Լրացուցիչ գրականություն

1. DiPippo, Gerard, and Andrea Leonard Palazzi. "The Economic Impacts on Russia." Bearing the Brunt: The Impact of the Sanctions on Russia's Economy and Lessons for the Use of Sanctions on China, Center for Strategic and International Studies (CSIS), 2023, pp. 6-16.

2. Mardones, C. (2022) 'Economic Effects of Isolating Russia from International Trade Due to Its 'Special Military Operation' in Ukraine', European Planning Studies, 31(4), pp. 663–678. doi: 10.1080/09654313.2022.2079074.

3. Клинова М.В., Сидорова Е.А., Экономические санкции и их влияние на хозяйственные связи России с Европейским союзом. –Вопросы экономики. 2014. № 12, с. 67-79.

Թեմա 10. Ռուսաստանի Դաշնության հակաքաղաքականությունը

Քաղաքականության մեջ, ինչպես և ֆիզիկայում, համաձայն Նյուտոնի երրորդ օրենքի, ցանկացած ազդեցություն առաջացնում է հակազդեցություն: Ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցային քաղաքականությունը ևս տրամաբանորեն հանգեցրել է հակապատժամիջոցների և պատժամիջոցների հետևանքները մեղմելուն միտված քաղաքականություն վարելու: Սակայն, համեմատելով Արևմուտք-ՌԴ տնտեսական ներուժները՝ պետք է արձանագրենք, որ գործ ունենք միմյանց նկատմամբ անհամաչափ ազդեցության հնարավորություն ունեցող միջազգային հարաբերությունների երկու սուբյեկտների հետ:

Թեպետ ռուս քաղաքական գործիչներն ու վերլուծաբանները հաճախ են պատժամիջոցների կիրառումը միջազգային հարաբերությունների անթույլատրելի գործիք համարում, այնուամենայնիվ Ռուսաստանի արտաքին քաղաքականության զինանոցում տնտեսական պատժամիջոցները զբաղեցնում են իրենց ուրույն տեղը: ՌԴ-ն կարող է տնտեսական պատժամիջոցներ կիրառել այլ պետությունների նկատմամբ ինչպես բացահայտորեն, այնպես էլ քողարկված: Ի պատասխան ԱՄՆ-ի կողմից Մագնիտսկու ակտի կիրառման՝ ՌԴ-ն 2012 թվականի դեկտեմբերին սկսեց ինստիտուցիոնալացնել պատժամիջոցների կիրառման սեփական մեխանիզմը՝ ընդունելով «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման մեջ ներգրավված անձանց վրա ազդեցության միջոցների մասին» օրենքը: Այդպիսով ռուսական իշխանությունները հնարավորություն էին ստանում որոշակի սահ-

մանափակումներ կիրառելու այն անձանց նկատմամբ, որոնք կողմ էին արտահայտվում ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներին՝ արգելափակելով վերջիններիս բանկային հաշիվները կամ ՌԴ մուտքի վիզա չտրամադրելով: 2022 թվականին, օգտագործելով այդ օրենսդրական հիմքը, ՌԴ-ն սահմանափակող միջոցներ է կիրառել ամերիկացի և եվրոպացի հարյուրավոր պաշտոնյաների նկատմամբ[92]: Սակայն այս ոլորտում ռուսական հակամիջոցները, երբեմն, կարող են զավեշտի առարկա դառնալ, քանզի դժվար է պատկերացնել ԱՄՆ որևէ պաշտոնյայի, որը իր ֆինանսական միջոցները կարող է պահել ՌԴ-ում: Սա ավելի շատ անհաջող փորձ է՝ փոխադարձաբար հեղինակության վնաս հասցնելու արևմտյան քաղաքական գործիչներին և ցույց տալու սեփական հանրությանն ու գործընկերներին, որ ՌԴ-ն ի վիճակի է և տիրապետում է բավարար ռեսուրսների «ակն ընդ ական» պայքարելու հակառակորդների դեմ:

Այսուհանդերձ, այլ ոլորտներում ՌԴ-ի կիրառած հակամիջոցները որոշ չափով արդյունավետ են եղել: Օրինակ, ի տարբերություն 2014 թվականի, երբ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ սկսվել էին կիրառվել արևմտյան պատժամիջոցները, այնտեղ ընդունվեց «Ռուսաստանի անվտանգությունն ապահովելու նպատակով առանձին հատուկ տնտեսական միջոցների կիրառման մասին» օրենքը, որով սահմանափակվում էր ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներին միացած երկրներից գյուղատնտեսական ապրանքների ներմուծումը: Այս սահմանափակումը ավելի շատ կարճաժամկետ բացասական ազդեցություն էր թողել արևելաեվրոպական գյուղմթերք արտադրողների վրա, քան

[92] Տե՛ս Tuqa Khalid, "Russia Imposes 'Mirror Sanctions' on 398 US Congress Members", 13 April 2022:
Հասանելի է՝ https://english.alarabiya.net/News/world/2022/04/13/Tit-for-tat-Russia-imposes-mirror-sanctions-on-398-US-Congress-members

ռուս սպառողների: Այդ հակամիջոցը հաճախ էր դառնում արևմտյան քաղաքական գործիչների ծաղրի առարկա, սակայն միջնաժամկետ հեռանկարում այն հավելյալ հնարավորություն էր ստեղծել ՌԴ-ի համար՝ որոշ չափով պարենային ինքնաբավության հասնելու կամ նոր այլընտրանքներ գտնելու առումով: Այս հակամիջոցը զգալիորեն թեթևացրել էր 2022 թվականին ՌԴ-ին հասցվող տնտեսական վնասի չափը: Ռուսական շուկայից հեռացող արտասահմանյան կազմակերպությունների նկատմամբ կիրառվում է պետական կառավարման կամ կազմակերպության ազգայնացման քաղաքականություն: Այն հնարավորություն է տալիս պահպանելու աշխատատեղերն ու կազմակերպության արտադրական հնարավորությունները և մեղմելու սոցիալ-տնտեսական հարվածի հետևանքները: Այս առումով ռուսական տնտեսությունը նաև նոր տարածություն է ստանում սեփական արտադրական հզորությունները զարգացնելու նոր մարտահրավերների պայմաններում:

2014 թվականից սկսված՝ պատժամիջոցների ալիքը ազդակ դարձավ ռուսական ֆինանսական համակարգում մշակելու ֆինանսական փոխանցումների սեփական համակարգը[93]: Դրա ներդրումը նպաստեց ռուսական բանկային և ֆինանսական կազմակերպությունների դիմադրողականության բարձրացմանը, որի շնորհիվ ոլորտը կաթվածահար չեղավ, երբ միջազգային փոխանցումների SWIFT համակարգից ռուսական խոշոր բանկերը դուրս մղվեցին: Ֆինանսական պատժամիջոցների շրջանցման և ՌԴ ֆինանսական ոլորտի կայունացմանն ուղղված քայլե-

[93] Առավել մանրամասն տե՛ս Times of India, "Explained: How Russia has been Preparing for a SWIFT Ban Since 2014", 28.02.2022:
Հասանելի է՝ https://timesofindia.indiatimes.com/business/india-business/explained-how-russia-has-been-preparing-for-a-swift-ban-since-2014/articleshow/89905395.cms

ից էր նաև ռուսական գազի դիմաց վճարումները ռուբլով ընդունելու մեխանիզմի կիրառումը:

Տնտեսական պատժամիջոցները շրջանցելու, դրանց հետևանքները մեղմելու նպատակով՝ Ռուսաստանը ինչպես 2014 թվականից ի վեր, այնպես էլ 2022 թվականից հետո փորձել է օգտագործել տարբեր հակամիջոցներ: Նման միջոցներից է ներմուծվող ապրանքների փոխարինումը սեփականով: ԵԱՏՄ-ն ևս ՌԴ-ի համար պատժամիջոցների հետևանքները մեղմելու և շրջանցելու կարևոր գործիք է, քանի որ հնարավոր է ԵԱՏՄ անդամ երկրների միջոցով անխափան ներմուծել որոշ ապրանքատեսակներ: Այսպիսով, ԵԱՏՄ-ն Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքները թուլացնող յուրատեսակ հարթակ է, որպիսին չի ունեցել վերջին երեք տասնամյակներում պատժամիջոցների առանցքում հայտնված ոչ մի պետություն: Սակայն ԵԱՏՄ երկրների միջոցով անհնար է ամբողջությամբ շրջանցել տնտեսական այն սահմանափակումները, որոնց բախվում է ՌԴ-ն: Պատժամիջոցների շրջանցման տեխնիկական մեթոդների զինանոցին է պատկանում նաև գործարարների տվյալների անհասանելիությունը, որը կիրառելու փորձ ՌԴ-ն ունեցել է Ղրիմում: Հակառուսական պատժամիջոցների առաջին ալիքը ծանր հետևանքներ էր թողել ռուսական տնտեսության վրա: Ըստ որոշ մասնագետների՝ 2015 թվականին հակառուսական պատժամիջոցների պատճառով Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ն նվազել էր 4%-ով, որն էլ հետագա տարիներին ՌԴ տնտեսության դանդաղ աճի հիմնական պատճառն էր:

Ամփոփելով թեման, կարող ենք պնդել, որ ի տարբերություն 2014 թվականից կիրառվող պատժամիջոցների՝ 2022 թվականից ՌԴ նկատմամբ արգելանքները միտված են ոչ միայն Ռուսաստանի զսպմանը, այլև տնտեսապես և քաղաքականապես

հյուծելու ռուսական քաղաքական էլիտան և հասարակությունը: Այս հանգամանքով պայմանավորված՝ պատժամիջոցներ կիրառող պետությունների հասարակական խոսույթներում ակնհայտորեն առկա է Ռուսաստանի դիվականացման երևույթը: Առկա տնտեսական ներուժի հարաբերակցության պայմաններում պատժամիջոցները վնաս են հասցնելու ոչ միայն ՌԴ-ին, այլև դրանք կիրառող պետություններից շատերին, հատկապես եվրոպական մայրցամաքի երկրներին: Սակայն, պայմանավորված քաղաքական համակարգի տիպով և հասարակական տրամադրություններով, այս պետություններն ի վիճակի չեն լինելու մոտ ապագայում չեղարկելու պատժամիջոցները, եթե ՌԴ-ն չդիմի շեշտակի զիջումների: ՌԴ քաղաքական էլիտան ևս չունի զիջումներ կատարելու քաղաքական ռեսուրս: Արդյունքում առաջանում է փակ շրջան, որից կառուցողական ելք գտնելն անհնար է թվում: Գ. Հոֆբաուերը, Ջ. Սքոթը և Ք. Էլիոթը նշում էին երեք կարևոր փոփոխականներ պատժամիջոցների հաջողության համար: Կարծում ենք, որ այս պայմանները կարող են առ ոչինչ համարվել, եթե պատժամիջոցների թիրախում հայտնված պետությունը չունի երաշխիքներ, որ պահանջների բավարարման դեպքում կվերացվեն բոլոր սահմանափակումները: Դժվար է հավատալ, որ ԱՄՆ-ն, առանց համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող նոր կատակլիզմի, ինչպիսիք կարող է լինել Չինաստանի և ԱՄՆ-ի միջև հակամարտության բռնկումը Թայվանի պատճառով, կչեղարկի ՌԴ-ի նկատմամբ կիրառվող բոլոր պատժամիջոցները: Հետևապես դրանք կարող են ձգվել տասնամյակներ: ԱՄՆ-ի կողմից շուրջ մեկ տասնամյակից ավելի Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների փոքր չափաբաժինները ՌԴ-ի մոտ առաջացրել էին իմունիտետ՝ դիմակայելու պատժամիջոցների նոր տեսակներին, որի շնորհիվ

ՌԴ-ն կարճ ժամանակահատվածում կարողացավ դիմակայել աննախադեպ պատժամիջոցների ալիքին:

Ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում ԱՄՆ-ն ավելի է մեծացնելու տնտեսական ազդեցությունը ԵՄ-ի նկատմամբ: ԵՄ-ն ու անդամ որոշ պետություններ փորձելու են նվազագույնի հասցնել կախումը ռուսական էներգակիրներից: Այն դուրս է ազատական տնտեսական աշխարհակարգի տրամաբանությունից, քանի որ ռուսական էներգակիրներից հրաժարվելը հարված է, առաջին հերթին, սեփական տնտեսությանը: Ստեղծված իրավիճակը ևս ապացույց է, որ տնտեսությունը քաղաքականության հետևանքն է, ոչ թե պատճառը: Պատժամիջոցներն ու էներգակիրների ճգնաժամը ստեղծում են նոր հնարավորություն ռ-էվոլյուցիայի՝ արագ էվոլյուցիայի համար: Ռուսական էներգակիրներից հրաժարվելը հանգեցնում է էներգակիրների գների կտրուկ թանկացման, որն արագացնելու և առավել մրցակցային է դարձնելու այլընտրանքային էներգիայի ոլորտի զարգացումը, մեծանալու են միջուկային և վերականգնվող էներգիայի աղբյուրներն Արևմուտքում և «սև շուկան»՝ Ռուսաստանի Դաշնությունում:

Վերլուծական աշխատանքի թեմաներ

1. Ռուսաստանի պատժամիջոցային արձագանքը՝ որպես տնտեսական ինքնաբավության ռազմավարություն. հնարավորություններ, սահմանափակումներ և հետևանքներ:

2. ԵԱՏՄ-ի դերը Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների մեղմման գործում. քաղաքական և տնտեսական փոխադարձ կախվածության դինամիկա:

3. Ռուսաստանի դեմ կիրառված սահմանափակումները 2014-2024 թթ.:

Լրացուցիչ գրականություն

1. Fyodor Lukyanov, "Russia's Asymmetrical Response: Global Aikido" article by Paul J. Saunders, "Costs of a New Cold War: The U.S.-Russia Confrontation over Ukraine", Center for National Interest, Washington, September 2014, pp. 9-25.

2. Belyi, A. V. (2019). Russia's Response to Sanctions. How Western Economic Statecraft is Reshaping Political Economy in Russia: Richard Connolly, Cambridge: Cambridge University Press, 2018.

Թեմա 11. Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցային «պատերազմի» քաղաքական փոփոխականները

Պատժամիջոցների սահմանումը հետապնդում է տնտեսական լծակների օգտագործմամբ քաղաքական զիջումներ կորզելու նպատակ:[94] Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ունեն ինչպես պաշտոնական, տվյալ պարագայում՝ ռազմական գործողությունների դադարեցման և Ուկրաինայի տարածքից զորքերի դուրսբերման, այնպես էլ ոչ պաշտոնական՝ ՌԴ-ում քաղաքական համակարգի փոփոխության, Ռուսաստանի Դաշնության քաղաքական և տնտեսական ազդեցության թուլացման նպատակներ: 2014 թվականից ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցային քաղաքականությունը չի հանգեցրել պաշտոնական պահանջի բավարարմանը: Պատժամիջոցների կիրառման արդյունավետությունը պայմանավորված է ինչպես մի շարք տնտեսական փոփոխականներով, այնպես էլ քաղաքական գործոններով:

Գ. Հոֆբաուերը, Ջ. Սքոթը և Ք. Էլիոթը «Վերանայված տնտեսական պատժամիջոցները» աշխատանքում պատժամիջոցների արդյունավետությունը պայմանավորում են հետևյալ քաղաքական փոփոխականներով՝

1) պատժամիջոցների կիրառման հարցում միջազգային համագործակցության աստիճանը,
2) միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը,
3) նախնական հարաբերությունների ջերմությունը (մինչ պատժամիջոցների դրվագը) կիրառող և թիրախ երկրների միջև,

[94] Daniel Drezner, "The Sanctions Paradox: Economic Statecraft and International Relations", Cambridge Studies in International Relations, Cambridge: 1999, p. 30

4) թիրախ պետության քաղաքական համակարգի բնույթը և
5) միջազգային աջակցության առկայությունը թիրախ երկրին[95]: Սույն փոփոխականները, անշուշտ, ունեն որոշիչ նշանակություն պատժամիջոցների արդյունավետության տեսանկյունից: Ստորև կանդրադառնանք Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներում այդ փոփոխականներին, դրանց ազդեցության չափին և պատճառներին, ինչպես նաև այն քաղաքական հետևանքներին, որոնք առաջացել են պատժամիջոցների պատճառով:

Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող պետությունների ցանկը ներառում է այնպիսի պետությունների, ինչպիսիք են ԱՄՆ-ն, ՄԲ-ն, ԵՄ անդամ բոլոր պետությունները, Շվեյցարիան, Ավստրալիան, Սինգապուրը, Հարավային Կորեան, Ճապոնիան, չճանաչված՝ Թայվանը[96]: Այդ պետությունների մեծամասնությունը պատկանում է զարգացած երկրների ցանկին, որոնք ունեն առաջատար տեխնոլոգիաներով շարժվող տնտեսություն: ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող պետությունների հանրագումարային ՀՆԱ-ն կազմում է համաշխարհայինի մոտ կեսը:[97] Ուստի, անհրաժեշտ է արձանագրել, որ պատժամիջոցներում ընդգրկված պետությունների կոալիցիան բավականին մեծ ներուժ ունի: Սակայն կոալիցիայի կազմից

[95] Տե՛ս Gary Clyde Hufbauer, Jeffrey Schott, Kimberly Ann Elliott, Barbara Oegg, "Economic Sanctions Reconsidered", Third Edition, Peterson Institute for International Economics, 2009, pp 55-64:

[96] Տե՛ս Minami Funakoshi, Hugh Lawson and Kannaki Deka, "Tracking Sanctions against Russia", Update of May 20, 2022:
Հասանելի է https://graphics.reuters.com/UKRAINE-CRISIS/SANCTIONS/byvrjenzmve/

[97] Տե՛ս The Global Economy "Percent of World GDP, 2020 - Country Rankings", հասանելի է՝ https://www.theglobaleconomy.com/rankings/gdp_share/

դուրս են մնացել Չինաստանն ու Հնդկաստանը, ԵԱՏՄ երկրները, Թուրքիան և արաբական Արևելքը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս երրորդ երկրների միջոցով թուլացնել պատժամիջոցների ազդեցությունը: Աշխարհի երկրորդ հզորագույն տնտեսությունն ունեցող և բնակչության քանակով աշխարհի առաջին երկու հորիզոնականներում գտնվող պետությունների չմիանալը ՌԴ-ի դեմ պատժամիջոցներին բաց դռներ է թողնում ՌԴ-ին՝ փակուղային իրավիճակից ելք գտնելու համար:

Միջազգային կազմակերպությունների կողմից ևս կիրառվել են սահմանափակումներ ՌԴ-ի նկատմամբ, սակայն այդ սահմանափակումներն ու պատժամիջոցներն ունեցել են առավելապես իմիջային հարված հասցնելու նպատակ և հնարավորություն: Ուկրաինայում ռազմական գործողությունների մեկնարկից ընդամենը երկու օր անց կասեցվեց ՌԴ անդամակցումը Եվրոպայի խորհրդին, որի մասին համապատասխան բանաձևն ընդունվել էր ԵԽԽՎ լիագումար նիստի ընթացքում:[98] Իմիջային հարված հասցնելու փորձի ևս մեկ օրինակ է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ՌԴ-ի անդամակցությունը մարդու իրավունքների խորհրդում:[99] Սակայն Ռուսաստանը ԵԽ-ում անդամակցության կասեցման փորձ արդեն ունի, իսկ Միավորված Ազգերի Կազմակերպության մարդու իրավունքների խորհրդում նրա անդամակցումը դժվար թե էական ազդեցություն թողնի ՌԴ-ում կամ ՄԱԿ-ի անդամ այլ պետությունում մարդու իրավունքների պաշտպանության որակի բարելավման կամ վատթարացման վրա: Այն նաև իմիջային տեսանկյունից չի կարող ունենալ էական նշանակություն:

[98] Տե՛ս Interfax «Приостановлено членство России в Совете Европы», 25 февраля 2022, հասանելի է՝ https://www.interfax.ru/russia/824618:

[99] Տե՛ս Генассамблея ООН приостановила членство России в Совете ООН по правам человека. Հասանելի է՝ https://news.un.org/ru/story/2022/04/1421492

Տեսականորեն պատժամիջոցների արդյունավետությունը կարող է էապես մեծանալ, եթե պատժամիջոցների կիրառմանը միանա այնպիսի միջազգային տնտեսական կազմակերպություն, ինչպիսին Արժույթի միջազգային հիմնադրամն է, կամ եթե ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, կանոնադրության 41-րդ կետի համաձայն, ընդունի արգելանք կիրառող բանաձև, որին պետք է ենթարկվեն կազմակերպության անդամ բոլոր պետությունները[100]: Սակայն Ռուսաստանի Դաշնությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ հինգ պետություններից մեկն է և ունի անբեկանելի վետոյի իրավունք, հետևապես, միջազգային կազմակերպությունների գործիքակազմում եղած պատժամիջոցային ամենազորեղ միջոցը տվյալ պարագայում չի կարող կիրառվել, իսկ 2014 թվականից հետո ՌԴ-ն փաստացի դադարեցրել էր իր համագործակցությունը նաև Արժույթի միջազգային հիմնադրամի հետ: Հետևապես, այս կազմակերպությունը չուներ գործիքակազմ ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոց կիրառելու համար: Այսպիսով, բացի ԵՄ-ից, այլ միջազգային կազմակերպությունների ներգրավումը ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցային քաղաքականությունում գործնականում տնտեսական որոշիչ դերակատարում չի ունեցել: Վիճելի է նաև ԵԽ անդամության կասեցման հետևանքով ՌԴ-ին հասցված հեղինակության վնասը:

Պետության քաղաքական համակարգի բնույթն ունի կարևոր նշանակություն ինչպես պատժամիջոցների կիրառման, այնպես էլ դրանց դիմակայելու տեսանկյունից: Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող պետությունների քաղա-

[100] Տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 41: Հասանելի է՝ https://www.un.org/en/about-us/un-charter/full-text#:~:text=Article%2041,Nations%20to%20apply%20such%20measures

քական համակարգերին կանդրադառնանք հաջորդիվ, իսկ ներքոնշյալ հեղինակների կարծիքով[101], թիրախ պետության իշխանությունները պատժամիջոցներին արդյունավետ դիմակայելու համար պետք է ունենան

1) *ինքնակալություն՝* ընդդիմադիր ուժերի առկայության պայմաններում վճռական որոշումներ կայացնելու

2) *կարողություն՝* փոխհատուցելու կամ հնազանդեցնելու նրանց, ովքեր տուժելու են պատժամիջոցների կիրառման հետևանքով և

3) *լեգիտիմություն՝* համախմբելու հասարակական դժգոհ տարբեր խմբերին:

ՌԴ քաղաքական համակարգի առանձնահատկությունները, ոչ համակարգային ընդդիմության հանդեպ վարվող կոշտ քաղաքականությունն ու ճնշումները[102] հանգեցրել են քաղաքական ընդդիմության փաստացի ջախջախմանը: Ուկրաինայի նկատմամբ ռազմագործողության մեկնարկի պահին ՌԴ-ում առկա չէին ընդդիմադիր ուժեր և առաջնորդներ, որոնք ի վիճակի կլիներին հակազդելու իշխանությունների ընդունած որոշմանը, իսկ քաղաքացիական բողոքի ակցիաներն առաջին իսկ օրերից ենթարկվեցին ճնշման, որի արդյունքում չունեցան որևէ շոշափելի հաջողություն: Ավելին, ռազմական ուժի կիրառմանն անհամաձայնություն հայտնող քաղաքացիներից շատերն աստիճանաբար հեռանում են ՌԴ-ից: Ըստ ռուս տնտեսագետ Նատալիա Զուբարևիչի՝ այս խմբի մեջ են մտնում, առաջին հերթին, մեգապոլիսներում բնակվող միջին դասին պատկանող քաղաքացիներ-

[101] Տե՛ս Blanchard, Jean-Marc F., and Norrin M. Ripsman. "A Political Theory of Economic Statecraft." *Foreign Policy Analysis*, vol. 4, No. 4, 2008, pp. 371-98. *JSTOR*, http://www.jstor.org/stable/24909862:

[102] Տե՛ս Владимир Гельман, «Авторитарная Россия: Бегство от свободы, или Почему у нас не приживается демократия», Говард Рорк, 2021, с. 249:

ը, որոնք ներկայացնում են հասարակության սոցիալական կենտրոնը, ունեն ըմբոստության ներուժ, բայց, միաժամանակ, նաև պետության քաղաքական և տնտեսական արդիականացման և առաջընթացի հիմնական աղբյուրն են:[103] Այսպիսով, կարելի է փաստել, որ ՌԴ իշխանությունները 2022 թվականին՝ Ուկրաինայի նկատմամբ ռազմագործողությունների մեկնարկին, արդեն իսկ հաշվի էին առել հնարավոր բողոքի ակցիաները և պատրաստ էին արագորեն ճնշելու դրանք: Սակայն բողոքի պատճառը ոչ թե պատժամիջոցների սպառնալիքն էր, այլ Ռուսաստանի կողմից ուժի կիրառումը եղբայրական ժողովրդի նկատմամբ: Ռուսաստան-Արևմուտք հակամարտությունն ավելի է բարդացնում քաղաքական ընդդիմության վիճակը ՌԴ-ում: Միջնաժամկետ հեռանկարում դժվար է պատկերացնել այնպիսի ընդդիմադիր ուժի ծագում, որն ի վիճակի կլինի մարտահրավեր նետել գործող իշխանություններին:

Ռուսաստանի իշխանությունները տիրապետում են նաև բավարար ռեսուրսների կարճաժամկետ հեռանկարում փոխհատուցելու պատժամիջոցներից տուժած անձանց կամ զսպելու վերջիններից բխող հնարավոր վտանգները: Պատժամիջոցների հետևանքով առաջին հերթին տուժել են ՌԴ քաղաքական և տնտեսական էլիտայի ներկայացուցիչները, որոնց ֆինանսական միջոցներն ու գույքը կալանքի են առնվել Արևմուտքում: Սակայն քաղաքական և գործարար էլիտայից բխող վտանգները կարելի է համարել ցածր այնքան ժամանակ, որքան Ռուսաստանին կհաջողվի պահպանել կայունությունը ռազմաճակատում: Առաջին խմբի պարագայում իշխանությունները կիրառելու են

[103] Տե՛ս Наталья Зубаревич «Четыре России и новая политическая реальность», 17 Января 2016г.:
Հասանելի է՝ https://polit.ru/article/2016/01/17/four_russians/

հիմնականում զսպման մեխանիզմը, որը լիարժեքորեն գործում է ուժային և վարչական մեթոդներով: Երկրորդ խումբը, որը տուժում է պատժամիջոցների հետևանքով, ընդգրկում է հասարակության առավել լայն շրջանակներ՝ ի դեմս արդյունաբերության և սպասարկման ոլորտում ներգրավվածներին: Ըստ Ն. Զուբարևիչի՝ կարճաժամկետ հեռանկարում ամենածանր հարվածը կրելու է հենց արդյունաբերական, մասնավորապես՝ ավտոարդյունաբերական հատվածը[104]: Տվյալ պարագայում ՌԴ իշխանությունները փորձում են հնարավորինս մեղմել պատժամիջոցների ազդեցությունը՝ կիրառելով տեխնիկական գործիքակազմ, օրինակ՝ անցնելով կեսօրյա աշխատանքային դրույքների: Ռուսաստանի տնտեսությունը պահպանել է իր կենսունակությունը, իսկ էներգակիրների արտահանումը միջնաժամկետ հեռանկարում դեռևս զգալի եկամուտներով է ապահովելու բյուջեն, որն էլ, իր հերթին, զսպելու է սոցիալական պայթյունը: Այսպիսով, Ռուսաստանում առկա են նախադրյալներ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում զսպելու պատժամիջոցներից առավել տուժած հասարակական խմբերի բողոքը, ի հակադրություն որոշ վերլուծաբանների կարծիքի, թե «կյանքի որակի անկումը կշեղի ռուսական իշխանությունների ուշադրությունը ներքաղաքական խնդիրների վրա և կնվազեցնի Մոսկվայի հնարավորությունները տարածելու իր ուժն արտասահմանում»[105]:

[104] Տե՛ս Экономист Наталья Зубаревич – «О цене войны в Украине для экономики России и ее жителей», интервью на онлайн канале «Настоящее время», 12 апреля 2022:

[105] Edward Fishman and Chris Miller, "The New Russian Sanctions Playbook: Deterrence Is Out, and Economic Attrition Is In", February 28, 2022, Foreign Affairs journal.
Հասանելի է՝ https://www.foreignaffairs.com/articles/russia-fsu/2022-02-28/new-russian-sanctions-playbook

Պատժամիջոցների թիրախում հայտնված հասարակության մոտ սեփական իշխանությունների վարած քաղաքականության հանդեպ բողոքը հասունանում է ոչ թե պատժամիջոցների հետևանքով, այլև այն քաղաքականության լեգիտիմության, հանուն որի այդ հասարակությունը պատրաստ է կրել զրկանքներ:
2014 թվականին, երբ Ռուսաստանի նկատմամբ սկսվեցին կիրառվել լայնամասշտաբ պատժամիջոցներ, ՌԴ-ում իշխանությունների լեգիտիմությունը ոչ միայն անկում չապրեց, այլև տեղի ունեցավ հակառակը: Եթե 2013 թ. ՌԴ նախագահ Վ. Պուտինի վարկանիշը 45 % էր կազմում, ապա 2015 թ. այն կազմում էր 72%[106]: Ըստ «Լեվադա» կենտրոնի հարցումների՝ 2014 թվականից հետո ՌԴ քաղաքացիների մոտ աստիճանական անկում էր ապրել անհանգստությունը պատժամջիոցների նկատմամբ, չնայած այն հանգամանքին, որ դրանք շարունակում էին պարբերաբար թարմացվել[107]: Ավելին, նույն կենտրոնի հարցումների համաձայն, 2021 թվականի դրությամբ հասարակության 80 %-ից ավելին կարծում էր, որ պետությունը շարժվում է ճիշտ ուղղությամբ:[108] Այսպիսով, Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցների առաջին ալիքը, որը սկիզբ էր առել 2014 թվականին, փաստացի չէր հաջողել հասարակության մոտ ձևավորել իշխանությունների նկատմամբ անվստահություն: Կարելի է պնդել նաև, որ պատժամիջոցներն ունեցել են հակառակ ազ-

[106] Электоральный рейтинг Путина за 15 лет. Инфографика, 26.03.2015,
հասանելի է՝ http://www.aif.ru/dontknows/infographics/1475392 (дата обращения: 01.03.2018):

[107] Տե՛ս Լեվադա կենտրոնի պաշտոնական կայքէջ «Антироссийские санкции» 26.01.2022,
հասանելի է՝ https://www.levada.ru/2022/01/26/antirossijskie-sanktsii-2/

[108] Տե՛ս նույն կայքը, Одобрение институтов, положение дел в стране, доверие политикам 04.02.2022:
Հասանելի է՝ https://www.levada.ru/2022/02/04/odobrenie-institutov-polozhenie-del-v-strane-doverie-politikam/

դեցություն և հասարակության զգալի հատվածի մոտ ավելի էին բարձրացրել հայրենասիրական մղումները՝ ստեղծելով պաշարված ամրոցում հանուն պատմական արդարության բնակվելու տրամադրություն: Ռուսական ազգային քաղաքական գաղափարախոսության հիմքերից մեկն է կոմս Ուվարովի «Ուղափառություն, ինքնակալություն, ժողովրդականություն» (Православие, самодержавие, народность) ինքնության բանաձևը: Այն ընդգծում է ռուսական քաղաքական ինքնության երկու կարևոր բաղադրիչները, որով այն տարբերվում է եվրոպական մյուս պետություններից, դրանք են՝ ուղղափառությունն ու ինքնակալությունը: Այսպիսով, պատժամիջոցների հետևանքով առաջացած զրկանքներին դիմադրելն ընկալվում է որպես զոհողություն հանուն ինքնության: Միաժամանակ, միջին վիճակագրական բնակչի մոտ առաջանում էր քաղաքական բավարարվածություն, քանի որ Ղրիմի միացման համար փաստացի վճարում են տնտեսական էլիտայի ներկայացուցիչները, քանի որ նրանք են հայտնվում Արևմուտքի սահմանած պատժամիջոցների ազդեցության տակ: Ռոբերտ Փեյփը նշում էր, որ պատժամիջոցներն ունենում են հակառակ ազդեցություն, քանի որ նրանք արթնացնում են ազգայնականությունը և հասարակությանը համախմբում իշխանությունների շուրջը, ուստի՝ պատժամիջոցներն անարդյունավետ գործիք են[109]: Թեպետ այս սկզբունքը պարունակում է իրականության տարր, սակայն պետք է ընդգծենք, որ 2014 թվականից հետո Ռուսաստանին հաջողվել էր հաղթահարել տնտեսության ստագնացիայի փուլը, որն էականորեն նպաստել էր իշխանությունների լեգիտիմության բարձր աստիճանի պահպանմանը: Ուստի, մեր կարծիքով, Փեյփի պնդումն ամբողջությամբ չի արտացոլում ճշմարտությունը Ռուսաստանի պարագայում, քանզի հասարակությունը պատրաստ է դիմակայել զրկանքներին միայն նպատակի լեգիտիմության պարագայում: Լեգիտիմության պահպանման համար ոչ պակաս կարևոր է նաև զոհողության և ձեռքբերման հարաբերակցությունը: 2022 թվականից ՌԴ-ի նկատմամբ սկսված պատժամիջոցների նոր ալիքն անհամեմատ ավելի մեծ վնասներ է հասցնելու հասարակության տարբեր շերտերին, իսկ ձեռքբերումները շատ ավելի կասկածելի են, ուստի՝ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում իշխանությունները կարող են բախվել լեգիտիմության խնդրի:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ պատժամիջոցների հաջողությունը պայմանավորված է շատ ավելի լայն նպատակներով, քան թիրախ պետությունում իշխանափոխությունն է: Պատժամիջոցները պետությունների քաղաքական գործիքակազմի մաս են կազմում և միտված են առավել գլոբալ գործընթացներում պետությունների քաղաքական ռազմավարության իրագործմանը: Ըստ միջազգային հարաբերությունների նեոռեալիստական տեսության՝ գլոբալ գործընթացներում գերտերությունների նպատակն է սեփական ուժի և քաղաքական ազդեցության ծավալի մեծացումը: Ուստի՝ արդի գլոբալ գործընթացներում որպես պատժամիջոցներ կիրառող կողմի կարևորագույն նպատակ պետք է դիտարկել հենց ուժային բալանսի փոփոխությունն ի նպաստ իրեն: Հետևապես, պատժամիջոցներին դիմակայող պետության համար առաջնային խնդիրն է ուժերի բալանսի պահպանումը կամ ճիգեր գործադրելը, որ ստեղծվող ուժերի նոր հարաբերակցությունը լինի ի նպաստ իրեն: Ընդ որում, ուժային նոր հարաբերակցության համար կարևոր է ինչպես սեփական պետության հզորության տեսակարար կշռի աճը, այնպես էլ քաղաքական ճանապարհով՝ նոր դաշնակիցների կամ ոչ թշնա-

[109] Տե՛ս Robert A. Pape, "Why Economic Sanctions Do Not Work", International Security, Vol. 22, No. 2 (Fall, 1997), The MIT Press, pp. 90-136:

մական պետությունների քաղաքական աջակցության ներգրավումը:

Հարկավոր է ընդգծել նաև, որ ռուսական իշխանությունները Արևմուտքի հետ հակամարտությունը դիտարկում են որպես պատշգանողական պայքար, որը միտված է դիմակայելու սեփական պետության հզորության նվազեցմանը նետված մարտահրավերին: Այս հայեցակարգային մոտեցումը որոշիչ է քաղաքական իշխանությունների կայացրած որոշումներում: Այս տրամաբանության համաձայն, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների կողմից քաղաքական ազդեցության ընդլայնման յուրաքանչյուր փորձ արժանանում է քաղաքական հակազդեցության ՌԴ-ի կողմից: Ուստի, քաղաքական ռեալիզմի տրամաբանության համաձայն, իրադարձությունների՝ դեպի արևելք ՆԱՏՕ-ի ֆիզիկական ընդլայնման փորձը հանգեցնելու էր Ռուսաստանի կողմից ռազմական ուժի կիրառման ընդլայնման օբյեկտ հանդիսացող Ուկրաինայի նկատմամբ[110]: Ինչպես ուժի կիրառումը, այնպես էլ պատժամիջոցները գործիքներ են քաղաքական նպատակներին հասնելու համար: Եվ եթե Ռուսաստանը, Ուկրաինայի ընդունումը ՆԱՏՕ-ի կազմ կանխարգելելու համար օգտագործում է ռազմական ուժի կիրառման գործիքը, ապա, պատժամիջոցների քաղաքական հետևանքները մեղմելու նպատակով, ռուսական իշխանությունները կիրառում են հակամիջոցների առավել բարդ և ընդգրկուն քաղաքականություն:

Ռուս քաղաքագետ և «Ռուսաստանը գլոբալ հարցերում» ամսագրի գլխավոր խմբագիր Լուկիանովը հետաքրքիր համեմատություն է անցկացնում Արևմուտք-ՌԴ առճակատման և

[110] Տե՛ս John J. Mearsheimer, "Why the Ukraine Crisis Is the West's Fault", Foreign Affairs Journal, September/October 2014:
Հասանելի է՝ https://www.foreignaffairs.com/articles/russia-fsu/2014-08-18/why-ukraine-crisis-west-s-fault

արևելյան մարտարվեստների միջև: Ըստ Լուկիանովի, պատժամիջոցներին դիմակայելու՝ ՌԴ արտաքին քաղաքականությունը նման է Պուտինի նախընտրելի արևելյան մարտարվեստներից մեկին՝ այկիդոյին[111]: Այս մարտարվեստում առավել թեթև քաշ ունեցող մարտիկը նախ փորձում է խուսափել առավել ծանր քաշ ունեցող մարտիկի հարձակումների վնասից, իսկ այնուհետև արագության և իներցիայի հաշվին օգտագործում է հակառակորդի ծանրաքաշությունը նրա իսկ դեմ: Սույն համեմատության տրամաբանության համաձայն, ինչպես 2014 թվականին, այնպես էլ 2022 թվականին Ռուսաստանի առաջնային կարճաժամկետ նպատակն է տնտեսության և ներքին կայունության պահպանումը:

Եվրոպական առաջատար տնտեսություններն ունեն արդյունաբերության և ուրբանիզացիայի բարձր մակարդակ, որը Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառող պետությունների տնտեսական հզորության գրավականն է: Սակայն այն նաև հնարավորություն է ընձեռում ՌԴ-ին ունենալ տնտեսական ճնշման գործիք և ռազմավարական պլանավորման տեսանկյունից հաշվի առնել BATNA-ի (բանակցային համաձայնագրի լավագույն այլընտրանք) առկայությունը, ի դեմս՝ ձմռան նախաշեմին դեպի ԵՄ «ոչ բարեկամ» պետություններ էներգակիրների մատակարարման ամբողջական դադարեցման:

Ռուսական իշխանությունները փորձելու են օգտագործել արևմտյան միջազգային կառույցների թույլ կողմերը նրանց քաղաքական որոշումների կայացման մեխանիզմների վրա ազդեցության միջոցով: Մասնավորապես՝ ՌԴ-ն փորձում է և փորձելու է նաև ԵՄ անդամ մեկ կամ մի քանի պետությունների դուրս

[111] Տե՛ս Fyodor Lukyanov, "Russia's Asymmetrical Response: Global Aikido". Article by Paul J. Saunders, "Costs of a New Cold War: The U.S.-Russia Confrontation over Ukraine", Center for National Interest, Washington, September 2014, pp. 9-25:

մղել տնտեսական հակամարտությունից՝ լարվածության թուլացումը կապելով այդ երկրների սեփական շահերի հետ: Ըստ որոշ հեղինակների, այն կարող է հնարավորություն ընձեռել ԵՄ-ի, իսկ հաջողության պարագայում նաև ՆԱՏՕ-ի միասնականությունը խաթարելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ երկու կառույցներում էլ կարևոր քաղաքական որոշումներն ընդունվում են կոնսենսուսի միջոցով: Հունգարիան մի քանի անգամ արդեն խաթարել է ԵՄ-ի կողմից ռուսական նավթի նկատմամբ էմբարգո հայտարարելու գործընթացը[112]: Հունգարիան միակ պետությունն է, որը բացահայտորեն է դեմ ռուսական պատժամիջոցների խստացմանը: Հունգարիայի դիրքորոշման բաց արտահայտմանը մեծապես նպաստում է Հունգարիայում քաղաքական ռեժիմի տեսակը: Սակայն Հունգարիան միակ պետությունը չէ, որի իշխանությունները դեմ են ՌԴ նկատմամբ պատժամիջոցների խստացմանը՝ պարզապես հաշվի առնելով քաղաքական համակարգի առանձնահատկությունները և հասարակության տրամադրությունները. ոչ բոլոր պետությունների ղեկավարներն են, որ կարող են բացահայտորեն ընդդիմանալ նոր պատժամիջոցների, մասնավորապես՝ էներգակիրների նկատմամամբ պատժամիջոցների սահմանմանը: Քաղաքական վճռականության առկայության պարագայում ընդդիմացող պետությունների արգելքը հնարավոր է հաղթահարել տեխնիկական միջոցներով, ինչպիսին է մասնավոր էմբարգոն:[113]

[112] Տե՛ս The Guardian, "Hungary 'holding EU hostage' over Sanctions on Russian Oil", 16 May 2022:
Հասանելի է՝ https://www.theguardian.com/world/2022/may/16/hungary-sanctions-russian-oil-embargo-eu

[113] Պատժամիջոցների կիրառմանը խոչընդոտող պետությունների վետոյի հաղթահարման մասին առավել մանրամասն տե՛ս Niamh Kennedy, "EU Agrees on Partial Ban of Russian Oil Imports", CNN, 31.05.2022:

Արևմտյան և, մասնավորապես, ԱՄՆ-ի գլոբալ քաղաքականության և համաշխարհային գերակայության հիմնական գործիքն է ֆինանսական և տնտեսական մեխանիզմների առկայության շրջանակը: ԱՄՆ-ն իր կողմից փաստացի ղեկավարվող ֆինանսական կառույցների միջոցով, ինչպիսիք են Արժույթի միջազգային հիմնադրամը և Համաշխարհային բանկը, հնարավորություն ստացավ առավելության հասնելու Խորհրդային Միության նկատմամբ սառը պատերազմի ժամանակաշրջանում: Ըստ Զբիգնիև Բժեզինսկու՝ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ-ն օգտագործում էր իր ազգային արժույթը սեփական գերակայության ապահովման նպատակով[114]: Բացի այդ, աշխարհում կատարվող դոլարային բոլոր վճարումները վերահսկվում են ԱՄՆ-ի կողմից, որը հավելյալ միջոց է կործանարար պատժամիջոցների համար: Ռուսական բանկերի հեռացումը վճարային համակարգերից, նորագույն տեխնոլոգիաների կիրառման սահմանափակումները, միջազգային վիճարումների համակարգերից ռուսական կազմակերպություններին բացառելն ի ցույց է դնում այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն քաղաքական նպատակներով օգտագործում է միջազգային կազմակերպություններն ու սեփական առևտրատնտեսային կապերը: Ի պատասխան՝ Ռուսաստանը փորձում է սեփական տնտեսության առանձնահատկության՝ ԵՄ որոշ երկրների էներգակիրների շուկայում գերակշռող դիրքի օգտագործմամբ ստեղծել սեփական ազգային արժույթի պահանջարկ և այդպիսով նաև նվազեցնել հիմնական հակառակորդի՝ ԱՄՆ-ի ֆինանսական արժույթի դերը: Հաշվի առնելով ռուսական տնտեսական շուկայի փոքրությունը և ԵՄ անդամ պետությունների կողմից ռուսական էներգակիրներից աստիճանական հրաժարումը՝ առաջադրված

[114] Տե՛ս Zbigniew Brzezinski, "Strategic Vision", Basic Books, NY, 16.02.2012, p. 14:

խնդիրը դժվար թե իրականություն դառնա: Սակայն այն արագացուցիչ է լինելու այլ պետությունների կողմից դոլարային գործարքներին այլընտրանքային մեխանիզմներ մշակելու համար: Ըստ Կանվալ Սիբալի՝ նման մեխանիզմներից է, օրինակ, Հնդկաստանի ու Ռուսաստանի միջև ռուփի-ռուբլի վճարային համակարգի վերածնունդը: Նորագույն տեխնոլոգիաները թույլ են տալիս օգտագործել նաև այլ՝ առավել մատչելի վճարային համակարգերի ներդրում: Կան նաև պատժամջիոցների շրջանցման առավել հին տարբերակներ, ինչպիսիք են ապրանքափոխանակությունը կամ սվոփը:

Գործնական հարցադրումներ

1. Որքանո՞վ են արդյունավետ եղել Ռուսաստանի կողմից կիրառված հակամիջոցները տնտեսական վնասը մեղմելու և երկարաժամկետ ինքնաբավության հասնելու ուղղությամբ:

2. Ինչպիսի՞ դեր է խաղում ԵԱՏՄ-ն Ռուսաստանի կողմից պատժամիջոցների շրջանցման ռազմավարության մեջ, և որքանո՞վ է այն արդյունավետ որպես տնտեսական ճնշման մեղմման հարթակ:

3. Ի՞նչ քաղաքական և տնտեսական գործոններ են խոչընդոտում Արևմուտքի և Ռուսաստանի միջև պատժամիջոցային փակ շրջանի հաղթահարմանը:

4. Ինչպե՞ս է պատժամիջոցների երկարաժամկետ կիրարկումը վերափոխում միջազգային տնտեսական կապերը և անդրադառնում գլոբալ էներգետիկ քաղաքականության վրա:

Լրացուցիչ գրականություն

1. Edward Fishman and Chris Miller, "The New Russian Sanctions Playbook: Deterrence Is Out, and Economic Attrition Is In", February 28, 2022, Foreign Affairs Journal.

2. John J. Mearsheimer, "Why the Ukraine Crisis Is the West's Fault", Foreign Affairs Journal, September/October 2014.

3. Fyodor Lukyanov, "Russia's Asymmetrical Response: Global Aikido". Article by Paul J. Saunders, "Costs of a New Cold War: The U.S.-Russia Confrontation Over Ukraine", Center for National Interest, Washington, September 2014, pp. 9-25.

Թեմա 12. Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցային «պատերազմի» հետևանքները

ԱՄՆ-ի և դաշնակիցների հետ գլոբալ հակամարտությանն ու կիրառվող սահմանափակումներին դիմակայելու, քաղաքական ուժերի հավասարակշռությունը հօգուտ իրեն ուղղելու նպատակով Ռուսաստանը փորձում է միջազգային հարաբերությունների այլ սուբյեկտների հետ սերտացնել հարաբերությունները: Սույն խնդրի լուծման նպատակով Ռուսաստանն օգտագործում է հետխորհրդային տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական և քաղաքատնտեսական ինտեգրացիոն միավորումները, որոնց առանցքում է գտնվում հենց Ռուսաստանը: Այսպիսի միջազգային կազմակերպությունների շարքին կարելի է դասել ԱՊՀ-ն, ՇՀԿ-ն, ՀԱՊԿ-ն և ԵԱՏՄ-ն: Սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից ելնելով՝ վերոնշյալ կազմակերպությունները չեն կարող էական քաղաքական աջակցություն ցուցաբերել Ռուսաստանին: Մինչդեռ պատժամիջոցների տնտեսական դիմակայության տեսանկյունից դժվար է թերագնահատել ԵԱՏՄ դերակատարությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: ԵԱՏՄ երկրների տնտեսական ռեսուրսների օգտագործումը տնտեսական ճկունության հնարավորություններ է ստեղծում ռուս ձեռնարկատերերի համար: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ԵԱՏՄ անդամ պետությունները ևս կարող են ենթարկվել երկրորդային պատժամիջոցների: Հաշվի առնելով կառույցի անդամ պետությունների տնտեսական և քաղաքական խնդիրների ամբողջությունը, վերջիններիս ներուժի սահմանափակությունը՝ պետք է արձանագրենք, որ ԵԱՏՄ անդամ պետությունները չեն կարողանալու անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել ռուսական տնտեսությանը:

Ռուսաստանի համար կարևոր նշանակությունն ունի Չինաստանի և Հնդկաստանի աջակցությունը: Հատկանշական է, որ 2021 թվականին Արևմուտք-Ռուսաստան հարաբերությունների գերլարման պահին Վ. Պուտինն այցելեց Հնդկաստան, իսկ Ուկրաինայի նկատմամբ ռազմական գործողությունների մեկնարկից առաջ էլ նա գտնվում էր Չինաստանում: Պատժամիջոցները կարող են անարդյունք դառնալ, եթե գլոբալ քաղաքականությունում առկա է «սև ասպետ», որը պատրաստ է աջակցել պատժամիջոցների ենթարկված պետությանը: Ռուսական քաղաքական էլիտան Հնդկաստանն ու Չինաստանը դիտարկում է որպես «սև ասպետի» դերակատարում ունեցող պետություններ, որոնք պետք է նաև նպաստեն գլոբալ քաղաքականության և աշխարհակարգի փոփոխությանը:

Հնդկաստանը բնակչությամբ երկրորդ, իսկ տնտեսությամբ վեցերորդ խոշորագույն պետությունն է աշխարհում: Չնայած ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցների սպառնալիքների առկայությանը՝ Հնդկաստանը համարվում է ռուսական զենքի և զինամթերքի խոշորագույն գնորդը:[115] Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների պատճառով Հնդկաստանը զգալիորեն մեծացրել է նաև նավթի մթերման ծավալները ՌԴ-ից, սակայն այն պայմանավորված է ոչ թե բարի կամքի դրսևորմամբ, այլ ռուսական նավթը զեղչով գնելու հնարավորությամբ: Հնդկաստանն ու Ռուսաստանը համատեղ հիմնադրել են նաև «ԲրահՄոս» հրթիռային արդյունաբերության համալիրը, որն զբաղվում է գերժամանակակից հրթիռների մշակմամբ ու արտադրությամբ: Այդ կազմակերպության գործունեությունն էականորեն կարող է

[115] Տե՛ս Pieter D. Wezeman, Alexandra Kuimova and Siemon T. Wezeman, "Trends in International Arms Transfers, 2021", March 2022:
Հասանելի է՝ https://www.sipri.org/sites/default/files/2022-03/fs_2203_at_2021.pdf

խանգարել արևմտյան պատժամիջոցների իրագործմանը, քանի որ այն կարող է հնարավորություն տալ ռուսական ռազմաարդյունաբերողներին ձեռք բերել ժամանակակից տեխնոլոգիական միջոցներ: Սակայն, Հնդկաստանի աջակցությունը Ռուսաստանին պետք չէ նաև գերագնահատել, քանի որ հնդկական տնտեսությունը զգալիորեն ինտեգրված է արևմտյան տնտեսություններին, իսկ Հնդկաստանը «Անվտանգության քառակողմ երկխոսություն» (Quad) խմբի անդամ է, որին անդամակցում են նաև ԱՄՆ-ն, Ճապոնիան և Ավստրալիան, իսկ խմբի գլխավոր նպատակն է Չինաստանի զսպումը: Ուստի՝ Հնդկաստանի համագործակցությունը Ռուսաստանի հետ ունի որոշակի սահմանափակումներ, որոնք, առաջին հերթին, պայմանավորված են աշխարհաքաղաքական գործոններով:

Ի տարբերություն Հնդկաստանի, Չինաստանն ունի անհամեմատ ավելի մեծ ռեսուրսներ ցանկության պարագայում Ռուսաստանի համար «սև ասպետ» դառնալու համար: Ի տարբերություն Հնդկաստանի, Չինաստանի ղեկավարությունը կիսում է գլոբալ քաղաքականությունում ուժերի վերադասավորման անհրաժեշտության ռուսական մոտեցումը:[116] Այսպիսով, Չինաստանը մարտահրավեր է նետում ամերիկյան գլոբալ գերակայությանը և, ի տարբերություն Ռուսաստանի, տիրապետում է բավարար տնտեսական և ֆինանսական ռեսուրսների՝ ԱՄՆ գերակայությանն իրական մարտահրավեր նետելու և աշխարհակարգը փոփոխելու համար: Չինաստանի տնտեսությունը երկրորդն է աշխարհում, և Չինաստանն ունի կարևորագույն ռեսուրսներ՝ շրջանցելու համաշխարհային տնտեսական առաջատարին՝

[116] Տե՛ս Kremlin.ru: "Joint Statement of the Russian Federation and the People's Republic of China on the International Relations Entering a New Era and the Global Sustainable Development", February 4, 2022:
Հասանելի է՝ http://en.kremlin.ru/supplement/5770

ԱՄՆ-ին: Այդ ռեսուրսների թվում առաջնահերթ են ժողովրդագրականը և տեխնոլոգիականը: ԱՄՆ անվտանգային ռազմավարություն մշակողները գիտակցում են նշված հանգամանքը և այդ պատճառով Չինաստանը համարում են նահանգների հիմնական մրցակիցը:

Արևմուտքի կողմից ՌԴ-ի նկատմամբ սահմանված պատժամիջոցների հետևանքով դեռևս 2014 թվականին ՌԴ-ն սկսեց Չինաստանին դիտարկել որպես էներգակիրների արտահանման այլընտրանքային գնորդի և կառուցվեցին էներգակիրների արտահանման նոր ուղիներ: ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով պայմանավորված՝ Չինաստանն ավելի է մեծացնում ռուսական էներգակիրների ներկրումը: 2022 թվականի օգոստոսին Ռուսաստանից Չինաստան ներկրումներն աճել են 60%-ով նախորդող տարվա օգոստոսի համեմատ: Այն հնարավորություն է ընձեռում Ռուսաստանին փոխհատուցելու Արևմուտքի կողմից էներգակիրների ներմուծման կրճատման հետևանքով առաջացող վնասները, իսկ Չինաստանը հնարավորություն է ստանում զեղչային համակարգով ձեռք բերելու մատչելի էներգետիկ ռեսուրսներ: Այսպիսով, չինական արդյունաբերական ապրանքները հնարավորություն են ստանում դառնալու առավել մրցակցային և հավելյալ մրցակցային առավելություն են ստանում:

Ուկրաինական պատերազմի և ՌԴ-Արևմուտք պատժամիջոցային «փոխհրաձգության» հետևանքով համաշխարհային շուկան գտնվում է անկայուն իրավիճակում, դանդաղել է տնտեսական աճը տասնյակ, այդ թվում՝ առաջատար տնտեսություններ ունեցող արևմտյան պետություններում:[117] Միևնույն ժամա-

[117] Տե՛ս Michele Ruta, "Here's How the War in Ukraine is Impacting World Trade and Investment", 12 May 2022:

նակ, չինական տնտեսությունն արձանագրում է կայուն տնտեսական աճ, որը նոր մարտահրավեր է ԱՄՆ-ի համար: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ չինական արդյունաբերող կազմակերպությունները չեն շտապում մեծացնել իրենց արտադրանքի արտահանումը ՌԴ, իսկ Չինաստանի կառավարությունն էլ բացահայտ քաղաքական աջակցություն չի ցուցաբերում Ուկրաինայում ծավալվող ռուսական գործողություններին: Չինաստանի արտահանումը դեպի Ամերիկայի Միացյալ Նահանգներ շուրջ տասն անգամ գերազանցում է դեպի Ռուսաստան արտահանումներին:[118] Ռացիոնալ ընտրության տրամաբանության համաձայն, չինական տնտեսվարողների համար գերադասելի է սահմանված պատժամիջոցների պահպանումը և երկրորդային պատժամիջոցների չենթարկվելը: Քաղաքական օգնության տեսանկյունից ևս Չինաստանը սահմանափակ օգնություն կարող է ցուցաբերել Ռուսաստանի Դաշնությանը այն հարցերում, որտեղ անհրաժեշտ է պաշտպանել սեփական շահերը: Հարկավոր է ընդգծել քաղաքական երկու սկզբունքների առկայությունը, որոնք խանգարում են Չինաստանին բացահայտորեն աջակցել Ռուսաստանին, դրանք են՝ տարածքային ամբողջականության սկզբունքը և ինքնիշխանությանը չմիջամտելու սկզբունքը: Այդ սկզբունքների կարևորությունը պայմանավորված է Չինաստանի համար Թայվանի և Տիբեթի խնդիրների արդիականությամբ: Չինաստանի շահերից է բխում Ռուսաստանի խուսափումը ջախջախիչ պարտությունից Արևմուտքի հետ հակամարտությունում, սակայն Չինաստանը պահպանելու է ռազմաքաղաքական չեզոքություն՝ ցուցաբերելով սահմանափակ աջակցություն ՌԴ-ին:

[118] Տե՛ս China Exports by Country, https://tradingeconomics.com/china/exports-by-country:

Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները Չինաստանի համար նոր հնարավորություններ են ստեղծում: Չինաստանը հնարավորություն է ստանում միջնաժամկետ հեռանկարում էականորեն ընդլայնելու իր քաղաքական ազդեցությունը Ռուսաստանի նկատմամբ, ստանալու մատչելի էներգառեսուրսներ, թիկունքում ունենալ գրեթե 4000 կմ երկարություն ունեցող ապահով սահման, որտեղից իրեն վտանգ չի սպառնում: Բացի այդ, Չինաստանի գլոբալ մրցակիցը՝ ԱՄՆ-ն, զգալի ռեսուրսներ է կենտրոնացնում ՌԴ-ի դեմ հակամարտությունում, որը նոր հնարավորություն է ստեղծում Չինաստանի համար՝ ընդլայնելու իր ազդեցությունը Արևելասիական և Հարավչինական ծովի տարածաշրջանում: Հակառուսական պատժամիջոցները նաև լեգիտիմացնում և արագացնում են Չինաստանի կողմից գոբալ ծրագրերի իրականացումը, ինչպիսին է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախագիծը: Օգտվելով իր հարաբերական չեզոքությունից՝ Չինաստանը նաև աստիճանաբար կարող է մեծացնել իր ազդեցությունը քաղաքական և ֆինանսական միջազգային կառույցներում, ինչպիսիք են ՄԱԿ-ը, ԱՄԿ-ն և Ասիական զարգացման բանկը:

Ստեղծված գլոբալ քաղաքական իրողությունները հանգեցնում են քաղաքական նոր փոփոխությունների նաև Եվրոպայում: Կարճաժամկետ հեռանկարում կարող է մեծանալ ԱՄՆ-ի ազդեցությունը ԵՄ-ի նկատմամբ, սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ամենայն հավանականությամբ, ԵՄ-ում ամրապնդվելու է Գերմանիայի և Արևելյան Եվրոպայի ռազմական ներուժը, որը կարող է հանգեցնել ուժերի նոր վերադասավորման, որից ո՛չ ԱՄՆ-ն, ո՛չ էլ ՌԴ-ն չեն շահելու: Հակառուսական պատժամիջոցներից օգտվելու են նաև արդեն իսկ պատժամիջոցների տակ գտնվող Իրանի Իսլամական Հանրապետու-

թյունն ու Վենեսուելան, որոնք ԵՄ-ի կողմից դիտարկվում են որպես էներգակիրների ներմուծման աղբյուրներ:

Ըստ Ջորջ Քենանի՝ նախորդ դարերի ընթացքում ռազմական ուժի կիրառումը հանգեցնում էր ամբողջական հաղթանակի, սակայն այսօր անհնար է պատկերացնել ամբողջական ռազմական հաղթանակ՝ առանց տվյալ պետության բնակչության համակրանքը գրավելու կամ էլ առանց ցեղասպանության իրագործման:[119] Ռուսաստանի ռազմագործողությունները Ուկրաինայում չեն կարող հանգեցնել այն բնակչության համակրանքին, որոնց բնակավայրերը հրետակոծվում են ռուսական հրթիռներով: Հաշվի առնելով նաև ռուս և ուկրաինացի ժողովուրդների պատմական բարեկամական կապերը՝ դժվար է պատկերացնել նաև ցեղասպանության կամ էթնիկ զտումների քաղաքականությունը Ուկրաինայում: Ըստ երևույթին, ռուսական ռազմական գործողությունն Ուկրաինայում չի կարող հանգեցնել ամբողջական հաղթանակի: Պետությունը կարելի է համարել գերտերություն առաջին հերթին, իր տնտեսական, ֆինանսական, տեխնոլոգիական, ռազմական և ժողովրդագրական ռեսուրսների մեծության հաշվին: Տվյալ պարագայում, սակայն, Ռուսաստանի կողմից աշխարհակարգին նետված մարտահրավերը հիմնված է ոչ այնքան ռեսուրսների իրական առկայության, որքան դրանց ընկալման և մեկնաբանման վրա:

Գլոբալ քաղաքականությունում պետության հզորությունը չափվում է ոչ թե տվյալ պետության ներկա հզորության համեմատությամբ նախկին հզորության հետ, այլև հակառակորդ պետությունների նախկին և ներկա հզորությունների հետ սեփական

[119] George F. Kennan, "American Diplomacy: Sixtieth-Anniversary Expanded Edition (Walgreen Foundation Lectures)", The University of Chicago Press, 21 June, 2012, p. 108.

հզորության համեմատությամբ: Ի հեճուկս արևմտյան պատժամիջոցների, Ռուսաստանն ունի բավարար ռեսուրսներ շարունակելու ռազմագործողությունը Ուկրաինայում, իսկ ռուսական իշխանություններն ունեն բավարար քաղաքական ռեսուրսներ միջնաժամկետ հեռանկարում երկրում քաղաքական և տնտեսական կայունություն ապահովելու համար: Պատժամիջոցների և դրանց դիմակայելուն ուղղված քայլերի հետևանքով Ռուսաստանը, մի կողմից, կարող է դառնալ առավել ինքնաբավ, սակայն, մյուս կողմից, ի համեմատություն քաղաքական մրցակիցների, ռուսական տնտեսական և քաղաքական ներուժը ոչ թե ավելանալու, այլ աստիճանաբար նվազելու է: Սակայն Ռուսաստանի թուլացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում չի հանգեցնելու ուժային գլոբալ փոփոխության ի նպաստ ԱՄՆ-ի, որը, գուցե, «անվիճելի» ազդեցություն է ունեցել ռուս-ուկրաինական ճգնաժամի սրման հարցում: Ըստ Քենեթ Վոլցի՝ կոշտ ճնշում կիրառող պետությունները պետք է գիտակցեն, որ ճնշման վերջնարդյունքը կարող է հանգեցնել պատերազմի և կարևոր է հաշվարկը, թե՞ արդյոք պատերազմի արդյունքում հնարավոր ձեռքբերումները կլինեն ավելին, քան կորստի ռիսկերը:[120] Ռուսաստանի ռազմական գործողությունների մեկնարկը կապված էր, առաջին հերթին, ԱՄՆ-ի և, մասնավորապես, Ջո Բայդենի վարչակարգի կողմից շարունակական ճնշման մեծացմամբ, որի դրսևորումներից էին Հյուսիսային հոսք-2 գազատարի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, ռուս դիվանագետների արտաքսումը ԱՄՆ-ից և այլն: Կարճաժամկետ հեռանկարում ԱՄՆ-ն կարող է քաղաքական առավելություններ ստանալ ստեղծված իրավիճակում, սակայն անգամ Ռուսաստանի

[120] Տե՛ս Kenneth N. Waltz, "Theory of International Politics", Columbia University Press, reissued by Waveland Press, 2010, pp. 106-108:

նկատմամբ տարած քաղաքական հաղթանակը ԱՄՆ-ի համար կարող է վերածվել պյուրոսյան հաղթանակի, քանի որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական ազդեցությունը հիմնական ախոյան Չինաստանի համեմատությամբ ոչ թե ավելանալու, այլ նվազելու է, քանի որ Չինաստանն ի դեմս Ռուսաստանի ստանում է մատչելի էներգակիրների ներկրման աղբյուր, մինչդեռ ամերիկյան արդյունաբերությունն ու հասարակությունը առերսեվում են վերջին տասնամյակների ամենացավալի գնային սղաճին: ԵՄ-ի կողմից ռուսական էներգակիրներից հնարավոր հրաժարումը ևս հարված է լինելու սեփական տնտեսական հզորությանը, որը կարող է հանգեցնել սոցիալ-տնտեսական նոր խնդիրների:

Պետք է ընդգծել, որ 2022 թվականից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները թեպետ ռեկորդային էին համաշխարհային պատմության համար, սակայն Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ 2014 թվականից կիրառվող պատժամիջոցները կանխորոշել էին նոր պատժամիջոցների կարճաժամկետ անարդյունավետությունը, քանի որ ՌԴ-ն հնարավորություն էր ստացել նախապես պատշաճորեն պատրաստվելու երկարաժամկետ դիմակայության: Իսկ 2022 թվականից մեկնարկած հակառուսական պատժամիջոցների ռազմավարությունը նոր ազդանշան է տալիս Արևմուտքի գաղափարական հիմնական մրցակցին՝ Չինաստանին, պատշաճորեն պատրաստվելու երկարաժամկետ դիմակայության ԱՄՆ-ի հետ աշխարհակարգի վերաձևման գործընթացում: Ակնհայտ է, որ ապագայի հակամարտություններում պատժամիջոցների կիրառումը մեծանալու է, սակայն դրանց արդյունավետությունն առավել կասկածելի է դառնալու: Տարածաշրջանային առաջատար պետությունների կողմից պատժամիջոցներին դիմակայելու

վճռականությունն արագացնելու է առանձին ինտեգրացիոն գործընթացներն առանձին տարածաշրջաններում:

Գործնական հարցադրումներ

1. Որքանո՞վ է ԵԱՏՄ-ն՝ որպես քաղաքատնտեսական հարթակ, արդյունավետ Ռուսաստանի համար պատժամիջոցների տնտեսական ազդեցությունը մեղմելու հարցում՝ հաշվի առնելով անդամ երկրների սահմանափակումները և արտաքին ճնշումները:

2. Ինչպիսի՞ հնարավորություններ և սահմանափակումներ ունեն Չինաստանն ու Հնդկաստանը՝ որպես «սև ասպետներ» արևմտյան պատժամիջոցներին դիմադրելու և աշխարհաքաղաքական հավասարակշռությունը փոխելու ռուսական ռազմավարության համատեքստում:

3. Ինչպե՞ս է արևմտյան պատժամիջոցային քաղաքականությունը նպաստում Չինաստանի գլոբալ դիրքերի ամրապնդմանը՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի ռազմավարական առաջնահերթությունները և գլոբալ ուժերի վերադասավորման տենդենցները:

4. Ինչպե՞ս կարող են միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները վերափոխել միջազգային տնտեսական և քաղաքական ինտեգրացիոն գործընթացները, հատկապես ոչ արևմտյան տարածաշրջաններում:

Լրացուցիչ գրականություն

1. Samuel Charap & Timothy J. Colton, Everyone Loses: The Ukraine Crisis and the Ruinous Contest for Post-Soviet Eurasia (2017).

2. Richard Connolly, Russia's Response to Sanctions: How Western Economic Statecraft is Reshaping Political Economy in Russia (2018).

Թեմա 13. Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ազդեցությունը Հայաստանի վրա

2022 թվականի փետրվարին հայ տնտեսագետների և ֆինանսատնտեսական կառույցների ներկայացուցիչների կողմից իրականացվող կանխատեսումներով ակնկալվում էր, որ Ռուսաստանի նկատմամբ կիրառվող արևմտյան պատժամիջոցները ցավալի հետևանքներ են թողնելու Հայաստանի տնտեսության վրա: Օրինակ՝ ՀՀ կենտրոնական բանկը նվազեցրել էր ակնկալվող ՀՆԱ-ի աճը 5%-ից մինչև 1.6-%ի:[121] Ընդ որում, տնտեսագետները պայմանավորում էին առաջացող ռիսկերը ոչ թե հայաստանյան կազմակերպությունների նկատմամբ երկրորդային պատժամիջոցների կիրառմամբ, այլ Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների անուղղակի ազդեցությամբ, որտեղ կարևոր գործոններ էին մատակարարման շղթաների խաթարումները, տրանսֆերտների արժեզրկումը, Հայաստանից արտահանումների անկումը՝ պայմանավորված Ռուսաստանում գնողունակության անկմամբ, Հայաստանից Ռուսաստան աշխատանքային միգրացիայի նվազումը, SWIFT համակարգից ռուսաստանյան բանկերի անջատման հետևանքով հայկական ֆինանսական կառույցներին հասցված հնարավոր վնասը և այլն:[122]

[121] Տե՛ս banks.am ՀՀ ԿԲ-ն՝ «Ռուս-ուկրաինական պատերազմի հնարավոր ազդեցությունների վերաբերյալ»:
Հասանելի է՝ https://banks.am/am/news/newsfeed/23027?fbclid=IwAR0qyKmDZ0ISha2y68VPXTBIv0nic9EcVIcp5pyaosSy-9-XVnXJ740yepQ

[122] Տե՛ս https://www.1lurer.am/hy Հանրային հեռուստաընկերությունը «Հանրային քննարկում. Արևմուտք-Ռուսաստան տնտեսական պատերազմի ազդեցությունը Հայաստանի վրա», փետրվար, 2022 թ.:
Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=uo4qn6zP7GM

Հայաստանին, սակայն, հաջողվեց հաղթահարել հակառուսական պատժամիջոցների կարճաժամկետ տնտեսական հետևանքները: 2022 թ. առաջին կիսամյակի տնտեսական տվյալների ամփոփման համաձայն՝ գների սղաճը Հայաստանում կազմել է մոտ 8%,[123] որը բավական լավ ցուցանիշ էր համաշխարհային ցուցանիշների համեմատ:[124] Համեմատության համար նշենք, որ հարևան Վրաստանում նույն ժամանակահատվածում գնաճը կազմել է 11, իսկ Ադրբեջանում՝ ավելի քան 13 %:[125] Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 11 %-ով ավելի է, իսկ ծառայությունների ծավալն ավելացել է 26 %-ով:[126] Ավելացել են նաև արտադրական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության, ապրանքաշրջանառության, շինարարության ծավալները: Այսպիսով, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, հակառուսական պատժամիջոցների պայմաններում Հայաստանի տնտեսությունը ոչ միայն չի թուլացել, այլ նաև ամրապնդման միտում է գրանցել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արևմտյան տասնյակ կազմակերպություններ դադարեցրել են իրենց գործունեությունը Ռուսաստանում, հայկական ընկերու-

[123] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ «Իրական հատվածի վիճակագրություն»:
Հասանելի է՝ https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx

[124] Տե՛ս Trading Economics "Inflation Rate":
Հասանելի է՝ https://tradingeconomics.com/country-list/inflation-rate?continent=world

[125] Տե՛ս նույն տեղում:

[126] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՏԱՏ) «2022 թվականի հունվար-հունիսի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները» 05 օգոստոսի 2022 թ.:
Հասանելի է՝ https://armstat.am/file/doc/99531863.pdf

թյունների առջև նոր հնարավորություններ են բացվել: Ընդ որում, հայկական կազմակերպությունները նաև միջնորդի դերակատարում են ստանձնել Ռուսաստանում արգելված սպառողական որոշ ապրանքատեսակների փոխադրման հարցում:

Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի ֆինանսական համակարգի նկատմամբ Արևմուտքը կիրառեց խստագույն պատժամիջոցներ, անգամ միջազգային փոխանցումների SWIFT համակարգից հեռացնելով ռուսական խոշորագույն բանկերին, հայկական ֆինանսական կառույցները չկրեցին էական վնասներ: Սա պայմանավորված էր մի շարք գործոններով, այդ թվում՝ հայաստանյան բանկերի ինստիտուցիոնալացման բարձր աստիճանով և միջազգային նոր իրողությունների պայմաններին արագ հարմարմամբ: Բացի այդ, հայկական բանկերն ունեին ֆինանսական բավարար լիկվիդայնություն ու կապիտալիզացիա, որն անվտանգության բարձիկի դեր խաղաց ֆինանսական համակարգի կայունության համար: Ֆինանսական կայունության հաջորդ կարևոր գործոնը կապված է հանրության հետ, որը ֆինանսական զուսպ վարքագիծ դրսևորեց և ռուսական պատժամիջոցներին զուգահեռ չշտապեց կանխիկացնել բանկերում պահվող դրամական միջոցները, որը թույլ տվեց հայկական բանկերին ժամանակ շահել և լուծել խնդիրները: Հայկական բանկային համակարգի վրա դրական ազդեցություն ունեցավ նաև այն, որ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների պայմաններում ՌԴ հազարավոր քաղաքացիներ և ռուսական տասնյակ կազմակերպություններ իրենց դրամական միջոցները տեղափոխեցին հայաստանյան բանկեր: Այսպիսով, Հայաստանի տնտեսության ֆինանսական հատվածը ոչ միայն խուսափեց հակառուսական պատժամիջոցների բացասական հետևանքներից, այլ նաև ճկունորեն օգտվեց ստեղծված նոր հնարավորու-

թյունից, որի արդյունքում 2022 թ. առաջին կիսամյակի ընթացքում հայկական բանկերը ռեկորդային՝ 111 մլրդ դրամ շահույթ են ունեցել (համեմատության համար կարևոր է նշել, որ վերջիններիս շահույթը 2021 թվականի համար կազմել էր 84 մլրդ դրամ)[127]:

Հայաստանյան ֆինանսական համակարգի կայունությունը, երկրորդային պատժամիջոցներից խուսանավումը, ամուր գործընկերությունն արևմտյան բանկերի և ֆինանսական կառույցների հետ, ռուսական բիզնեսի և մարդկանց նկատմամբ բարեկամական միջավայրը նոր հնարավորություններ ստեղծեցին Հայաստանի ֆինանսական համակարգի համար, և Ռուսաստանից Հայաստան ֆինանսական հոսքերը ոչ միայն չկրճատվեցին, այլ նաև աստիճանական աճ գրանցեցին: Միայն 2022 թվականի հունիսին ՌԴ-ից Հայաստան փոխանցումները գերազանցել են 450 մլն դոլարը, մինչդեռ մայիսին այն կազմել է 266 մլն դոլար:[128]

Այսպիսով, ի հեճուկս տնտեսագիտական կանխատեսումների, Հայաստանի տնտեսությունը դրսևորեց տնտեսական պարադոքսալություն, և Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն ունեցան ավելի շատ դրական, քան բացասական ազդեցություն: Այդ հանգամանքը պայմանավորված է, առաջին հերթին, Հայաստան մարդկային և ֆինանսական կապիտալի ներհոսքով, որը շղթայական ազդեցություն է ունեցել տնտեսության մյուս ճյուղերի վրա, ինչպիսին է անշարժ գույքի գների

---

[127] Տե՛ս Սեդա Հերգնյան «111 մլրդ դրամ. ինչի հաշվին են բանկերը եռապատկել շահույթը առաջին կիսամյակում», Հետք, Երևան, 20-ը հուլիսի, 2022: Հասանելի է՝ https://hetq.am/hy/article/146709

[128] Տե՛ս Максим Буйлов, Ксения Дементьева «Системы денежных переводов», kommersant.ru, 22.08.2022: Հասանելի է՝ https://www.kommersant.ru/doc/5524150

բարձրացումն ու շինարարության աճը, իսկ էներգակիրների համաշխարհային գների կտրուկ աճի պայմաններում Հայաստանում էներգակիրների գների կայունությունը հայաստանցի տնտեսվարողների համար մրցակցային նոր պայմաններ էր ստեղծում:

Ստեղծված իրավիճակում Հայաստանը դեռևս ունի չօգտագործված հնարավորություններ, որոնց շարքում առաջնային տեղ է զբաղեցնում զբոսաշրջության զարգացումը: Հայաստանը նաև հանգույց դարձավ ՏՏ ոլորտի ռուսական փոքր ու միջին ձեռնարկությունների համար, որոնք Հայաստանից շարունակում էին համագործակցությունն արևմտյան կազմակերպությունների հետ: Ռուսաստանից ԵՄ երկրներ և հակառակ ուղղությամբ երկկողմանի չվերթների արգելքը եզակի հնարավորություն էր հայկական ավիացիայի զարգացման համար: Այս պայմաններում Հայաստանը Ռուսաստանի և ԵՄ-ի միջև օդային միջանցք դառնալու հնարավորություն ստացավ: Սա հնարավորություն է ստեղծում նաև հայկական թեթև արդյունաբերական ապրանքների արտահանումն օդային ճանապարհով առավել դյուրին դարձնելու համար, և թույլ կտա զարգացնել օդային փոխադրումներն ընդհանրապես, որն Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի հետ սահմանները փակ պահելու պայմաններում կարևոր ազդեցություն կարող է ունենալ տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման համար:

Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների ազդեցության պայմաններում Հայաստանի տնտեսության գրանցած կարճաժամկետ դրական միտումները պայմանավորված են ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական գործոններով: «Փոխլրացման» քաղաքականության արդյունքում Հայաստանը, լինելով ԵԱՏՄ անդամ, սերտորեն համագործակցում է նաև

ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ: 2017 թ. ԵՄ-ի հետ կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» նշված քաղաքականության ձեռքբերումներից է, որը հնարավորություն է տալիս Հայաստանին զուգահեռաբար դաշնակցային և գործընկերային հարաբերություններ պահպանել, համապատասխանաբար, ՌԴ-ի և ԵՄ-ի հետ: Ավելին, Հայաստանի ֆինանսական կառույցների թափանցիկ և վստահելի աշխատանքն ու փոքր շուկայի փաստը զերծ են պահել Արևմուտքին Հայաստանի և հայաստանցի տնտեսվարողների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելուց, իսկ ռուսական քաղաքական էլիտան՝ պայմանավորված Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամ լինելով և ռուսական իշխանությունների հետ ակտիվ գործընկերությամբ, փաստացի «թույլատրել» է մարդկային և ֆինանսական կապիտալի ներհոսքը Հայաստան:

Չնայած կարճաժամկետ տնտեսական կայունությանն ու նոր հնարավորություններին, անհրաժեշտ է արձանագրել, որ Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների ռիսկերը հաղթահարված չեն և ժամանակի ընթացքում դրանք կարող են վերածվել իրական սպառնալիքի: Ռուսաստան-Արևմուտք հարաբերությունները չունեն կայունացման և հաշտեցման միտում, ուստի Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները կարող են աստիճանաբար ավելի խստացվել և, հնարավոր է, երկրորդային պատժամիջոցներ սահմանվեն Ռուսաստանում գործունեություն ծավալող կամ նրա հետ սերտ կապեր ունեցող ձեռնարկությունների և պետությունների նկատմամբ: Ընդ որում, երկրորդային պատժամջիոցների տակ կարող են հայտնվել այն պետությունները, որոնք Ռուսաստանից ներմուծում են զինամթերք ու էներգակիրներ: Պատժամիջոցների ազդեցության տակ կարող են հայտնվել նաև Հայաստանում գործող ռուսական

կապիտալով կազմակերպությունները, որոնք Հայաստանի համար ունեն ռազմավարական նշանակություն: Ռուսական կապիտալով աշխատող «Ռուսալ Արմենալ» կազմակերպությունն արդեն իսկ մի քանի անգամ հայտնվել է պատժամիջոցների թիրախում, սակայն նաև հայկական լոբբինգի շնորհիվ հնարավոր է եղել չեղարկել պատժամիջոցները նրա նկատմամբ:[129] Ռուսաստան-Արևմուտք առճակատման առավել սրվելու դեպքում Հայաստանում գործող ռազմավարական ենթակառուցվածքների զգալի մասը՝ երկաթուղի, հոսանքի և բնական գազի բաշխիչ ցանցեր, կարող են հայտնվել պատժամիջոցների տակ:

Եթե Արևմուտք-Ռուսաստան ճգնաժամն ավելի խորանա, Արևմուտքի հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունները սահմանափակելու կամ ռուսական կապիտալի արտահոսքը Հայաստան դադարեցնելու պահանջներ կարող են ի հայտ գալ նաև Ռուսաստանում: Ներկա իրավիճակի պահպանման դեպքում անգամ Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների բացասական ազդեցությունն աստիճանաբար առավել զգալի է դառնալու Հայաստանում. ռուսական տնտեսության վրա բացասական ազդեցությունն էապես նվազեցնելու է ռուսական ներդրումների հնարավորությունը հայկական շուկայում և էականորեն սահմանափակելու է Հայաստանից Ռուսաստան աշխատանքային միգրացիայի ծավալները:

Ռուսաստան-Արևմուտք «պատժամիջոցային պատերազմի» տնտեսական ազդեցությունը ռազմավարական կարևորություն ունի Հայաստանի տնտեսական կայունության տեսանկյունից,

[129] Տե՛ս Armenian National Committee of America, "Sanctions Relief Removes Obstacle to U.S.-Armenia Aluminum Trade; Armenal Employees 700 in Armenia", January 17, 2019:
Հասանելի է՝ https://anca.org/press-release/sanctions-relief-removes-obstacle-to-u-s-armenia-aluminum-trade/

սակայն նշված հակամարտությունից բխող տարածաշրջանային փոփոխություններն առավել կարևոր նշանակություն ունեն Հայաստանի անվտանգության տեսանկյունից: Ռուսաստան-Արևմուտք հակասության հետևանքով, փաստացի, կասեցվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը, որը, անշուշտ, բխում է Ադրբեջանի և Թուրքիայի շահերից: Ադրբեջանի նախագահը բազմիցս է նշել Մինսկի խմբի գործունեության դադարեցման մասին:[130] Ստեղծված պայմաններում Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի համանախագահների հանդիպումները և նրանց կողմից դրական օրակարգի ձևավորումը դժվար է պատկերացնել: Բացի այդ, Հայաստանի համար ավելի է բարդանում Արևմուտքի ու Ռուսաստանի միջև բազմավեկտոր կամ փոխլրացման քաղաքականություն վարելը:

Արևմուտք-Ռուսաստան առճակատման պայմաններում Հարավային Կովկասում շեշտակիորեն մեծանում են Թուրքիայի քաղաքական և Ադրբեջանի տնտեսական ազդեցությունն ու նշանակությունը: Թեև Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, հրաժարվել է միանալ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներին: Ավելին, 2022 թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ Թուրքիայի և Ռուսաստանի միջև առևտրաշրջանառությունը կրկնապատկվել է:[131] Երկու պետությունների առաջնորդների հանդիպման ընթացքում մի շարք կարևոր որոշումներ են կայացվել նաև ապագա համագործակցության խորացման և ուկ-

[130] Տե՛ս Ի. Ալիևի ելույթը 30.06.2022 թ.:
Հասանելի է՝ https://www.youtube.com/watch?v=imt0tJZWdLs
[131] Տե՛ս Barbara Moens, Sarah Anne Aarup and Paola Tamma, "Erdoğan Walks a Fine Line as the Ukraine War's Double Agent", 17.08.2022:
Հասանելի է՝ https://www.politico.eu/article/turkey-recep-tayyip-erdogan-fine-line-ukraine-russia-war/

ռաինական հացահատիկի տարանցման վերաբերյալ:[132] Բացի այդ, Թուրքիայի իշխանությունները դժվարացնում են որոշումների ընդունման գործընթացը ՆԱՏՕ-ում, որը տեղի ունեցավ Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցության հայտի քննարկման ժամանակ, և դա բխում է Ռուսաստանի շահերից: Նման պայմաններում Թուրքիան Ռուսաստանի համար ձեռք է բերում «սև ասպետի» նշանակություն, և ռուսական քաղաքական վերնախավն ամեն կերպ փորձելու է զերծ մնալ Թուրքիայի հետ հակասություններից: Սրանով պայմանավորված՝ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Ռուսաստանը Թուրքիայի նկատմամբ մրցակցայինի փոխարեն, առավել գործընկերային մոտեցում է որդեգրել, իսկ Թուրքիայի իշխանությունները, օգտվելով առիթից, նոր նվաճումներ ունեցան ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ Սիրիայում:

Կարևոր է ընդգծել նաև այն հանգամանքը, որ 2022 թ. հայ-թուրքական երկխոսության գլխավոր նախաձեռնողն էր հենց Ռուսաստանը, որը 2008 թ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի ժամանակ որդեգրել էր առավել պասիվ վարք:

Արևմուտք-Ռուսաստան հակամարտության պայմաններում Հարավային Կովկասում ընդգծված կարևորություն է ձեռք բերել նաև Ադրբեջանը: Պատահական չէ, որ Ուկրաինայում ռազմական գործողությունների նախօրեին Մոսկվայում Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահները ստորագրեցին դաշնակցային հարաբերությունների մասին հռչակագիրը: Ի թիվս այլ կետերի, հռչակագրում նշվում էր երկու պետությունների կողմից ռազմա-

[132] Տե՛ս Daily Sabah "Turkey, Russia Agree to Boost Economic, Energy Cooperation" 08.05 2022:
Հասանելի է՝ https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-russia-agree-to-boost-economic-energy-cooperation:s

կան փոխօգնության, էներգետիկ համագործակցության և միմյանց տարածքով տարանցումների օժանդակմանը միտված քայլերի մասին: Հռչակագրի տեքստն ու վերոնշյալ կետերն առավելապես ընդգծում են Ադրբեջանի կարևորությունը Ռուսաստանի համար:

Արևմտյան պատժամիջոցների պայմաններում Ռուսաստանի համար մեծ կարևորություն է ձեռք բերում Իրանի և Հնդկաստանի հետ առևտրաշրջանառության ապահովումը, իսկ Ադրբեջանն այս հարցում ռազմավարական կարևորություն ունի, քանի որ նրա տարածքով պետք է անցնի «Հյուսիս-Հարավ» երկաթգիծը, որը միացնելու է Ռուսաստանը Հնդկական օվկիանոսին: Երկաթգծի վերջին՝ իրանական «Ռեշտ-Աստարա», հատվածի շինարարությունն ակտիվ փուլում է, որի ավարտից հետո Ադրբեջանն առավել մեծ կարևորություն է ունենալու Ռուսաստանի համար:

Մյուս կողմից, Ադրբեջանի կարևորությունը մեծանում է նաև ԵՄ-ի համար: Եվրոպական հանձնաժողովի նախագահը և Ադրբեջանի նախագահը 2022 թ. հունիսին էներգետիկ ոլորտում ռազմավարական համագործակցության մասին հուշագիր ստորագրեցին, որի նպատակն է կրկնապատկել ադրբեջանական գազի մատակարարումները ԵՄ:

Այսպիսով, Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների արդյունքում տարածաշրջանում կտրուկ մեծացել է Թուրքիայի քաղաքական դերը և Ադրբեջանի տնտեսական կարևորությունն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ-ի և ԱՄՆ-ի համար: Տարածաշրջանը դարձել է առավել մեծ մրցակցության գոտի, որտեղ խաչվում են Ռուսաստանի, Իրանի, Արևմուտքի և Թուրքիայի շահերը: Ստեղծված իրավիճակում առավել խոցելի է դարձել Հայաստանի ռազմաքաղաքական անվտանգությունը և

փոքրացել է Հայաստանի կողմից Թուրքիային ու Ադրբեջանին զսպելու գործիքակազմը:

Վերլուծական աշխատանքի թեմաներ

1. Հայաստանի տնտեսության ճկունությունը Ռուսաստանի նկատմամբ կիրառվող արևմտյան պատժամիջոցների ազդեցության պայմաններում:

2. ՀՀ հարաբերությունները ԵԱՏՄ, Ռուսաստանի, ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ տնտեսական ու քաղաքական հեռանկարում:

3. Ռուսաստան-Արևմուտք հակամարտության և պատժամիջոցների ազդեցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային քաղաքականության վրա:

Լրացուցիչ գրականություն

1. Artwell C. A. The Economic Effect of Secondary Sanctions on Firms: Theory and (Scarce) Evidence. In: Ruys T, Ryngaert C, Rodríguez Silvestre F, eds. The Cambridge Handbook of Secondary Sanctions and International Law. Cambridge Law Handbooks. Cambridge University Press; 2024.

2. EU Sanctions Against Third Countries: Legal Basis for EU Sanctions Against Russia and Its Citizens. Verica Trstenjak, European Studies, 2023.

3. Western Sanctions Evasion through Third Countries: The Case of Sanctioned Cars Re-export to Russia. Vakhtang Partsvaniya and Erekle Pirveli, Dec 11, 2024.

SUMMARY

Sanctions in Modern International Relations

Gor Petrosyan

The study guide, **"Sanctions in Modern International Relations,"** was designed for senior baccalaureate and master's students majoring in international relations and political science. The guide presents political science perspectives on sanctions as a political phenomenon, including their definitions, application mechanisms, as well as objectives. The guide is composed of two main parts, which can be used as separate modules in educational programs for political science and international relations. The first part contains lectures that are of a conceptual nature, providing students with knowledge on the fundamental types of sanctions and their legal and political justifications. In the second part of the guide, the study of sanctions is made more specific by examining them in the context of sanctions applied against the Russian Federation. This provides students with an understanding of the economic, political, and regional impacts of sanctions.

The guide's contents are intended for political scientists, experts in the field of international relations, and other experts and professionals, interested in the subject.

РЕЗЮМЕ

Санкции в современных международных отношениях

Гор Петросян

Учебно-методическое пособие **«Санкции в современных международных отношениях»** разработано для студентов старших курсов бакалавриата и магистратуры, обучающихся по специальностям «международные отношения» и «политология». В пособии представлены политологические концепции санкций как политического явления, их определения, механизмы применения и цели. Пособие состоит из двух основных частей, которые могут использоваться как отдельные модули в образовательных программах по политологии и международным отношениям. Материалы лекций в первой части пособия носят концептуальный характер. Эта часть предоставляет студентам знания об основных видах санкций, а также их правовых и политических обоснованиях. Во второй части пособия тема санкций конкретизируется на примере санкций, применяемых в отношении Российской Федерации. Это дает студентам представление об экономических, политических и региональных последствиях санкций.

Материалы, включенные в пособие, предназначены для политологов, специалистов в сфере международных отношений, а также экспертов и представителей научного сообщества, интересующихся данной темой.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԳՈՌ ԷԴՎԱՐԴԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 24.10.2025:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 9.5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

32(47.925)
Ղ-50

Գոռ Պետրոսյանը ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի դասախոս է, սովորել է նույն ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում: 2015-2016 թվականներին փոխանակման ծրագրի շրջանակում ուսանել է Ադամ Միցկիևիչի համալսարանի քաղաքագիտության և ժուռնալիստիկայի ֆակուլտետում: 2023 թվականին ստացել է քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2018-2023 թվականներին աշխատել է «Կովկասի ինստիտուտ» հիմնադրամում որպես գիտաշխատող: 2019 թվականին Գոռ Պետրոսյանը Տարտուի համալսարանի Յոհան Շուտեի անվան քաղաքական հետազոտությունների ինստիտուտում եղել է հրավիրյալ հետազոտող, իսկ 2021 թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսներին մասնակցել է ԱՄՆ Արիզոնայի համալսարանում անցկացվող «Ամերիկագիտություն» մասնագիտությամբ վերապատրաստման: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում են Հարավային Կովկասի տարածաշրջանային քաղաքականությունը, միջազգային հարաբերությունները և համաշխարհային քաղաքականությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025
publishing.ysu.am